



85

U-64.

Արտերք կազմած -

1. Գ. Կ'անուսյո - Շիօհօնյան:
2. Ի. Տևելուշյան - Մերացյանի կազ:
3. Ա. Ռարուբեն - Խոճու Բախը:
4. Ա. Քաջիկինչ - Թագառ Արքա:
5. Հիրվանյան - Արդրինցը :

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

ETOS. SO. E 1

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ


№ 4-5

Ս. Իհշիկեհիզ

ԹԱԳԱՒՈՐ

Պիէս չորս արարուածով

Թարգմանեց
ՅՈՎԱԿ. ՅՈՎԱԿԱՆԵԽՍԵՍՆ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլեքտրապ. օր. Ն. Աղանեանցի, Փոլից. 7
1912

13.02.2013

7864

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



6873-23

Կ. 4. ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ստացայ յաբգոյ վարչութեանդ մայիս 9 թուակիր համար 248 գրութիւնը և ուղարկում եմ իւշկելիք «Թագաւոր» պիէսի թարգմանութիւնը, որի մասին կարեոր եմ համարում մի քանի խօսք ասել:

Քանի զնում, աւելի ու աւելի համոզուում եմ, որ մեր գրական լեզուն նոր-նոր է սկսում մշակուել. դեռ տասնեակ տարիներ են հարկաւոր, որ մենք իրաւունք ունենանք ասելու, թէ գրական լեզու ունինք: Այս բանը մանաւանդ շօշափելի է դառնում այն ժամանակ, երբ մենք փորձում ենք մի զարգացած գրականութիւն ունեցող ազգի հեղինակի մտքերն ու զգացմունքները արտայայտել հայերէն, օտար լեզուի նրբութիւնները հասկացող և գրական-գեղարուեստական թարգմանութեան պահանջները գիտակցող հայ գրագէտը չի կարող չզգալ թէ որքան աղքատ է, որքան խեղճ է մեր լեզուն: Եթէ ասածս ճշմարիտ է առհասարակ ամէն կարգի գրուածքների նկատմամբ, առաւել ես այդ խեղճութիւնը զգացուում է թատերական գրուածքների թարգմանութեան մէջ. բանն այն է, որ մեր կենդանի խօսակցական լեզուն շատ է տարբերուում գրեթեի լեզուից: Վերջնի մէջ այնքան արուեստականութիւն կայ, որ երբ մարդ լսում է դերասանների խօսակցութիւնը բեմի վրայ ամենասովորական, առօրեայ նիւթերի մասին, ակամայ մտածում է, որ նոյն մարդիկը նոյն նիւթերի մասին բոլորովին այլ լեզուով կըխօսէին կեանքի մէջ: Դեռ մի կողմն եմ թողնում այն հանգամանքը,

որ թարգմանական պիէսներում, շատ քիչ բացառութեամբ, հայերէնը չարաչար նահատակուում է այն պատճառով, որ մեր թարգմանիչների մհծագոյն մասը թարգմանութիւն ասելով՝ հասկանում է օտարի բառի տակ հայերէն բառ դնելն ու այնպէս շարելով անցնելը։ Շատ անգամ հայերէն գրածը, եթէ ոռւսերէնից է թարգմանած, պիտի նորից ոռւսերէնի շուռ տաս, որ հասկանաս, թէ ինչ է ուկում ասել գրողը։

Տարակոյս չկայ, որ մեր գրական լեզուն պիտի զարգանայ ու հարստանայ օգտուելով գրարարից և ժողովրդական լեզուից, և իմ աչքում մեր գրական լեզուի կանոնաւոր զարգացման տեսակէտից մի անբաղութիւն է, որ մեր մտաւորական կենտրոններն են Թիֆլիզն ու Կ. Պոլիսը (ինչպէս առաջ Մոսկուան, Վենետիկը), երկումն էլ բուն հայ ժողովրդից կտրուած, հայրենիքից դուրս։ Նոյնիսկ բնիկ գաւառացի երիտասարդները, Թիֆլիփում բնակութիւն հաստատելով, կորցնում են կարծես իսկական հայերէնի ճաշակը և մեր օրաթերթերի և կոպէկանոց բրօշիւների աղաւագուած լեզուն են իւրացնում։ Վերջինների ազգեցութիւնը դժբաղդաբար այնտեղ է հասել, որ նոյնիսկ այս կողմերում, բուն հայրենիքում, Երևան, Վաղարշապատ, Աշտարակ, ոռւսերէն երկու խօսք իրար հետ կապել չկարեցող երիտասարդներ անգիտակցաբար զարհուրելի ոռւսարանութիւններով են խօսում, իսկ իրենց շրջապատող ժողովրդի լեզուի համն ու լազաթը չեն հասկանում։ Մինչդեռ այդ լեզուն է, որ թարմ արիւն պիտի մատակարարէ մեր սակաւարիւն գրական լեզուի ցամաք երակներին...»

Այսուհետեւ, չպէտք է մոռանանք, որ մի գրական-գեղարուստական գործի թարգմանութեան համար որքան ճիշտ թարգմանեն է կարենը (այս պահանջը հար-

կաւ վերաբերում է ամէն տեսակ գրուածքների թարգմանութեան), նոյնքան, գուցէ և աւելի նշանակութիւն ունի ի՞նչպէս թարգմանելը։

Միենոյն եղանակով չի կարելի թարգմանել Մետերլինկի «Պել. և Մելիզանդը» և իւշկիչի «Թագաւորը», առաջինը, մի զուտ բանաստեղծական գործ, ոչնչով կապուած չէ իրական կեանքի հետ, բացի այն նուրբ հոգեկան զգայութիւններից, այն անշօջափելի տրամադրութիւններից, որ առաջ է բերում հեղինակը ընթերցողների մէջ։ Որոշ երկում, որոշ կենսական պայմաններում, որոշ ժամանակում ապրող մարդիկ չեն «Պել. և Մել.» գործող անձինք, ոչ Ալմոնդ երկիր է եղել ու կայ, ոչ Արքել թագաւոր. վերջապէս դրանք կարող էին թագաւոր ու արքայազններ էլ չլինել, և բանը շատ չէր փոխուի։ Այս իսկ պատճառով «Պել. և Մել.» գործող անձինքը չունին իրենց առանձնայատուկ լեզուն և չեն էլ կարող ունենալ. նրանց լեզուն հեղինակի լեզուն է և ուրիշ ոչինչ։

Այլ է իւշկիչի գրուածքը. գործողութիւնը կատարուում է Ռուսաստանում, այդ գեռ ճիշտ որոշումը չէ—կատարուում է Կիևում, Քիշնեում, Օդեսայում, հարաւարևմտեան Ռուսաստանի մի մեծ քաղաքում. ժամանակը 1905—6 թթ., գործող անձինք, բացի երկու բանուորից, բոլորն էլ հրէայ են, դրամատէր, բանուոր, կրթուած, անկիրթ և այլն. դրանց լեզուն շատ ու շատ հեռու է հեղինակի լեզուն լինելուց (խօսքս անկիրթների մասին է). այդ լեզուն ոռւսերէն էլ չէ, այլ Ռուսաստանի հրէաների ժարգոնը. պիէսի մէջ խօսում են այնպէս, ինչպէս իսկապէս իրենց տանը նստած կըխօսէին, և այլն, և այլն։

Հիմա՝ այս բոլորը պիէտք է հայացնել. նախ ընդհանուր պահանջ—ամէն լաւ թարգմանութիւն ինքն իրեն

պիտի չմատնէ, երևան չհանէ, ըստ կարելոյն, իւր թարգմանութիւն լինելը. յետոյ՝ լեզուի վերաբերութեամբ էլ թարգմանիչը հեղինակի ստեղծագործական մտադրութեանց թարգմանը պիտի հանդիսանայ, ամէն գործող անձի բերանը իրեն յատուկ ու համապատասխան լեզու դնելով: Կամենում եմ ասել, թէ միենոյն լեզուով, միենոյն ոճովն ու բառերով չեն կարող խօսել և հայերէն թարգմանութեան մէջ էրշն ու Ռողենովը, Վայցն ու բանուոր Դաւիթը, Էտելն ու իւր Ժենեան ու Մաշան, ևայլն, նոյնիսկ Միրոնը և միւս բանուորները: Գործող անձանց մեծագոյն մասի լեզուն ամենահասարակ, նոյնիսկ գոեհիկ խօսակցական լեզու է: Այդ տպաւորութիւնը պիտի ստացուի և հայերէն թարգմանութիւնից. բայց այստեղ չստիի զգացումը մեծ գեր ունի կատարելու. մի զաւառարարառառով թարգմանել չենք կարող, մաքուր գրական լեզուն էլ խիստ արհեստական բան պիտի լինէր էրշի, Էտելի (այս, և Էտելի), Ռողայի և միւս բանուորների բերանում: Ես հետեւ եմ այս եղանակին (յաջող թէ անյաջող, դատաւորը ես չեմ). պահել եմ գրական լեզուի քերականական ձեւերը, ամենայն աղատութեամբ օգտուել եմ ժողովրդի կենդանի խօսակցական լեզուից. օտար բառեր գործ եմ ածել միմիայն ամենահամաժամկետ դէպքերում, երբ համապատասխան հայերէն բառ չեմ կարողացել գտնել. գործ եմ ածել ժողովրդականից (մեր, Արարատեան բարբառից) բառեր, որ թերեւ ընդունուած չեն (որովհետեւ գործ չեն ածուած) ու շատերի համար առայժմ անհասկանալի են*), խուսափել եմ սակայն վերջերս

*) Շուտով լոյս կը տեսնի Սահակ վ. Ամատունու բառաբանը, ժողովրդական լեզուի մի հարուստ գանձարան. իրանց մայրենի լեզուն չիմացող հայերը թնդ այնտեղից շատ բան սովորեն...

ընդհանրացած օտար բառերից: Ասողներ կը լինին անշուշտ, թէ շատ բան, որ սովորական է երևանցու, Վաղարշապատցու, Օշականցու համար, անհասկանալի կարող է լինել Տփխիսեցու, Ղարաբաղցու և Շուրիշների համար: Ես կը պատասխանեմ. ապա ինչո՞ւ բողոքող չկայ այն հարիւրաւոր ու հազարաւոր օտար բառերի գործածութեան դէմ, որ վերջին տարիները հեղեղել են մեր գրական լեզուն: «Թագ.-ի»² Ա. արարուածի մէջ մի այսպիսի նախադասութիւն՝ եմ գրել. «Ականջիս տակին թնդանօթ էլ քցեն*), հաւատա (ժողովուրդըն արտասանում է՝ աւատա) չմահմ». այստեղ ոչ մի օտար բառ չկայ, բայց եթէ շատերին՝ խորթ թուի այս դարձուածը, ես մեղաւոր չեմ: Իմ գրածը մաքուր հայերէն է. ով չի իմանում, թնդ սովորի, ես ինչ՝ անհման: Իմ արածին հակառակ դուք, հայ լրագիր ու գիրք հրատարակողներ, կարծում էք, թէ ես, մի օտար լեզուներ չիմացող հայ մարդ, պարտական եմ հասկանալ, թէ ինչ ասել է... «ինդրին մօտեցել է ինչ որ գենետիկ մեթօդով, թէկ այդ մեթօդը տարբերուում է հայ գրականութեան մէջ ընդունուած մեթօդից միայն արտաքին ֆրազէօլոգիալով»: Դուք կ'ասէք, թէ այդ լեզուով խօսողը բարձր նիւթերի մասին է խօսում, որ ինձ, տգէտիս, մատչելի չեն առհասարակ: Շատ բարի. ապա ինչ գործ ունին նոր-Բայազտից կամ Խաթունարխից մի զաւառական փոքրիկ թերթում տպուած թղթակցութեան մէջ ֆալսիֆիկացիա, մասսա, միսւրիա, ղետիզ, մոմենտ բառերը, երբ թղթակցութեան մէջ էլ խօսքը տիրացուի, գիրզական գրագրի, տանուաէրի մասին է:

*) Ես միշտ գրում եմ «քցեն», «ձգեմ», «ձգում եմ» տանուեալ բայի իմաստով է գործ ածուած, իսկ «զցել» ուղղագրութիւնն անբացարելի է: «Քցել» բայց գրաբարի «քեցել» բայն է—ի բաց քեցել (Մ. Խորեն.):

Յետոյ, դուք մարսնում էք «արձագանքել», «փիլսոփայել», «մտածելակերպ», «սպառնալիօրէն», «սարսափելիօրէն» և ուրիշ հարիւրաւոր սրանց նման այլանդակ բառեր... Բառերը մի կողմը. ապա որ հայերէնի շարահիւրութիւնն էլ է մոռացուում ու հայերէն բառերով ոռւսերէն են գրում շատ անգամ, այդ ի՞նչպէս պէտք է լինի:

Երբ մեր ընթացիկ գրական լեզուն այս վիճակի մէջ է, հաւանական եմ համարում, որ իմ թարգմանութեան մէջ պատահող շատ բառեր ու դարձուածներ անսովոր կամ մինչև իսկ անհասկանալի երկին: Այսքանը կարեւոր եմ համարում առաջուց ասել իմ լեզուի մասին:

Հարկաւոր եմ համարում բացատրել նաև, թէ ինչու ես կ'ուզենայի ինքս սրբագրել տպագրութիւնը: Բան զըելուս սեագրութիւն անելու սովորութիւն չունիմ. այս գրածս որ տեսնում էք, գրելուց յետոյ մի անգամ կարգացել եմ և տեղ-տեղ բառ կամ նախագասութիւն փոխել: Կարող է պատահել որ սրբագրութեան ժամանակն էլ մէկ-մէկ աւելի յարմար խոռք ընկնի միտս ու ուզենամ փոխել: Դուք գիտէք, ինչպէս կամենաք՝ արէք, բայց վերջին սրբագրութիւնը կը իննդրեմ ինձ հասցնէք:

Անկեղծ շնորհակալութիւնս եմ յայտնում Ընկերութեանդ սիրալիք ուշադրութեան համար՝ ոտանաւորներիս հրատարակութեան որոշման առթիւ. բայց այժմ, երբ այստեղի յորելին. յանձնաժողովն արդէն տպագրել է մի փոքր հատընտիր (շուտով լոյս կը տեսնի) միենոյն նպատակով—աժան գնով տարածելու համար, մի նոր հրատարակութիւն կարծեմ որ աւելորդ է: Շատ ու շատ շնորհակալ եմ:

Յարգանօք՝ Յ. Յովհաննիսինան

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Դափիթ Գրուման, ջաղացատէր.
Էտել, նրա կինը.

Ալեքսանդր, ուսանող
Ժենեա
Մաշա

Պետեա, զիմնազիստ
Եսկով Ռոզենով, քժիշկ, Ժենեայի ամուսինը.

Վայց, Պետեայի ոեպետիորը: Ապրում է Գրումանի տանը.

Հերման, ջաղացի կառավարիչը.
Աղախին.

Էրշ, ղերձակ.

Ռոզա, նրա կինը.

Միրոն
Բետեա
Նսիման

Շմիլ, կօշկակար: Ապրում է Էրշի տանը.

Մանեա, տիկին Գրումանի քոյլը.

Աքրամ, նրա ամուսինը.

Զառնա, Էրշի հարեւանուհին: Պատու.

Դափիթ
Խոփիք
Առն
Եսկով
Ստեփան

Գրումանի ջաղացի բանութիւնը.
Բանութիւնը, ջաղացի ծառայողներ, հարեւաններ,
հարեւանուհիներ:

Գործողութիւնը կատարուում է մի մեծ քաղաքում:

ՔԱՌԵՄ ԹԹՎԱՅԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Սեղանատուն ԳՐՈՍՄԱՆԻ տանը: Մեծ, ընդարձակ սենեակի: Փողոցի վրայ չորս լրամատուտ, պատշզամբ: Սենեակի մէջտեղում երկար սեղան կաղնի փայտից: Պատերի տակ շարած են բարձր մէջքով կաղնի աթոռներ: Սեղանի վրայ կահած է ծանր բրոնզէ լամպ: Երկու դուռ—աջ և ձախ: Չախ կողմինը ԳՐՈՍՄԱՆԻ առանձնահենեակի դուռն է, իսկ աջը տանում է միա սենեակները: Սենեակի աջ կողմում հսկայական բուֆէտ եւ պատի ժամացոյց փայտէ պահպանակի մէջ: Մի քանի պատկեր—ընդօրինակութիւններ, ոսկեզօծ մեծ շրջանակներով: Չախակրղմեան պատի մօտ լայն կաշէ դիման բարձր մէջքով: Պատուհաններից երեսում է ծովը: Մի փոքր ատելի մօտ երեսում է ջաղացի մեծ շինութիւնը, մէջտեղը բարձր ծինելոյզ: Դիմանի վրայ նստած են էՏԵԼ ԳՐՈՍՄԱՆԸ եւ ԺԵՆԵԱՆ. էՏԵԼԸ բարձրահասակ կին է. հազին պինիյար, ականջներին աղամանղեայ զնղեր, մատներին շատ մատունիներ: ԺԵՆԵԱՆ բարձրահասակ է եւ վայելակազմ: Ծնկների վրայ դրած բռնել է մի բաց արած զիրք, Խօսելու եղանակը միշտ փքուն է, շարժումները գոեհիկ... Խօսում է նղնղան, շինծու ծայնով...

էՏԵԼ. Երէկ էլ էի ասում, այսօր էլ եմ ասում մի և նոյն բանը, տանիցը չպէտք է հեռանայիր:

ԺԵՆԵԱՆ. Ես էլ չէի կարող համբերել...

էՏԵԼ. Ի՞նչ է նշանակում, ԺԵՆԵԼՀԿԱ, չէի կարող:

Չեմ հասկանում, ինչ է նշանակում—չէի կարող: Թէ

որ պէտք է, այն է՝ պէտք է։ Այսօր՝ էգուց քաղաքումը կ'իմանան այդ և կ'սկսեն խօսել մեր մասին։ Ամէնքը չարախնդութեամբ կ'ասեն։ Գրոսմանի աղջիկը մարդուն թռղել է։ Հայրդ հօ, փառք Աստուծոյ, թշնամիներ ունի։

ԺԵՆԵԱ. Ես քեզ ասում եմ, մայրիկ, որ էլ չէի կարող այս կեանքին դիմանալ։ Վեր կենալ առաւօտները և տեսնել նրա ուռած աչքերը, նրա գիշատիչ բերանը…

ԷՏԵԼ. (ընդհատում է). Իմ կարծիքով եակովը սիրուն աղամարդ է։

ԺԵՆԵԱ. Զգալ նրա կոպտութիւնն ամէն բանի մէջ—խօսքերի, գաղտնի մտքերի, ճաշակի. իմանալ, որ նոյնիսկ նրա ուղեղն է վարակուած ցածութեամբ և այնու ամենայնիւ ապրել նրա հետ ես այլև չէի կարող։ Ես պատահաբար իմացայ նրա յարաբերութիւնները իմ բոննայի հետ… Մի մտածիր, թէ ում հետ է նա ինձ փոխել։ Մի կեղտոտ աղախնի՛ հետ։ Ես մինչև անգամ չեմ տանջուել… հպարտութիւնիցու։ (Չայնը ցածացնելով)։ Բայց այս գեռ բոլորը չէ, մայրիկ։

ԷՏԵԼ (վախեցած)։ Էլ ինչ կայ։

ԺԵՆԵԱ. (զզուանքով)։ Նա բորսայի առևտրականն է գարձել. բորսայի առևտրականն։ Օտարոտի, անմաքուր մարդիկ սկսեցին յաճախել իմ տունը… Նրա հիւանդների թիւն զգալի կերպով պակասել է. չէ որ հիւանդներն ամէն բան նկատում են… Մի մտածիր, մայրիկ, ո՞լ է սկսել այդ կեղտոտ գործովը պարապել։ Բժիշկ, ինսելլիգենտ մարդ։ Սարսափելի՛ բան է։ (Թաշկինակը մօտեցնում է աջերին)։

ԷՏԵԼ. Աիրան ուղել է հարսանալ։

ԺԵՆԵԱ. Ես ամէն բան ձեզանից պահում էի։ Հէնց ամուսնութեանս առաջին օրիցը նա զգալ տուեց

ինձ, թէ ում ձեռին է իմ բաղդը, իմ արժանապատութիւնը։ Անասելի կոպիտ է նա, լկտի. անտարբեր է դէպի ամէն բան, ինչ որ գեղեցիկ է, իդէալական…

ԷՏԵԼ. Ապա ինչու չէիր գալիս մօրդ պատմում։

ԺԵՆԵԱ. Այնպէս էր լինում, որ շաբաթներով սենեակիցս դուքս չէի գալիս։ Նատում, հարցնում էի ինքս ինձ, էլ ինչու էի սովորում գիմնազիայում։ Այս ես համալսարանի մասին էի երազում։ Զէ, ես լաց չեմ լինի… Ես այնքան ջահէլ էի մարդու գնալիս… Ուզում էի մեծ լինիմ, ուզում էի, որ իմ ասածները բանի տեղ գնեն, ես ազատութիւն էի ցանկանում։ (Աշքերը սղբում է թաշկինակով։ Փրուն)։ Ազատութիւն։

ԷՏԵԼ (մուայլ)։ Ամէնքը կարծում են, թէ եթէ մարդ շատ հարուստ է, այն է՝ բաղդաւոր է։

ԺԵՆԵԱ. Բաղդաւոր, Օ՛, մայրիկ։ Ես իմ բոլոր աղամանդները, իմ բնակարանը կը փոխէի մի հասարակ սենեակի հետ, միայն թէ այստեղ իմ յարգած մարդու հետ լինէի։ Երեք երեխայ ունիմ։ Նրանք պիտի մեծանան ու գիշատիչ բերան ունենան։ Բորսայի առևտրական պիտի դառնան։ (Վեր է կենում)։ Երբէք չեմ վերադառնայ ես նրա մօտ, երբէք (մօտենում է պատուհանին եւ նայում է ղեպի փողոց)։ Ի՞նչ սիրուն է այստեղ։ (Հողոց է հանում)։ Ահա ծովը, ջաղացը…

ԷՏԵԼ. Ես կ'ստիպեմ հօրդ խօսել եակովի հետ։ Դիտես, հայրդ այսպիսի գործեր չի սիրում, բայց ես նրան կ'ստիպեմ։

ԺԵՆԵԱ. (ծեոր թափ տալով)։ Պէտք չէ, երեկուանն արգէն ինձ համար անցեալ է գարձել։

ԷՏԵԼ (դժողովութեամբ)։ Այ, այդ լաւ չի, ժենիչկա։ Կոռել էք, հաշտուեցէք։ Միթէ չի պատահել, որ ես հօրդ հետ կոռւեմ։ Բայց ես գիտեմ, թէ երբ պէտք է տեղի տալ և երբ կանգնել այ այսպէս ու—

որքան էլ որ հարուստ է նա—ասել նրան. այս չի լինի, Դաւիթ... Մարդուցս հեռանամ: Ինձ խսկի փայտով կարող են դուքս անել իմ տանիցը: Դու ի՞նչ պիտի անես մեր տանը: Պատերին նայես կամ ջաղացի բանուրների գործադուլի մասին եղած խօսք ու զրոյցին ականջ դնես: Մենք ինքներս կարողանում ենք ականջ դնել: Մարդ մի մտածի, թէ ինչի՞ համար: Մարդդ սիրուհի ունի: Ո՞ր մարդն է, որ սիրուհիներ չունի: Ի՞նչ է անում կինը: Սիրուհու մազերիցը բռնում, դուքս է շարտում ու պրծաւ դնաց: Էլ ի՞նչ կայ: Ակսել է բորսայում խաղալ: Ի՞նչ անբաղդութիւն: Բայց ում համար է նա այդ անում: չ՞ որ քեզ համար: Շատ փող լինի, շատ էլ հագուստ, շատ էլ ադամանդներ կ'ունենաս: Բանիդ կաց, անխելք: Դու, ասենք, նրան մօտ մի թողնի քեզ, թող ծունկ էլ չոքի առաջիդ այդ աւազակը, բայց դու սրտումդ պիտի իմանաս, որ տուն ևս գնալու: (Աղերսելրով): Ժենիչկա...

ԺԵՆԵԱ. Հերիք է, մայրիկ: Այդպէս որ խօսում ես, ասել կ'ուզի՝ չգիտես, ի՞նչ կայ սրտումս, ի՞նչ կայ մաքումս: (Հտելլ ծեռներով զարմանք է արտայայտում: Աջակողմեան դուք կամաց կիսատ բացուում է, եւ մի վայրկեան երեւում է լրջի զլուխը, ապա անյայտանում է):

ԷՏԵԼ. Այդ ով է: Կարծեմ, է՞րշն է: Ժենիչկա, օտար մարդ է եկել... (Նշաններ է անում նրան: Ժենեան մօտենում է պատուհանին, յենուում է պատուհանի զոգին ու երազկոտ նայում է ջաղացին: Դարձեալ երեւում է լրջի զլուխը: Նա զգուշութեամբ դուռը բաց է անում ու կանգնում է շեմքումը: Զենին կապոց կայ: Գլուխ է տալիս, քծնելով ժպտում է, բայց սիրտ չէ անում շեմքն անցկենայ):

ԷՐԾ. Բարեկ ձեղ... (Գլուխ է տալիս): Բարեկ ձեղ,

ԷՏԵԼ. Ներս եկէք, է՛րշ: Մուշտակն էք բերել: ԷՐԾ. Մուշտակն եմ բերել: ԷՏԵԼ. (Յած ծայլով, արագ-արագ ստում է Ժենեային). Տեսնում ես, ով է հօրդ շոր կարողը: Էլի նոյն էրշն է: Ինչու, որովհետեւ սա էժան է կարում: Մենք ինքներս մի ժամանակ աղքատ ենք եղել և գիտենք, որ փողոցներում փող չկայ ցանած: Ինչու ուրեմն չներհս եակովին: Ինչ ուզում է, թող անի, միայն թէ լաւ փող աշխատի: Դէ, ներս եկէք, է, է՛րշ: Քանի անգամ պիտի խնդրեմ:

ԷՐԾ (մտնում է, մի փորք կաղալով). Ահա արդէն ներս մտայ: Պարոն Գրումանը տանն է:

ԷՏԵԼ. Դաւիթը տանն է, բայց այժմ զբաղուած է: Գործադուլի մասին հօ լսած կը լինիք: Ահա Հերմանի հետ նստած է նա առանձնասենեակումն ու աշխատում է: Լաւ ժամանակի ենք հանդիպել, է՛րշ, ասել չի ուզի:

ԷՐԾ. Ես կ'սպասեմ. ժամանակ չունիմ, ի՞նչ է: Ժամանակ ունիմ: (Նկատում է, որ Ժենեան իրեն է նայում): Բարեկ ձեղ:

ԺԵՆԵԱ. (Ակաւճայ). Բարեկ ձեղ:

ԷՏԵԼ. Դուք ժամանակ ունիք, է՛րշ, բայց մեղքս էք գալիս: Ես միշտ խղճում եմ աշխատաւոր մարդուն: Գնամ, տեսնեմ, ի՞նչ է անում Դաւիթը:

ԷՐԾ. Ոչ, ոչ... Ի՞նչ հարկ կայ: Ժամանակ ունիմ: Խնդրում եմ ձեղ, անհանգիստ մի անէք նրան: Մարդ է ախար, այդպիսի գործեր ունի, և յանկարծ էրշն ու իր մուշտակը: Խնդրում եմ ձեղ: Նա կը բարկանայ, լեզուս կապ կ'ընկնի, իսկ մուշտակը լեզու հօ չունի, որ ասի լաւ է կարած: Այ արդէն զուրս եմ գնում հաշտը, արդէն նստած եմ այստեղ և արդէն ոչ չգիտէ, որ ես եկել եմ...

էՏԵԼ. Դէ այստեղ նստէք: (Անկիւնումը տեղ է ցոյց տալիս նրան):

ԷՐԾ. Կարող եմ կանգնել: (Նստում է եւ աշխատում է այնպէս ցոյց տալ, իբր ինըը սենեակումը չի: Էտելն անցնում է սենեակի միա կողմը եւ նրատում է աթոռի վրայ ճախակողմենան պատի մօտ: Կարճատել լուլթիւն):

ԷՐԾ. Ցուրտ ձմեռ պիտի լինի... ձմեռ կը լինի... Ժենել. (Հարեւանցի). Երանի թէ կարելի լինէր հեռանալ այստեղից:

ԷՏԵԼ. Աւելի լաւ է պատմէք, թէ ինչ են ասում քաղաքումը, ԵՌՉ: Խաղաղ է: Դուք ամէն բան պիտի իմանաք... ԱՌ ես տանիցը դուրս եմ գնում: Եթէ Դաւիթը շատ է ցանկանում, նստում եմ կառքս ու դուրս եմ գնում: Բայց ինչ կարելի է տեսնել կամ լսել կառեթի միջից: ԱՌ երբ Դաւիթն աշխատում էր շաքարի գործարանումը...

ԷՐԾ (ընդհատում է: Խօսելիս տեղիցը վեր է կենում). Ի՞նչ էք ասում. միթէ ես չեմ յիշում, որ պարոն Գրոսմանն աշխատում էր շաքարի գործարանում: Քանի՞քանի անգամ բանելուց վերադառնալիս նախաճաշ է արել ինձ մօտ: ԱՌ իրան հարցըէք: Այս ժամանակ ես երիտասարդ էի, նա էլ էր երիտասարդ...

ԷՏԵԼ. Այդ պէտք է արդէն մոռանալ, ԵՌՉ: Բանում էր. ինչ անենք, բանում էր: Բայց գողութիւն չի արել, ոչ ոքի չի կողոպտել: Մարդ էր, փող ժողովց ու ջաղաց գնեց: Միթէ նոյն տիրոջ մօտ նրա հիտ միասին ուրիշ բանողներ չկային: Ապա ինչ եղան նըրանք, ուր են: Փող սիրողը փողատէր էլ կը դառնայ: Զաղաց գնեց, յետոյ նորոգեց, յետոյ քանդեց ու այս շինեց: Էլ ինչ էք ասում, թէ ձեղ մօտ նախաճաշ

է արել: Դուք էք կամեցել, դուք էք հիւրասիրել... Իսկ նա այն ժամանակն էլ կարօտ չի եղել...

ԷՐԾ (Նստելով). Ես բան չէի մտածում:

ԷՏԵԼ. Չեմ ասում, թէ բան էիք մտածում: Այդ էր պակաս, որ մտածէի, թէ դուք բան էիք մտածում: Բաւական է: Ահա այն ժամանակը, ԵՌՉ, երբ նա զեռ շաքարի գործարանումն էր բանում, քաղաքումն ինչ որ լինում էր, ես ամէն բան իմանում էի: Ամէն բան, ով է պասակուում, ով է կնոջիցը բաժանուել, ում են սպանել. իսկ հիմա ոչինչ չեմ իմանում:

ԺԵՆԵԼ. Ինչու ես, մայրիկ, այդքան շատ խօսում:

ԷՏԵԼ. Ինչու է շատ: Ախար այս երջն է: Խրատ մի տայ ինձ: Ես ինքս դիտեմ, թէ ում հետ և ինչպէս և ինչքան պէտք է խօսել:

ԷՐԾ (կամենում է համոյանալ երկուսին էլ: Տեղիցը վեր է կենում). Ես ոչինչ չեմ լսել: ԵՌՉ լսում է: Շատ կարող է նա լսել, երբ այս ահա թրթում է, իսկ այս դողում... Ականջիս տակին թնդանոթ էլ քցեն, հաւատա լսեմ:

ԷՏԵԼ. Հա—ա: (Գլխով հաստատական նշան է անում): Սսել է թէ շատ վատ է, Էլի:

ԷՐԾ (կանգնում է). Վատ է, այդ էլ խօսք է: Նստում, կար եմ անում: Կար եմ անում. ապա էլ ինչ անեմ: Պար գամ: Սիրտ կայ որ: Էլ բան չկայ խօսելու...

ԺԵՆԵԼ (հետաքրքրուած). Պատմեցէք, ԵՌՉ:

ԷՐԾ. Այնպէս իմացէք, թէ պատմել եմ: Հանգստացաք: Ի՞նչ էլ գործ կայ՝ բացի հրէայ ջարդելուց: Մարդիկ հօ չեն, գաղաններ են: Եւ հիմա բանը ծանրացել է. հիմա բոլորիս կը կոտորեն: Ի՞նչ: Հարցնում էք, թէ ինչու հրէան չի փախչում, Էլի,

հւր փախչի. հողը մտնի, Ամերիկա փախչի, Հերցլի մժտ: Այս, այս, լաւ փորձանք եղաւ մեր գլխին պատերազմը:

ԷՏԵԼ. Պատերազմն ի՞նչ մեղաւոր է:
ԷՐԾ. Ապա նվ է մեղաւոր: Ե՞ս...

ԷՏԵԼ. Դէ, պատմեցէք, Ե՛րշ, պատմեցէք: Տեսէք, ի՞նչպէս ձեռներս սառեցին. կ'ասես՝ սառուց լինին: Ամէն բան կարող եմ լսել, բայց հէնց որ հրէաների մասին եմ լսում, սիրտս կտրուում է...

ԷՐԾ. Էլ ի՞նչ ասեմ: Ամէն բան արդէն ասացի: Իսկ տանը ես լուռ եմ մնում: Խօսում եմ... Ե՛, խօսում եմ. ի՞նչ օգուտ: Նստում եմ կնոջս հետ ու ասում եմ. հրէան հանգիստ նստած պիտի մնայ: Աստուածիմ, հրէաները... ի՞նչ են անում նրանք: Ինչե՛ր են անում: Այս ի՞նչ ոումբներ են, ձեզ եմ հարցնում: Ոումբներ են ձեզ պէտք: Ծակերը մտէք ու թող ձեր երեսը տեսնող չլինի, երբ որ երկրումն այսպիսի բան է կատարուում: Ես գոռում եմ. հրէաներ, հանգիստ կացէք: Մեղ ի՞նչ պէտք են այս դեմոկրատները, այս գոչոտ տղերքն ու աղջկերքը, այս գոքերը: Նրանք ուզում են գլխները պատովը տան, թող տան ջարդեն... Նըրանց յեղափոխութիւն է պէտք, բարնվ վայելեն: Իսկ գուք, գոչոտներ, մտէք ձեր ծակերն ու շունչներդ ձեզ քաշէք... (Նկատում է, որ շատ է բաց խօսում, եւ ընդհատում է):

ԺԵՆԵՍ. (Հարեւանցի). Մի նզովք կայ այս հրէայ ժողովրդի գլխին: Մի հետ բոլորին կոտորէին, պըրճնէին շուտով:

ԷՏԵԼ. Ապա ի՞նչ պէտք է լինի:

ԷՐԾ. Ուզմում էք, ասեմ ի՞նչ պիտի լինի: Լաւ էք գտել: Դէ լաւ, ասեմ... Կը կոտորեն: Մինչև անգամ մէկ էլ հարցնելու հարկ էլ չկայ: (Մտնում է Պետեան, 15

տարեկան զիմնազիստ, շոնը հետը: Բոլորովին նոր կարած զգեստ է հազին: Զայնը անհամբեր: Իրեն հպարտ է պահում):

ՊԵՏԵԱՆ. Մայրիկ, տասը ոուբի փող տուր ինձ: Բայրըն, դէսը: Կաւշ, պառկիր:

ԷՏԵԼ. (սիրով մտիկ է տալիս նրան). Ինչի՞ է քեզ պէտք տասը ոուբի, Պետեանկա:

ՊԵՏԵԱՆ. Այդ էր պակաս՝ դեռ պատմեմ: (Շապէկի թեւնոցն է ծեռնահարում): Ա՛յ անիծուած կոճակ: Եթէ ասում եմ, ինձ տասը ոուբի է հարկաւոր, ասել է թէ քսան չի հարկաւոր: Բայրըն, Բայրըն, դէսը:

ԺԵՆԵՍ. Չեմ հասկանում, թէ տղային ինչի՞ համար կարող է տասը ոուբի պէտք լինել:

ԷՏԵԼ. Ի հարկէ, Պետեանկա: Չորեքշաբթի օրը զուինձանից հինգ ոուբի առար. հինգ էլ երէկ: Ես հօփողը չեմ խնայում. բայց փող ինձ հայրդ է տալիս, ես էլ նրանից շարթական հազարներ չեմ ստանում: Զէ, չէ, Պետեանկա: Հայրդ որ իմանայ, թէ ես այսքան քեզ փող եմ տալիս, կ'սպանի ինձ: Երկու ոուբի առ, Պետեանկա:

ՊԵՏԵԱՆ. Հայրս, փող... Դու միշտ մուբացկան ես դառնում, երբ ես քեզանից փող եմ ինդրում: Եւ չեմ կամենում, որ Ժենեան մէջ ընկնի: Նրա ի՞նչ գործն է: Ինքը հարիւրներ է ծախսում փալաս-փուլուսի վրայ...

ԺԵՆԵՍ. Ես երբէք հարիւրներ չեմ տուել հագուստի:

ՊԵՏԵԱՆ. Եւ ինչու է նա եկել այստեղ ապրելու: Հիմա ամէն բանի կը խառնուի... Բայրըն, Բայրըն, թող էլի յետ գնայ իր սիրելի մարդու մօտը:

ԷՏԵԼ. Պետեան, Պետեանկա: Ախը այստեղ օտար մարդ կայ:

ՊԵՏԵԱՆ. Թէկուղ հարիւր օտար մարդ լինի: Սուտ

հօ չեմ ասում: իմ առաջին մի զգեստի համար հարիւր քսան սուբլի է տուել շոր կարողին:

ԷՏԵԼ (ծիծաղում՝ է). Ե՛, բարով մաշի: Մարդն աշխատել է ու գնել է նըա համար: Աստուած տայ, հազար սուբլիանոց զգեստ կարողանայ գնել: Պետեն-կա, դէ առ այս երկու սուբլին: Ա՛ռ Զաղացումն այժմ գործադուլ կայ:

ՊԵՏԵԱ. Գիտեմ, զիտեմ: Դուք միշտ ողբում էք: Կամ ալիւրի զինն է ընկեր, կամ ցորենն է թանգացեր, կամ գործադուլ կայ: Իսկ գրամարեղը լիքը փող է: Երէկ ես հայրիկի առանձնասենեակումն էի ու տեսայ, ինչքան շատ փող գրեց նա գրամարեղը: Դժուար է ձեզ համար տասը սուբլի տալը: Իսկի չեմ էլ ուզում այդ մասին ձեզ հետ խօսիլ. ես արդէն մեծ եմ ու մեծ-մեծ պահանջներ ունիմ: Հայրիկը տասը սուբլի է տա-լս հարիւր սիդարին, իսկ ես հօ չեմ ասում, որ նա երկու սուբլիանոց սիդար ծխի:

ԷՏԵԼ. Բայց այզքան փողն ինչի՞դ է պէտք: Սի-րելիս, ախր ես վախենում եմ: Մի մտածիր—տասը սուբլի: Պետենկա, որդեհակա, երեք սուբլի առ:

ԺԵՆԵԱ. Աստուած է իմանում, թէ ինչ պիտի դառնայ սա:

ՊԵՏԵԱ. Քեզ լինչ: Դու լինչ ես դարձել: Սովորեցիք, սովորեցիք ու վերջը մի հաստաքիթ բժշկի առար: Լաւ տսպարէզ է: Իսկ ես այ մի բան կը դառնամ: Ես բանուորների հետ չեմ ընկնի մինչեւ վերջը, ինչպէս Սաշկան: Ես ինժենէր կըդառնամ, հայրիկն ինձ փող կը տայ, գործարան բաց կ'անեմ ու բոլորին ցոյց կը տամ, թէ ով եմ ես:

ԷՏԵԼ. Դէ, է՛րշ, ինչպէս սրան տասը սուբլի չտամ: Ի՞նչ կ'ասէք որդուս: (Մօտենում է Պետեային եւ համ-

բորում՝ է նրան): Պետենկա, առ հինգ սուբլի: իմ խաթերը, Դու հօ սիրում ես մօրդ:

ՊԵՏԵԱ. (սատր). Տասը:

ԺԵՆԵԱ. (սրտնեղած). Դու գրան վչացնում ես, մայրիկ:

ԷՏԵԼ. (բասկիցը փող է հանում). Փչացրել եմ արդէն: Մտիկ արէք այս վչացած տղային: Այս խեղճը հարբեցող է, գրպան կտրող է: (ծիծաղում՝ է: Համ-ըսրում է Պետեային: Էրշը քծնելով ժպտում՝ է):

ՊԵՏԵԱ. (թաշկինակով սրբում՝ է շրմունքը). Դու միշտ ուղիղ շրմունքս ես համբուրում: Կարող ես թշերս էլ համբուրել:

ԷՏԵԼ (ծիծաղում՝ է). Ի՞նչ կ'ասէք իմ վերջնին, է՛րշ: (Փողը տալիս է Պետեային):

ԷՐԾ. Կասեմ,—Աստուած ամէնքին էլ ձեր Պե-տեայի նման լաւ, սիրուն զաւակներ տայ: Ա՛խ, տի-կին Գրոսման, տիկին Գրոսման. ինչու մի քանիսը բաղդաւոր են ու հարուստ, իսկ ուրիշներն անքաղդ են ու աղքատ: Ասենք՝ ես էլ լաւ հարց տուի: Այս տեսակ հարցերի համար կարգին մարդիկ ինձ տուն էլ պիտի չժողովնեն: Բայց ախր ես այնտեղից եմ եկել: (Մատով դէպի լրասամուտն է ցոյց տալիս): Ա՛յ այնտեղ, քա-մտկիս, լաց լինող, տանջուող կայ: Տիկին Գրոսման, տիկին Գրոսման, ախր նրանք մեր հրէայ եղբայրներն են: Մի նեղութիւն քաշէք, մի անգամ մեզ ակը տուէք: Այս լուսամուտիցն երկում է՝ որտեղ ենք մենք ապրում, այն աւերակներն էլ ասում են՝ ինչպէս ենք մենք ապրում:

ԷՏԵԼ. Ի՞նքս էլ այնտեղից եմ:

ԷՐԾ. Դուք մոռացել էք... Ախր նրանք մեր եղ-բայրներն են, այ ինչ եմ ասում: Ինչու էք պախարա-կում նրանց, որ բանթող են եղել, Ո՞վ ուրախութիւ-

նից կը ցանկանայ քաղցած մնալ: Ա. իս, տիկին Գրոս-
ման, տիկին Գրոսման: Ապա այն սուրբ հրէայ կանանց
ու այն խեղճ երեխաների լացը: Եւ ցնւրտ, և դարդ, և
աղքատութիւն: Ո՞վ են այս ելեքը, որ մեր աներումն
են ման գալիս:

ԷՏԵԼ. (սառն ու խստութեամբ). Ո՞վ էր ասում
նրանց՝ բանթող լինին: Ի՞նչ էր ասում, է՛րշ: Ախր ևս
կարող եմ մտածել, որ ձեր մտքումը վատ բան կայ
կամ որ ձեզ կաշառել են: Ի՞նչպէս թէ: Գրհսմանի հետ
կուլ: Ո՞վ է կամենում կոռւել: Թոչոտները, մուրաց-
կանները: Միթէ Գրոսմանը ջաղացի բոլոր բանուոր-
ների համար հայր չի եղել: Թէ գուք այնքան տիմար
էր, որ կարծում էր, թէ գործադուլը մեզ շահ է բե-
րում: Թէ պէտք է ձեզ հասկացնել, որ այդ մեզ քան-
դում է: Հերիք է, է՛րշ: Թող տնքան: Եւ դարդ, և
սով, և աղքատութիւն... Տեղն է նրանց:

ԷՐԾ. (տրտում). Ես էլ չեմ խօսում: Վերջ: Ար-
դէն նպատակիս հասայ: Վերջ:

ՊԵՏԵԱՆ. Իսկ գուք, է՛րշ, երբ պիտի խուզէք ձեր
զգուելի մօրուքը: (Մօտենում է նրան, ըոնում է մօ-
րուքիցն ու ծիծաղում է: Էրշը քծնելով ժպտում է
ու անհամարձակ շարժումներով աշխատում է ազա-
տել մօրուքը):

ԷՐԾ. Դուք ողջ լինիք: Ի՞նչո՞ւ խուզեմ մօրուքս:
Այսպէս էլ ես գեղեցիկ եմ:

ՊԵՏԵԱՆ. Իսկ ես ահա ձեր մօրուքիցը մի կտոր
կը կտրեմ, Մայրիկ, մկրատը տուր:

ԷՐԾ. Դուք հանաք էք անում, Պետենկա: Հրէի
մի կտոր մօրուքն ում է պէտք:

ԷՏԵԼ. Պետենկա: Դու ի՞նչ կ'ասես, Ժենեա: Դէ
հերիք է...

ՊԵՏԵԱՆ. Իսկ ես ուզում եմ, Կ'ասես՝ անպատճառ

այսպիսի մօրուք է պէտք հրէաներին: Այդ է որ լա-
կոտները փողոցումը գոռում են մեր երեսին — դու
ջհնուղ ես...

ԷՐԾ. Գոռում են՝ թնդ գոռան: Իսկ ես ծիծաղում
եմ նրանց վրայ ու ճանապարհովս գնում: Ես հօ գի-
տեմ, արդարութիւնն ունի է: Բաց թողէք մօրուքս,
խնդրում եմ,

ՊԵՏԵԱՆ. (զգուանքով). Զգուելի ժողովուրդ են
հրէաները: Բայրըն, դէսը: (Արագ դուքս է զնում: Էրշը
տիսուր նայում է նրա յետելից, հոգոց է քաշում):

ԷՏԵԼ. Մի նեղանաք նրանից, գեռ երեխայ է: Կը
մեծանայ, բոլորիս նման լաւ հրէայ կը գառնայ:

ԷՐԾ. Ի հարկէ, ի հարկէ, տիկին Գրոսման: Հիմա
դեռ մի քիչ գարփուս է: Ապրիք, բաղդաւոր մեծանայ:
(Չախ կողմի սենեակից ծայներ են լսուում. մէկը
բարձր, քիչ խոպոտ, միւսը զիւ, տենորի ծայն):

ԷՏԵԼ. Ա.յ, Դաւիթն եկաւ: Կապոցը բաց արէք:
Նա սպասել չի սիրում: (Մտնում են Գրոսմանն ու
Հերմանը: Գրոսմանը բարձրահասակ, ամրակազմ
մարդ է: Մօրուքը սեպածեւ, ցած խուզած: Մատնե-
րին ծանրազին մատանիներ. Ժիլէտի վրայ ծանր
շղթայ: Սիզար է ծխում: Հերմանը՝ երեսը ածիլած,
կարճահասակ է ու հաստ):

ԳՐՈՍՄԱՆ. Դարձեալ կրկնում եմ, Հերման, որ
ամէն բանում գուք էք մեղաւոր, ել մի հակառակէք:

ՀԵՐՄԱՆ (երկշոտութեամբ). Ես չեմ հակառակում:

ԳՐՈՍՄԱՆ. Լոէք ուրեմն: Ամէն բանում ձեր մե-
դաւորութիւնն եմ տեսնում. բայց այս անդամ ներում
եմ: Զվիճենք—բանուորը երես է առել: Առաջուայ բա-
նուորն էլ չկայ այժմ: Բայց, բայց, բայց և բայց: Դուք
ձեր քաղաքականութեամբ նրանց բոլորովին փչա-
ցրիք:

ՀԵՐՄԱՆ. Իմ քաղաքականութիւնը վատ չէր: Ես կարծում էի...

ԳՐՈՍՏԱՆ (կտրով): Կարծում էիր: Կարծել պէտք չէր, այլ գործել... Բանուորների հետ միայն մի քաղաքականութիւն կարող է լինել՝ խստութիւն և խստութիւն: Նրանց կենդանի թաղել է պէտք: Ապա ուր էր ձեր խստութիւնը: Կառավարիչ լինելով հանդերձ դուք ընդունակ էիր բանուորին կանտորը կանչելու և այնակ նրա հետ զրոյց անելու: Ես նրան կանտոր կը կանչէի: Իմ ձեռին նա կանտորի երես կը տեսնէր: Այդ քաղաքականութիւնը անցեալ տարի ինձ վրայ առաջ տոկոս յաւելում նոտեց: Ես ուղղակի կամէի, թէ դուք ինձ քանդում էք: (Հտելին, որ մօտենում ու քաշում է նրա թելը): Ի՞նչ է:

ԷՏԵԼ. Դաւիթ, երշն այստեղ է: Մուշտակդ է բերել:

ԳՐՈՍՏԱՆ (բարկացած). Ի՞նչ էր, ի՞նչ մուշտակ: Ասել է, թէ բոլոր գործերս պիտի թողնեմ մի մուշտակի համար: Թողդ սպասի...

ԷՏԵԼ (երկշոտ). Մի բարկանայ: Ես կարծում էի, թէ կարելի է: Երշը վազուց է քեզ սպասում:

ԳՐՈՍՏԱՆ. Էլի կ'սպասի: Կրակ չընկաւ քաղաքը: ԷՐԾ (ցած). Ի հարկէ, երշը կ'սպասի: Ի՞նչ կայ որ: (Զգուշութեամբ դուրս է զնում):

ՀԵՐՄԱՆ. Դուք ուղղակի գլխիս խփեցիք: Ես ձեզ հաւատարմութեամբ ծառայում եմ: Ես ի՞նչ եմ արել: Ճիշտ է, երբեմն մեղմ եմ եղել. բայց միթէ նրանց սիրելուց: Ես ամէն բան անում էի նրանց դէպի մեղ գրաւելու համար: Եթէ տօներից առաջ աշխատավարձը տալիս էի կամ ձմեռը իր գնովն ածուխ էի տալիս, նրա համար չէր, որ խոնարհ լինին: Ես միշտ խիստ եմ եղել և հազիւ երբեմն բարի: Բայց այն, ի՞նչ որ այժմ է

կատարուում, մեղանից անկախ է լինում: Ել հիմա բանուորին վախեցնել չի կարելի...

ԳՐՈՍՏԱՆ (ուժեղ կերպով). Կարելի է:

ՀԵՐՄԱՆ. Երկրումն յեղափոխութիւն է...

ԳՐՈՍՏԱՆ. Այդ մեզ չի վերաբերում: Միթէ մարդիկ էլ չեն ապրում: Կրպակներում առուտուր կայ, մարդիկ ուտում են: Յեղափոխութիւն ցոյց տուէք նրանց, թէ որ ուզում են: Ցոյց տուէք, թէ ի՞նչպէս կարելի է բանուորին կաշառել: Մենք միջոց ունինք: Այս անգամ, Հերման, ոչ մի զիջում չի լինելու: Ոչ մի յաւելում, ոչ մի ութժամեայ օր: Ոչ մի բժշկական օգնութիւն և այլ յիմար բաներ:

ՀԵՐՄԱՆ. Իմ մարդիկն արդէն բանում են: Բայց բանուորներն ուղղակի գծուել են:

ԳՐՈՍՏԱՆ. Մենք կը բժշկենք նրանց: Մի եկէք այստեղ: (Մի կողմէ է տանում նրան): Լուր տարածեցէք, թէ ես շատ զայրացած եմ բանուորների վրայ և ջաղացը կամենում եմ դադարեցնել: Հասկանում էք: Գլխներումդ ուղեղ կայ:

ՀԵՐՄԱՆ (խոնարհ). Կայ:

ԳՐՈՍՏԱՆ. Դէ աչքերդ մի ճպճպացնէք: Խօսեցէք ոուս բանուորների հետ և մի բան խոստացէք նըռանց: Պէտք է խմացնել նրանց... Խոկ հրէայ բանուորների հետ վարուեցէք, ի՞նչպէս կամենաք, առանց քաշուելու: Այդ ի՞նչ զգուելի սովորութիւն է, աչքերդ ճպճպացնում էք, երբ ձեզ հետ մարդ է խօսում: Վաղը մի երկու-երեքին ինձ մօտ բերէք... Ի՞նքս նրանց հետ կը խօսեմ...

ՀԵՐՄԱՆ. Գնում եմ արդէն և այնպէս կ'անեմ, ի՞նչպէս որ հրամայեցիք: (Զայնը աղերսական է դառնում): Պարսն Գրոսման, ես ձեր ձեռին մի լաւ փայտ եմ: Դուք գուցէ կարծում էք, թէ բանուորներն ինձ

սիրում են: Իմ շուաքիցը վախենում են: Քանի՞ քանի անդամ այս ձեռներովս բանուորներին ծեծել եմ ձեր շահերի համար: Ապա չժի՞ն ուզում ինձ սպանել: Դուք հօ ամէն բան գիտէք... Պարոն Գրոսման, ես մեղաւոր չեմ...

ԳՐՈՍՄԱՆ. Լաւ, լաւ, գնացէք: Ես ձեղ ճանաչում եմ: Գնացէք ու մտքներումդ պահեցէք, որ այս հինգ օրումը ես երեք հաղարի կորուստ եմ ունեցել: (Հերմանը հեռանում է. Դրոսիանը յետ է կանչում նրան): Միտքս փոխեցի: Գնացէք ջաղաց ու սպանեցէք ինձ: Կանչեցէք Ստեփանին ու Պետրին: (Մտածում է): Լաւ, գնացէք: Ես ինքս կը կարգադրեմ: Մի փոքր նախաճաշ անեմ, իսկոյն կը գամ:

ՀԵՐՄԱՆ. Գնում եմ արդէն: (Դուրս է գնում):

ԳՐՈՍՄԱՆ (ման է զալիս սենեակում): Ես պարանի վրայ նրան պար կ'ածեմ: Նա, ձիշտ է, մեղաւոր չի, բայց այս բոլոր անզգամների սանձն էլ ձեռից թողնելու չի:

ԷՏԵԼ. Ի հարկէ: Նրանք ամէնքն էլ պատրաստ են մեղ անդանակ մորթելու: Հերմանն անշուշտ կ'ուզենար, որ դու լինէիր իր կառավարիչը և ոչ ինքը քոնը:

ԳՐՈՍՄԱՆ. Թհր ուզենար: Դու մի խառնուիր, Սուս կաց: Ո՞վ էր եկել այստեղ:

ԷՏԵԼ. Էրշն էր մուշտակլ բերել:

ԳՐՈՍՄԱՆ. Կորչի ինքն էլ, մուշտակն էլ: Ջաղացը կորուստ է որ բերում է, տներն էլ ջոկ գլխացաւանք... Մուշտակի՞ եմ հիմա կարօտ: Ասում ես, ով է եկել էրշը: Հա: Լաւ, թհր գայ էրշը, մուշտակը բերի: Նա հէնց պէտք էլ է ինձ: Նրա տղայի անունը կարծեմ Միլոն է, չէ:

ԷՏԵԼ. Կարծեմ: (Դուրս է գնում աջակողմեան դոնով):

ԳՐՈՍՄԱՆ (Ժենեային). Ի՞նչ ես անում, Ժենիչկա:

ՖԵՆԵԱ. Երկրորդ օրն է միայն, որ այստեղ եմ, հայրիկ, և արդէն չեմ յիշում, թէ ինչպէս եմ անց կացրել այս չորս տարին: Միշտ միենոյն բանը: Փող, փող ու փող...

ԳՐՈՍՄԱՆ (Ժիծալում է). Գնա տուն: Ես քեզ զուրս չեմ անի, թէպէտ պէտք էլ: Սակայն ես չեմ խառնուում:

ՖԵՆԵԱ. Տուն: Ո՞չ երբէք: Լաւ է կախուեմ:

ԳՐՈՍՄԱՆ (զարմացած նայում է Ժենեային): Մտնում են իտելն ու էրշը). Լսիր, էտել, այս ինչ է ասում է աղջիկդ: Լաւ է, շատ լաւ է: Ճիշտ որ պէտք էր սրան երեսուն հաղար ոռութիւ օժիտ տալ: Աւելի լաւ չէր լինի այդ փողովն արժէթղթեր առած լինէինք կամ ջաղացի գրամագլխին աւելացրած: Է՛, լաւ... Այս թող ինձ խրատ լինի: Մաշան արդէն այդքան փող չի ստանայ:

ԷՏԵԼ. Պիտի լսես, թէ նա ինչ է ասում:

ԳՐՈՍՄԱՆ. Ես քաղցած եմ: Ասա, մի բան բերին ուտելու: Իսկոյն ջաղացը պիտի գնամ: Դէ մուշտակը ցնյց տուէք, էրշ: (Դիտում է մուշտակը: Էտելը դուրս է գնում):

ԷՐՇ. Ա՛յ մուշտակ: Թագաւորի մուշտակ է:

ԳՐՈՍՄԱՆ (հազնում է մուշտակը). Հ՛ը, փող շինժում էք, էրշ: Ո՞չ: Էլի չժի՞ կամենում առաջուայ պէս: Է՛, էրշ, դրա համար մենք կը կոռենք իրար հետ:

ԷՐՇ. Ի՞նչ արած, պարոն Գրոսման: Ամէնքն էլ հօ ձեղ պէս բաղդաւոր չեն լինի: (Հոգոց է քաշում)

Ե՞ն, մի կերպ կը կառավարուենք, մինչև մեռնենք:
Ներեցէք, այստեղ չի սեղմում,
ԴՐՈՍՄԱՆ. Չի սեղմում...

ԷՐՇ. Այստեղ էլ չէ (յետ է զնում ու ոսից զբ-
լուխ դիտում է Դրոսմանին): Այս մուշտակով դուք
թագաւորի նման էք...

ԴՐՈՍՄԱՆ (փղնթփրնթում է). Թագաւորի նման...
ԷՌՇ, դուք, կարծեմ, մի որդի ունիք և երկու աղջիկ.
Թէ երկու որդի ու մի աղջիկ:

ԷՐՇ. Երկու որդի ու մի աղջիկ, պարհն Գրոսման,
և բոլորն էլ տանջուում են, բոլորն էլ տանջուում են:
Մէկը ձեր ջաղացումն է բանում: Բա, Միլոնը ձեզ
մօտ է բանում:

ԴՐՈՍՄԱՆ (ստոր). Կարող էք յայտնել նրան,
որ էլ նրան յետ չեն ընդունի:

ԷՐՇ (ցնցում է: Վախեցած). Նրան: Ի՞նչպէս
թէ. նրան:

ԴՐՈՍՄԱՆ. Այսպէս, Իբրև թէ դուք չգիտէք, ԷՌՇ:
Իսկապէս ես մուշտակը չպիտի ընդունէի ձեղանից և
ձեզ էլ ուղղակի պիտի դուրս անէի: Ի՞նչպէս, իմ
տուած գործովն ասլրէք ու թոյլ տաք, որ ձեր որդին
իմ ջաղացումը գործադուլներ սարքի: Էլ ի՞նչ հայր էք
դուք. Էլ ի՞նչ մարդ էք: Զէիք կարող փայտով մի լաւ
ծեծ տալ նրան: Զէիք կարող ասել նրան—շնորհ, ում
դէմ ես ապստամբում: Գրոսմանի, որ մեզ բոլորիս
կերակրում է:

ԷՐՇ (չորացած), Պարհն Գրոսման, պարհն Գրոս-
ման...

ԴՐՈՍՄԱՆ. Դուք չէիք կարող նրան ասել—շնորհ,
ուզում ես, որ պարոն Գրոսմանը ջաղացը դադարեցնի:
Է, կը դադարեցնի: Մի վախենայ, շնորհ, կը դադարեցնի:
Բոլորդ սոված կը սատկէք: Վերցրէք մուշտակը: (Խոր-

նրդաբար): Եւ ճշմարիտն ասեմ, ԷՌՇ, ես վերջնակա-
նապէս որոշել եմ, եթէ չհանդարտուին, պիտի դադա-
րեցնեմ ջաղացը: Չեզ եմ հարցնում. ինչի՞ս է պէտք
ջաղացը: Յեղափոխութիւն է հիմա, ջարդերի հոտ է
դալիս, կարեցողն էլ, չկարեցողն էլ փախչում է: Ես
էլ կ'անմեմ կնոջս, երեխաներիս ու կը գնամ Եւրոպա:
Միթէ ես իմ ունեցած փողովը չեմ կարող հանդիստ
ապրել Եւրոպայում:

ԷՐՇ. Իրաւունք ունիք, պարհն Գրոսման: Ես էի
ասում նրանց. ի՞նչ էք անում, այ հրէաներ: Ո՞ւմ էք
կամենում դուք վասել: Հրէային: Ախը մենք, հրէա-
ներս, մի ձեռի մատների նման պէտք է իրար հետ
կապուած լինինք: Ի՞նչ կը լսէին ինձ: Ես ամեն բան
գիտեմ: Խնդրում եմ, գոռում եմ. հրէան պիտի չգնայ
հրէի դէմ: Ախը հէնց սրանում է մեր բոլոր հրէու-
թիւնը:

ԴՐՈՍՄԱՆ (ստոր). Յիմար բաներ մի ասէք, ԷՌՇ:
Ի՞նչ հրէութիւն: Ես ոչ մի հրէութիւն չեմ ճանաչում:
Դուք աշխատում էք, ես վճարում եմ. չէք աշխատում,
չեմ վճարում: Այս է ահա ողջ հրէութիւնը: Իսկ թէ
ձիշտն ասենք, ուսւ բանուորներն ինձ համար հրէա-
ներից սիրելի են: Հրէան իր հրէութիւնն է միշտ մէջ
խոթում: Բանուորները պիտի իմանան, որ ես գործա-
տէրն եմ, իսկ իրանք իմ ծառաները...

ԷՐՇ. Իրաւունք ունիք, պարհն Գրոսման: Բայց
ինձ սովորցել են, թէ հրէութիւն կայ: Ես այդպէս ևս
լսել... (ծալում է մուշտակը): Խնդրում եմ ձեզ որ-
դուս համար, պարհն Գրոսման: Դժուար ժամանակ է...
Խնդրում եմ որդուս համար:

ԴՐՈՍՄԱՆ (իբր թէ չի լուսմ). Ե՞րբ կը բերէք
մուշտակը:

ԷՐՇ. Մի շաբաթից կամ տասն օրից յիտոյ: Պա-

բան Գրոսման, ինդղում եմ որդուս համար: Մի լաւ խօսք եմ կամենում լսել:

ԳՐՈՍՄԱՆ (դիտմամբ զոռում է). Ետեւ ինչ եղաւ նախաճաշիկը (Երջը նայում է նրան, զլովիր տրոտում թափ է տալիս: Դուրս է զնում: Մտնում է Էտելը, նրա ետելից աղախինը՝ մի մեծ մատուցարան ձեռին):

ԷՏԵԼ. Ի՞նչ ձուկ է: (Բանի է կենում Գրոսմանի մօտին: Ասում է աղախինին): Սամովարը բեր: (Աղախինը դուրս է զնում: Գրոսմանը նստում է սեղանի սոսաջ, անձնողիկի ծայրը իրում է ժիշետի տակ: Էտելը նստում է նրա դիմացը, ձեռները ծալում կըրծըին, նայում է նրա ուտելուն: Նրան մէկ հաց է տալիս, մէկ դանակ, մէկ լիմոն):

ԳՐՈՍՄԱՆ (ծամելով). Բա դու...

ԷՏԵԼ. Կեր, կեր: Ես ուտելու բան կը գտնեմ: Այդպէս արագ-արագ մի ուտիր: Երբ և իցէ բկումդ կը մնայ: (Գրոսմանը հազում է): Այ արդէն հազդ բռնեց: Թողղ ձկան փուշը ջոկեմ. (Գրոսմանը լուր ծամում է): Ել լիմոն տամ:

ԳՐՈՍՄԱՆ. Լիմոն տուր: Ժենեա, դու չես ուզում: (Ժենեան նստում է սեղանի մօտ եւ բացասարար զլովիր շարժում է):

ԷՏԵԼ. Բա վերջն ի՞նչ պէտք է լինի:

ԳՐՈՍՄԱՆ (զրգորուած). Ինձ մի հարցնի: Երբ ես լուր եմ, դու ել լիւր կաց: Ես նրանց զործադուլ ցոյց կըտամ: Նրանց հոգին կըհանեմ ես, այ ի՞նչ գործադուլ կը լինի այս: Ո՞վ են դունչ բարձրացնողները: Միբոնները, իւանները...

ԷՏԵԼ. Այս խռովութեան շնորհիւ բոլոր քննոուները դունչները բարձրացնում են, ժենելը, Հայրիկ:

ԳՐՈՍՄԱՆ. Ես նրանց դունչ ցոյց կըտամ... Մեծ բան է պատահել, այ: Միբոնների ու իւանների սիրտը հանգստանալ է ուզում: Կարծես քիչ ժամանակ ունին հարբեցողութիւն, փչութիւն անելու: Օրական ութ ժամ միայն աշխատանք տնկը նրանց: Հօրս ցաւը չէք ուզում:

ՃԵՆԵԼ. Հայրիկ, գոնէ մի անգամ լսիր ինձ... էտել. Հրէաների հետ բարի պէտք է լինել, Դաւիթ:

ԳՐՈՍՄԱՆ (բարկութեամբ). Ինչու հրէաների հետ: Իմ ազգականներն են նրանք, ի՞նչ է: Հէսց ազգականներս լինին: Հարստութիւնս ուրեմն նրանց պիտի տամ: Այ ի՞նչու քեզ հետ խօսել չեմ սիրում: Ի՞նչ է հրէան: Լիրը: Ել ի՞նչ: Շնուն, յանդիւն: Առաջինը նա է, որ ոչ մի բանի չի հաւանում: (Կծու ծիծաղով): Հրէան: Հրէան ցաւ է, ցաւ: Մի ինձանից հարցըն, թէ ո՞վ է փչացնում իմ ոռւս բանուորներին: (Ժենեան տեղիցը վեր է կենում. ման է զալիս սենեակումը): Քաղցըն ուր է:

ԷՏԵԼ. Ահա քաղցը: Ինչու բարկացար: Զեռաց վաթում ես դու, Դաւիթ: Ի՞նչ ասացի որ: Հրէան ինձ աւելի մօտիկ է, ես ել ասացի: Թէ չէ ինձ համար լաւ լարանի գան, չալ պարանի, թէ որ մեր վատն են ուզում:

ԳՐՈՍՄԱՆ (բաղցըն ուտում է). Նրանք քսանունինք տոկոս յաւելումն են ուզում, բանելն էլ փոխէփոխ: Դիտես, ինձ այդ ի՞նչ կը նստի, եթէ ջաղացումը հարիւր հոգուց աւելի բանող կայ: Մի ոչինչ բան: Տարեկան մի քսանունինք հազարի չափ, եթէ ոչ աւելի:

ԷՏԵԼ. Սկ ցաւի գան. չոնթանան, տեսնեմ:

ԳՐՈՍՄԱՆ. Մի գոռայ: Տես՝ դու գոռում ես ար-

դէս: Մարդ պէտք է սառնասիրտ մինի: Նրանք ուզում են: Շատ բան կ'ուղեն: Ապա ես ո՞րտեղ եմ: Այս յիմար յեղափոխութիւնն է մի փոքր խանգարում, թէ չէ հս ցոյց կը տայի նրանց, թէ ով է Գրումանը: Թէ այս յեղափոխութիւնը չէր լինի: Ի՞նչ էիր ուզում, ժն-նիշկա: (Սրբում է ըեխերը: Աղախինը սամովարը ներս է ըերում: Մտնում են Վայցը և Մաշան):

ԺԵՆԵԱ. Ոչինչ, հայրիկ: Ինձ էլ բան հարկաւոր չի: ԳՐՈՍՄԱՆ. Հարկաւոր չի, հարկաւոր չի: Էտել ինձ մի բաժակ թէյ տուր: (Ժամացոյցին է նայում, ձեռ է տալիս Վայցին): Ի՞նչ նոր բան կայ, Վայց: Ի՞նչպէս է առաջ գնում Պետեայի պարապմունքը:

ՎԱՅՑ. Սովորականի պէս, պարոն Գրուման: Մի փոքր ծուլութիւն է անում, բայց զարմանալի ընդունակ է:

ԳՐՈՍՄԱՆ. Այդ ձեր գործն է: Գլխաւորն այն է, որ նրա ուղեղը դարձանայ: Ինձ պէտք չի բարձր ուսում, ծայրայեղ գիտութիւն: Այդ բոլորը դատարկ բաներ են: Սրդէն տեսնում եմ, թէ ի՞նչ պիտի դառնայ Սաշան: Կեանքի մէջ գլխաւորն է գլուխ ունենաս գործ անելու: Ես ինքս հասարակ բանուոր եմ եղել բայց մաթեմատիկան ուսուցչից ոչ պակաս գիտեմ: Քաղաքականութեան մէջ ու սօցիալական խնդրում գիտունի հետ կը մըցեմ: Բոլորն էլ ոտի վրայ եմ սովորել:

ՎԱՅՑ. Ձեր հայեացքներին ծանօթ եմ և անում եմ, ինչ որ կարող եմ:

ԳՐՈՍՄԱՆ (Արդէն մոռացել է Վայցին. թէյ է խմում, զրոյց է անում էտելի հետ). Միայն թէ ի-մանայի, գլխաւոր դրդողներն ովքեր են: (Կամաց է խօսում):

ՄԱՇԱ. Ի՞նչ ձանձրալի է... (Կոտրատում է մատ-

ները): Այստեղ, Վայց, օդն էլ բանափի օդ է: Երբ որ նա... (Հօրին է ցոյց տալիս) խօսում է, ինձ թուում է, թէ խելագարուում եմ: Փող, փող, բանուորներ, ջա-ղաց... Մէջքներդ արէք նրան: ու մի լսէք: Շնուռ եկէք, ես այդպէս հմ կամենում: Նրա շունչը մարդ է սպանում: ՎԱՅՑ (կամաց). Սիրելի Մաշա, նա կարող է լսել: (Մէջքն անում է Գրումանին):

ՄԱՇԱ (յամառութեամբ). Թոնդ լսի: Վերջապէս ուղղակի կ'ասէի նրան ամէն բան, ամէն բան... եւ սակայն, Վայց, ես սիրում եմ նրան, սրան... (Ցոյց է տալիս մօր վրայ) Ի՞նչ տարօրինակ բան է:

ՎԱՅՑ. Մայրիկը ձեղ թէյ է տալիս:

ՄԱՇԱ. Թէյ: Լաւ (ծիծաղում է): Թէյ կը խմիմ: ԷՏԵԼ. Դու այսօր գունատ ես, Մաշենկա:

ՄԱՇԱ. Գունատ գէմքը շատ հետաքրքրական է. սպաներին գուր է գալիս:

ՎԱՅՑ (յանդիմանական եղանակով). Ի՞նչու էք այդպէս խօսում: (Ժերերը կամաց զրոյց են անում):

ՄԱՇԱ. Սյապէս եմ կամենում... Թաքուն ինձ տուէք ձեր ձեռը: (Ցողնած): Ոչ, պէտք չի: Ես ուզում եմ զարհուրելի, տանջող բան... Ճիշեր: Ես կը ցանկայի, որ ամէնքը ճշային ցաւից... Լսում էք, զարձեալ՝ փող, փող: Հայրիկ, այսօր ի՞նչքան վաստակ ես արել: ԳՐՈՍՄԱՆ. Ես օրական վեց հարիւր ոուրլու կոռուստ ունիմ:

ՄԱՇԱ. Այդքան քիչ: (Գլխով է անում): Ի՞նչ լաւ կը լինէր, գու աղքատանայիր:

ԳՐՈՍՄԱՆ (լուրջ). Յիմար բաներ մի ասի:

ՄԱՇԱ. Կամենում եմ յիմար բաներ ասել: Միթէ այստեղ մարդու միտ կարող է որևէ խելօք բան կալ: Դոնէ մի անգամ հարցընը ինձանից, թէ ի՞նչ եմ անում ամբողջ օրերով: Գիմնապիան աւարտեցի ու փեսացուի

իմ սպասում, որին դու յիսուն հազար կը տաս կամ
քսան հազար, ինչպէս որ ձեռնտու կը լինի քեզ համար:
Էծել, չերիք է, Մաշենկա:

ՄԱՇԱ. Ճիշտ չեմ ասում միթէ:
ԳՐՈՍՄԱՆ (անտարբերովթեամբ). Օժիտը կա-
խուած է ջաղացիցը: Դուցէ յիսուն հազար, բայց գու-
ցէ և քսան:

ՄԱՇԱ. Շարունակ ջաղաց, ջաղաց, իսկ հայր
կարծես չկայ էլ...

ԳՐՈՍՄԱՆ. Ինձ մի բարկացնի: Ջաղաց. նրանից
գուք ինչ էք հասկանում: Ջաղացը դու չես և ոչ ես:
Նա բոլորից վեր է: Հարիւր քսան բանուոր և վաթ-
սուն ծառայող է կերակրում ջաղացը,—ընտանիքներն
էլ հետները՝ այդ կ'անի եօթ հարիւր հոգի: Օրական
երեք հազար փութ ալիւր է հանում, հարիւրաւոր տոկ-
տրական, հաղարաւոր հաց թխող և տասը հազարա-
ւոր մարդ է կերակրում: Իմ հացն ուսում են Ամերի-
կայում և Եւրոպայում: Քո կեանքը ջաղացի ձեռին է,
Մաշա: Իսկ այն բոլոր տղամարդկանցը, կանանցն ու
երեխաներինը: Ո՞վ է հաց տալիս, ուրախութիւն և
յոյս: Ջաղացը: Ո՞վ կարող է ամուսնանալ, եթէ ջա-
ղացը չի կամենում: Ջաղացն այրուի՝ հազար հոգի
կորած է: Ահա թէ ինչ բան է ջաղացը:

Էծել (հպարտովթեամբ). Մենք մեր ամբողջ
կեանքն ենք դրել ջաղացի վրայ: Մեր ջղերով են
պարտուում նրա անիւները: Մեր բոլոր երիտասարդու-
թիւնը, առողջութիւնն ու ոյժերը շաղ են տուած նրա
ամէն մի անկիւնում:

ԳՐՈՍՄԱՆ (արհամարհանքով). Մենք, մենք:
Չերիք է խօսես: Գնանք, շորերս փոխեմ: Կը մտածեմ
և գուցէ ոստիկանապետի մօտ գնամ: (Դուրս է գնում):

ՄԱՇԱ. (սարսափով). Երբեմն ինձ թուում է, թէ
սրանք խելազար են:

ԺԵՆԵԱ. Իմ տունը սրանից լաւ չի:
ՎԱՅՑ (կանգնում է). Գուցէ ես այսակեղ աւե-
լորդ եմ:

ԺԵՆԵԱ. Ո՞չ, ոչ, Վայց, ես ուրախ եմ, որ նոր
մարդ եմ տեսնում: Դուք ինձ հասկանալ կարող էք:
Ոչ ոքի համար էլ գաղանիք չի, որ իմ ամուսինը բոր-
սայում խաղացող բժիշկ է և որ ես նրան թողել եմ:

ՄԱՇԱ. Ինչո՞ւ են հրէաներն այսքան փող, գործ
սիրում: Հայրս կ'ասէր՝ յիմար բաներ մի ասի: Իսկ ես
կը պատասխանէի նրան՝ սրա համար են մեղ ջարդում,
կոտորում:

ՎԱՅՑ. Դրա համար չի:

ՄԱՇԱ. Սրա համար է: Մի վիճէք: Ես այսպէս
եմ կամենում: Ես ինքս ինձ համար զգուելի եմ: Ինձ
թուում է, թէ մէջն թղթաղրամներ է լցրած և արեանս
մէջ հալած ոսկի է հոսում: Ատում եմ հրէաներին:

ՎԱՅՑ. Դուք այնքան արագ գրգռուում էք...

ՄԱՇԱ. Նախանձում եմ ձեզ. գուք ազատ էք:
ՎԱՅՑ. Մի նախանձէք: Եթէ մարդ ինձ նման
երեն քաղաքացի է զգում և ոտով-գլխով յեղափոխու-
թեան չի նուերուում, այլ ուսուցչութիւն է անում,
ողորմելի՞ է: Ահա արիւն է թափուում: Բայց մարդու
արիւն ինձ վրայ եղել է, —ոչ երբէք: Զեռներս արեան
մէջ եղել են, —ոչ երբէք: Որու հսկաներն իջել են ե-
րամով երկրի վրայ, իսկ ես, Մաշա, մնացել եմ մե-
կուսի: Մարդ իւր ազգի զաւակը լինի, հաւատայ նրա
ստեղծագործող ոյժերին, իմանայ, որ յեղափոխութիւնն
է նրա փրկութիւնը և հեռու մնայ, —խայտառակու-
թիւն է,

ԺԵՆԵԱ. Ապա ինչո՞ւ չէք ստիպում ձեզ:

ՎԱՅՑ. Ասելը հեշտ է: Ինձ վրայ է մի մէջ ըն-
տանիք—կոյր հայրս, պառաւ մայր, եղբայրներ, քոյ-
րեր: Այս օրուանից, ինչ աչքս բաց եմ արել, ևս նը-

բանց համար եմ աշխատում: Ժամանակ չեմ ունեցել ամենաանհրաժեշտ բաների համար: Ես աղղին ծառայելու մասին էի երազում և կոռի ձի դարձայ:

ԺԵՆԵԱ. Խղճում եմ ձեզ, Վայց: Ահա անբաղդ էք դուք և հա... Չեռ մեկնենք միմեանց:

ՄԱՇԱ. Երբ որ դուք խօսում էք մեր ազգի մասին, որի վրայ միշտ թքել են, որին միշտ թակել են և այժմ էլ կոտորում են, ես ատելութիւն եմ զգում դէպի ձեզ: Ամէնքից արհամարհուած,—մեր ազգը: Ես նախանձում եմ, Վայց, ամէն մի քրիստոնէի, ես քրիստոնէի շանն եմ նախանձում:

ԺԵՆԵԱ. Դու խելագազ ես:

ՎԱՅՑ. Մխիթարութիւն կայ, Մաշա: Մենք, բոլոր թոյլերս, տկարներս, կը ճուղուենք ժողովրդի հետ և կը տառապինք նրա հետ: Մենք կամենալ չենք կարողանում, խառնուենք բազմութեան հետ: Թռղ մեզ էլ ջնջին:

ՄԱՇԱ. Ո՞չ, ոչ: Ահա տեսնում եմ նրանց բոլորին, ողորմելի, արհամարհուած, ատուած... Տառապին հրէաների հետ: Ո՞չ, թռղ նրանց կոտորեն: Աւելի լաւ է գնալ քրիստոնեաների մօտ և ասել՝ սպանեցէք մեզ: ԺԵՆԵԱ. Ինչո՞ւ պլափի սիրեն մեզ, եթէ մենք ինքներս մեզ ատում ենք:

ՄԱՇԱ. Թախիծ է պատել հոգուս: Այս սենեակները տեսէք. տասներկուսն է, բայց և ոչ մէկը չկայ դուրեկան, մարգավայել: Ամեն ինչ կոպիս, դռիհիկ: Վամպիրներ են բնակում այստեղ: (Մոռայլ նստած է: Լոռութիւն: Մտնում են Դրոսմանն ու Ետելը: Գրումանը սերմուկով է):

ԷՏԵԼ: Դէ գնա: Առանց այն էլ ժամանակ շատ կորցրիր: (Մտնում է Ռողենովս: Միջահասակ է, նրանցաշակ հազնուած, վերարկուով: Զեղնափայտը

ծեղին, Պէնսնէ է զործ ածում: Յոլորը շիոթուած են: Վայցը լուս է զնում: Ժենեան փախչում է առանձնասենեալը:

ՌՈԶԵՆՌՎ. (բարձր, Ժենեայի ետելից). Ժենեա, Ժենեա:

ԷՏԵԼ. Այդ բնչ է, Եակով, բարով էլ չես ասում: (Կամենում է նրա ծեղիցն առնել փայտն ու զիսարկը):

ՌՈԶԵՆՌՎ. Ոչ, ոչ, մայրիկ: Ես մի բոպէով միայն մտայ:

ԷՏԵԼ. Ելի կարող ես զլիմարկդ ու փայտդ տալ... ԳՐՈՍՄԱՆ. Ի՞նչ ես ուզում նրանից: Զի կամենում, պէտք չի:

ԷՏԵԼ. (Երկշոտ). Ճիշտն ասեմ, Եաշա, քեզանից այդպիսի բան չէի սպասում: Այդ քեզ չի վայելում: Դու ուսում առած մարդ ես, դու բժիշկ ես... ՌՈԶԵՆՌՎ. (Ընդհատում է նրան). Իսկ ես ձեզանից այդպիսի բարքներ չէի սպասում:

ԳՐՈՍՄԱՆ (բարկութեամբ). Ի՞նչ արարքներ:

ԷՏԵԼ. Բհը՛, արդէն մենք ենք մեղաւոր: Ես իմանում էի, որ դու այդ պիտի ասես: Եակով, չի՞ որ դու ինձ մայրիկ ես ասում: Եղի՛ր ինձ հետ, ինչպէս մօր հետ: Զի՞ որ սիրաս քեզ համար էլ է ցաւում, նրա համար էլ:

ՌՈԶԵՆՌՎ. Ապա ինչո՞ւ թոյլ տուիք, որ նա այս-տեղ մնայ:

ԳՐՈՍՄԱՆ. Դու մեզ հարցեր մի տայ, մենք էլ քեզ չենք տայ: Ես ոչինչ չեմ կամենում իմանալ: Ես նրան քեզ տուի և կանխիկ համարեցի երեսուն հազար ոուրիֆ: Այսպիսի հարսանիք արի, որ գեռ քսան տարի քաղաքումը ասելիք կը լինի: Մնացածն իմ գործը չի, Ահա այս էի կամենում քեզ ասել: Ի՞նչ ուզում էք՝ արէք, միայն թէ ինձ հանգիստ թողէք:

ԷՏԵԼ. Եաշա, սիրելիս, հաշտուիր նրա հետ: Ախր

նա ջահել կին է: Քնքուշ պահած է, նրա ամէն ուզածը միշտ կատարուել է: Գնա նրա մօտ...

ՈՌԶԵՆՈՎ. Ես հօ խռով չեմ նրա հետ: Դուք պիտի մեր կեանքն իմանաք: Ժենեան շատ տարօրինակ կին է: (Վերարկուի կոճակներն արձակում է: Ման է զալիս սենեակումը): Ես նրան չեմ հասկանում: Մէկ փակուում էր իւր սենեակումն ու շաբաթներով կարելի չէր լինում դուրս քաշել նրան այնտեղից: Ախր այս կարելի բան չի: Մի մտածեցէք, մի կին, որին ամուսինը շաբաթներով չի տեսնում: Քանի անգամ ինքս եմ ուզեցել ձեզ հետ խօսել: Երբեմն էլ սկսում էր փողը շաղ տալ: Ախր այս ինչ բան է: Աներս, գուք հօ գիտէք, որ փողը երկնքիցը չի թափուում: Զէ՞ որ եթէ աջ ու ձախ փող շպրտես, ինչպէս նա էր մէկ-մէկ անում, ոչ թէ իմ աշխատածն ու ձեր երեսուն հազարը հերիք չի անի, այլ Բլեյխոնդերին էլ կարելի է մնան կացնել:

ԳՐՈՍՄԱՆ. Տեսնում էք՝ ես իրաւունք ունիմ, երբ ասում եմ, թէ ձեր գործերի հետ հաշիւ չունիմ:

ՈՌԶԵՆՈՎ. Իմ զբութիւնն էլ հասկացէք: Ծանր աշխատանքով ես փող եմ վաստակում, և իմ աշխատանքը ոտի տակ են տալիս: Ինձ հետ խօսում են, ինչպէս մի ռամկի հետ, մեղադրում են թէ մեշչան եմ, ժլատ եմ: Ներեցէք, կարծեմ ես համալսարան եմ աւարտել և կարող եմ իմանալ այդ բոլոր վսեմ խօսակցութիւնների արժէքը մեշչանականութեան, իդէալի մասին: Իրաւունք ունիմ ցանկալու, որ խաղաղութիւն լինի իմ տան մէջ: Մի մտածեցէք, աներս: Թողել է երեխաներին... Այդ ինչի՞ նման բան է: Դեռ լաւ է, մայրս համաձայնեց տունը կառավարել, և չեռացաւ մեղանից... այն բարի բոհնան: Այժմ վախենալու է, թէ մի գուցէ այս խայտառակութիւնը բացուի:

ԷՃԵԼ (իսոնարհ). Լաւ, ես կը գնամ նրա մօտ: Միայն, եակով... ախր դու էլ արդար չես: Մաշենկա, գնա քո սենեակը: Ես այնպիսի բանի մասին պիտի խօսեմ, որ աղջիկը պէտք չի որ իմանայ ու լիի: ՄԱՇԱ. Չեմ ուզում:

ՈՌԶԵՆՈՎ. Խնդրեմ, խնդրեմ, մայրիկ, առանց այդ մտերմական բաների: Մնացած ամէն ինչ մեր դործն է, և ես ոչ ոքի թոյլ չեմ տայ միջամտել...

ԷՃԵԼ (իսոնարհ). Լաւ, չեմ միջամտի... Միայն դու, եակով, պէտք է տեղի տաս նրան: Դու պարտաւոր ես: Դու մեծ ես, իսկ մեծը միշտ աւելի խելօք է և տեղի է տալիս:

ԳՐՈՍՄԱՆ (ձանձրացած). Իմ գնալու ժամանակն է: Կառավարուեցէք, ինչպէս որ գիտէք: (Չեռ է տալիս Ռոզենովին):

ՈՌԶԵՆՈՎ. Գնաք բարով, աներս:
ԺԵՆԵՍ (երեսում է առանձնասենեալի դրան մէջ). Մայրիկ, ես չեմ կամենում, որ դու գրա հետ խօսես: Դուրս արա դրան: Չեմ կամենում ճանաչել ոչ դրան, ոչ դրա երեխաներին, ոչ դրա ազգականներին: Դրա մայրը, երբ որ գալիս է, հոգիս հանում է:
ՈՌԶԵՆՈՎ. Ժենեա, ժենեա, ամաչիր...

ԺԵՆԵՍ (դրան մօտ). Չեմ կամենում ամաչիր:
Առաջ դռւ սկսիր: Դու բժիշկ ես ու բորսայի առեւրական դարձար: Իսկ ես չեմ կամենում բորսայի առեւրականի հետ ապրել:

ՈՌԶԵՆՈՎ (ղիմելով ծերունիներին). Ի՞նչ կ'ասէք սրան: Ահա այսպիսի տեսարաններ ամէն օր են կըրկնուում մեր տանը:

ԳՐՈՍՄԱՆ (սրտնեղած). Հանգիստ թողէք ինձ բոլոր էլ... (Ծտապով դորս է զնում):

ՄԱՇԱ (հեղնութեամբ). Իսկ քաղաքի կէսը նախանձում է մեր բաղդին: (Դուրս է զնում):

ԷՏԵԼ. ԺԵՆԻՀԿԱ, ԽԱՆԴՐՈՎՄ ԻՄ ՔԵՂ: ԼՍԻՄ պառաւ մօրդ:

ԺԵՆԵԱ. Թող դա հեռանայ... Դուք գրան գետ չեք ճանաչում: Խօսքով միշտ արդար գուրս կը դայ: Պէտք է գրան տանը տեսնէք: Գաղան է դա: Դա բոռնցք էլ է քաշել ինձ վրայ: Այն, այն, բոռնցք: Ո՞ւմ տուփ ինձ: (Հիստերիկաբար լալիս է): Իմ աղախնին իւր սիրուհին է դարձրել:

ԷՏԵԼ. ԺԵՆԻՀԿԱ, ԺԵՆԻՀԿԱ...

ՌՈԶԵՆՌՎ. (զայրոյթով). Ի՞նչ հաճոյքով կ'սպանէի քեղ: Խարերայ... Շարլոտա Կորդէ... Դժբաղդ է նա, որ հարուստ աղջիկ է առնում հասարակ գուեհիկ տանից:

ԷՏԵԼ. (զրկելով Ժենեային). Ո՞վ է գուեհիկ: Լեզուդ չորանայ: Բախտաբար: Կ'ասե՞՝ աղաչում էինք, թէ արի առ սրան: Դու չէ՞ր, որ տղբուկի պէս կպել էիր՝ սրան տեսածդ օրիցը: Գոեհիկ տունու Բա դու ի՞նչ տանից ես: Հայրդ խանութպան էր, ասենք՝ ազնիւ խանութպան, բայց մայրդ: Հօ ամբողջ քաղաքը գիտէ, որ նա իր տունը կրակ է քցել: Անխբդ: Դեռ համարսարանումն էլ է սովորել: Մարդ այսպիսի քնքուշ աղջիկ առնի ու այսպէս չարչարի: Դու ինձ հետ խօսիր, ինձ հետ: Ո՞ւմ փողովս ես վրայիդ կեղար լուացել:

ՌՈԶԵՆՌՎ. (կատաղած). Ի՞նքդ ես անխիղճ: Զհամարձակուես ինձ հետ այդպէս խօսել... (Պատրաստ է նրա վրայ յարձակուելու):

ԺԵՆԵԱ. (ճշում է). Դուրս, դուրս...

ԱԼԵՔՍՈՆԴՐ. (Արագ ներս է մտնում: Հազին սեւ բլուզ—կօսօվորօտկա, թել-զօտի). Այս ի՞նչ գոռզոսոց է: Ի՞նչպէս չեք ամաչում: Ենկով, ԺԵՆԵԱ:

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Քաղաքի ծայրը: Մի յարկանի ցած շէնք: Զախ կողմից փողոցի մի անկինը, մութ եւ անհամբոյր: Երեսում է աւերակների խաւար զծազրովթինը: Մթովեան մէջ երեսում են մարդկանց սոսներներ եւ անհետանում են: Հեռուում երկնքի վրայ նոր ծնած լուսին: Պարզ երեսում են ջաղացի սոսներանկարն ու ծինելոյզներոյ եւ կարծես թագաւորում են այստեղ: Աւերակների վրայից, աջ կողմում, երեսում է հեռուում ԳՐՈՍՄԱՆԻ տունը: Պատուհանները լուսաւորուած են: Ամբողջ տեսարանը մուայլ է եւ ծամր: ԷՐՇԻ ընակարանը: Մի փոքր սենենակ, աջ կողմից դրաը դէպի փոքրիկ խոհանոցը: Զախ կողմում երկար դերձակի սեղան: ԷՐՇԻ ակնոցով, մուշտակը փոել է սեղանի վրայ, կանգնած աշխատում է: Աջակողման անկինում կօշկակար ՇՄԻԼԻ կօշկի տակ է կացնում: Նրա առաջին կաշով ծածկաւծ մի փոքրիկ ցած սեղան: Սեղանի վրայ կօշկակարի գործիք: ԷՐՇԻ ՑԼ ոչ հեռու փոքրիկ նատարանի վրայ նստած է ԲԵՏԵԱՆ եւ արկոյիներ է շինում: ԷՐՇԻ կինը, ՌՈԶԱՆ, մազաղաթի դէմքով բարձրահասակ մի պառաւ, գունատը թաշկինակ զիմին, գուզայ է գործու: Սենենակի մէջտեղում մի սեղան, որի առաջ նստած է ԷՐՇԻ մեծ որդի ՄԻՒՐՈՆԸ եւ ընթրիք է անու: Սենենակը լուսաւորուած է երկու լամպով: Մէկը կախած է պատիցը ԷՐՇԻ զիմավերեւը, միա փոքրիկը ՇՄԻԼԻ կաշով ծածկած սեղանի վրայ է: Մնացած սարք

կարգը ողորմելի է։ Յատակի վրայ աղը։ Նեղուածք, օդը խեղուուկ եւ աշխատանքի մթնոլորտ լինելը զգացում է։ Երկու փոքր լուսամուտ, ապակիների տեղ թուղթ կպցրած։ Երկուան էլ փողոց են նայում։

ԷՐԾ (կտրում է մկրասով)։ Այսպիսի ժամանակ չեմ տեսել։ Այսպէս էլ ժամանակ կը լինի։ Հրէան հրէի դէմ գնայ Այսպէս բան երբէք չի եղել։ Կը պատահէր, բանուորը տիրոջ հետ չէր հաշտուի։ Է՛, չէր հաշտուի։ Ինչով էր վերջանում բանը։ Տէրը բանուորին դուրս կ'անէր, ու պրծաւ գնաց։

ՄԻՒՐՈՆ (ուսում է)։ Այդ ժամանակն էլ յետ չի դայ։

ԲԵՏԵԱՄ. Լաւ սոսինձ եփեցի։ Դէն քցելու բան է։ Շատ շուտ վեր առայ կրակի վրայիցը։

ՈՈԶԱ. (մլով քորում է քունքերը)։ Նրանից է, որ բոլորդ թռչում էք... ի՞նչ կայ. կը ակ հօ չի ընկել։ Կամաց անէիր, չփչանար։

ԲԵՏԵԱՄ. Դու հանգստանալ ես ուզում, ես չեմ ուզում։ Ի՞նչ գիտես, նստելուց ամբողջ մարմինս ծակւծկում է։ Ամբողջ օրը լաւ ձիու պէս բանել եմ, զոնէ երեկոն իմը լինի։ Զէ, երեկոյ պարոններն ունին... ի՞նչ է, իմ հոգին նրանց հոգուցը չի։ Բայց չէ. հա աշխատիր ու աշխատիր։

ՈՈԶԱ. Քո հասակումն օրական ես քսանուչորս ժամ էի աշխատում։ Ի՞նչ ես գոռգոսոցը քցել։

ԲԵՏԵԱՄ. Շատ բան ընկաւ ձեռդ, այտ ՏԵս, ի՞նչ պալատներում ես ապրում։ Օր-ձերութիւն հաղարներ ես յետ քցել։ Հայրս չի աշխատում, մենք չենք չարչարուում, քո էլ առողջութիւնը տեղը, գիշերները չես հազում ժամերով։ Յիմար բաներ մի խօսի։ Դու հիմա

էլ ապրում ես միայն այդ գաղաճներին ծառայելու համար։

ՈՈԶԱ. Այդ որ ճիշտ ես ասում։ Հազը հոգիս հանում է, բայց ես չեմ արանջում։

ԲԵՏԵԱՄ. Ամէնքը գիտեն, որ դու ցնդել ես։ Զուր ժամանակ եմ կորցնում քեզ հետ խօսելով։ (Դուրս է գնում ու տանում է սոսնձի կաթսան)։

ՈՈԶԱ. (զլովսը թափի է տալիս)։ Դէ, արի խօսիր սրանց հետ։ Ես ցնդած եմ... ինչու իրանք չեն ցնդած։ Որ չեմ ասում քաղաքն ու հարուստներին ու չեմ գուսում, թէ նրանց պէտք է ջնջել ուրեմն դէն քցելու անպէտք բան եմ։

ԷՐԾ. Ի՞նչ դատարկ խօսակցութիւններ են։ Թոնդ հանգիստ աշխատենք։ Հարուստը հարուստ պիտի լինի, իսկ աղքատը՝ աղքատ։ Պարուսինն առ, թրջիր, Թոնդ։ (Պահարանից հանում է պարուսինը)։ Այսպէս պէտք է լինի։ Աշխարհի եղած օրիցն այսպէս է։ Էլ խօսելու բան չկայ։ Կան ուժեղ գաղաճներ և թոյլ կենդանիներ։

ՈՈԶԱ. Դէ առեւ պարուսինը։ Հազիւ եմ ոտի վրայ կանգնում։ Զեռներս թուլացել, ուներս իմը չեն, աչքերիս առաջը սեանում է։ Սըանք խղճնում են։ Մեծ որդի ունիմ, նա էլ հաց է ուտում։ Ա՛ռ այս պարուսինը, թրջիր։ Իմ ձեռների բանն է սրա մզկը։

ՄԻՒՐՈՆ. Այ հացս ուտեմ։ Կ'անեմ։ ՇՄԻԼ. (քթումն է խօսում)։ Նստէք, էլի՛, Թոնդ։ Ի՞նչ էք շարունակ շտապում։ Ասում են ձեղ, որ կ'անեն։

ՈՈԶԱ. Իսկ ես չեմ ուզում։ Մենք նրանց սիրուչուննենք։ Ախար մեղքս է գալիս։ Միրոնի գլխիցը մազ վայր ընկնի, սիրտս կը ցաւի։ Այ, Միխելս դեռ զինուոր է։ Կնոջից, երկխաններից բաժանեցին խեղճին։ Պատեհազմն արդէն վերջացել է, իսկ նա դեռ նվ գիտէ ուր

է: Կինն ու երեխաները սոված մեռնում են, մնացել են մեր շնոքին: Իսկ գիշերները լաց լինողն ով է: Մայրը... Սրանք միայն կարող են... դեմոկրատ լինել... ԲԵՏԵԱ. (վերապանում է). Սոսինձը հիմա լաւ է: Թէ որ թողնեն գործի կենամ, երկու ժամից յետոյ կը վերջացնեմ: Ժամը քանի՞ն է: (Նստում է): Մէջը այնպէս է ցաւում, որ ուղղուել չեմ կարողանում:

ՈՒՌՁԱ. Բայց էլի չեմ կարող քեզ օգնել: Այդ իմ խելքի բանը չի: Չեռներս էլ դողդողում են: Կարտոնն առնում եմ ձեսս, շուռ ու մուռ եմ տալիս, է, ի՞նչ հասկանամ:

ԲԵՏԵԱ. Քեզ խնդրող չկայ:

ԷՐԾ. Դէ գնա, է: Դու միայն թրջիր պարուսինը, իսկ ես կը մգեմ: (Որոզան կամաց-կամաց, քստքստացնելով, դրվս է զնում):

ԲԵՏԵԱ. (աշխատում է). Այսօր գործադուլ են արել թէյարանումն ու խցանի գործարանում: Կ'ուզէի իմասնալ, թէ երբ մեղանում էլ պիտի սկսուի: Երբէք չի սկսուի: Մեր աղջկերքը մարդկէկ են որ: Անսառն են: Սւելի շուտ, կարծեմ, իմ մաղերը կ'սպիտակին, քան թէ մերոնք գիտակից կը դառնան:

ԷՐԾ. Կը խնդրէի, պատմութիւններ չանես գործադուլների մասին: Իմ տանը գործադուլների մասին քան չեմ ուզում լսել: Այ, որտեղս են հասել այդ բաները: Ինչ ուզում են՝ թնդ անեն, միայն թէ ես այդ չիմանամ: Դու ծիծաղնում ես, Միքոն: Աշխատում ես ու դարձեալ սոված մեռնում ես, ապա ի՞նչ կը լինի, եթէ չաշխատես էլ: Աստուած կեանք տայ Գրումանին մուշտակի համար: Մենակ նա է, որ էլի պահում է մեզ: ՄԻՒՐՈՆ. Բաւական է, հայր: Թնդ պատմի առ: Դու արդէն ապրել ես, իսկ մենք նոր ենք սկսում, Միթէ խօսքը մեր մասին է, սրա, քո՞ կամ ի՞մ: Խօսքը

վերաբերում է ամբողջ բանուոր գասակարգին, ամբողջ ժողովրդի բաղգաւորութեանը: Միթէ չես տեսնում ու չես հասկանում, թէ ինչ է կատարուում մեր չորս կողմը: (Շարունակում է ոտել):

ԷՐԾ. Զեմ հասկանում: Հասկանում եմ... Քո չափ գեռ խելք ունեմ: Իսկ եթէ վախենում եմ: Ո՞ւմնից հմ վախենում: Սատանաներից: Այդ բոլորիցը սատանայի հոտ է գալիս: Ով լինի-չլինի, վերջն էլի հրէաները պիտի իրանց արինովը պատասխան տան այս գործադուլների, այս յեղափոխութիւնների համար... Նրանց կը քցին կըակը... Ապա քո կեանքը վտանգի մէջ չի... Քեզ համար ախար գիշերները քունս չի տանում...

ՄԻՒՐՈՆ. Ուրիշներին հօ սպանում են: Ես ինչով եմ աւելի: Բայց հօ բանուոր գասակարգի համար կըտամ կեանքս:

ԷՐԾ. Դէ ասա ես պար գամ, էլի, որ բանուոր գասակարգի համար կեանքդ կը տաս: Լաւ ասացիր: Իսկ որդուս փոխարէն ինձ ի՞նչ կը տայ բանուոր գասակարգը: Արիւն կը թքեմ ես նրա երիսխն: Ի՞նչ պիտի տայ: Երասրկըները: Բայց եթէ զու քո ճանապարհովը գնայիր, ինչպէս ես, եղբայրութիւն չէիր անի ոռւսների հետ, փող կ'աշխատէիր ու քեզ համար էլ լաւ կը լինէր, մնդ համար էլ:

ՇՄԻԼ. Այ, այ, այ, էրշ: Այդ մէկն արդէն ծուռն էք խօսում: Այդտեղ կաղացիք:

ՄԻՒՐՈՆ (վեր է կենում). Մեր կոուի մէջ ոչ ոռւս կայ, ոչ հրէայ, այլ միայն բանուորներ և հարստահարողներ:

ԷՐԾ (Շմիլին). Ի՞նչ է նշանակում ծուռը, Շմիլ: Ցոյց տուէք, մըն է որ ծուռը չի: Միթէ մենք չենք աշխատել, չենք տանջուել ու չենք տանջուում: Բայց ասացէք, երբ է եղել, որ մենք ոռւսների հետ եղբայ-

ըութիւն անէինք: Դուք երբեցէ եղբայրութիւն արել էք սումների հետ: Փառք Աստուծոյ, յիսո՞ւն տարուց աւելի է ապրում ենք ու երբէք սումների հետ գործ չենք ունեցել: Ճիշտ է, մենք սումներիցն ապրանք ենք առնում, կամ՝ նրանք են մեզանից առնում, երբեմն հարևանութիւն ենք անում, բարով—Աստուծոյ բարին ենք ասում իրար, բայց այս հօ կապ չի: Նրանք առանձին են ապրում, մենք առանձին: Ել ի՞նչ էք ասում, Շմիլ: Ախար դուք հասակով մարդ էք: Թէ գուցէ այն բանին էլ էք հաւանում, որ հրէաները կսուսում են հրէաների հետ: Ի՞նչ: Ի հարկէ, հարուստ հրէային աղքատացնելուցն էլ լաւ բան կը լինի: Չեմ հասկանում, մեզանից ո՞վ է խելագարը: Խոկ սումների հետ հրէայի դէմ խօսքը մէկ անելն էլ լաւ է: Այդ հօ ասել է թէ աշխարհը տակն ու վրայ է եղել: Հիմա ձեզ եմ հարցնում, Գրոսմանի տեղը դուք ի՞նչ կ'անէիք, Շմիլ:

ՇՄԻԼ. Ես աչքս կը հանէի:

ԷՐՇ (սրտնեղած). Է՛, գուք հօ յայտնի խենթ էք: Չեզ հետ մարդու պէս խօսել չի լինի: (Միլոնին): Ա՛յ, ես պարոն Գրոսմանին խնդրեցի քեզ համար: Նա խիկի պատասխան տալ չուզեց: Անունդ լսեց թէ չէ բարկութիւնից գողում էր: Այս լաւ է, Միլոն: Մի գործ առողջ ունեմ, նրան էլ դու ինձանից պիտի հանես:

ՄԻՐՈՆ. Ինչու էիր խնդրում: Ախար դու պէտք է իմանաս, որ դրանք մարդ չեն, գաղան են: Ո՞վ է մեզ ըոլորիս խեղդել: Դրանք: Ո՞վ է մեզ ըոլորիս այսպէս խեղճ ու վախկոտ գարձրել ո՞վ է հարիւրաւոր տարիներ մեր ուղն ու ծուծը քամել: Դրանք... Ախար դու այս պէտք է իմանաս:

ԷՐՇ. Ճիշտ որ ասենք, գործատէրն ուրիշ տեսակ չի էլ կարող լինել:

ՄԻՐՈՆ. Մենք նրանց կը սովորեցնենք, հայր: Ար-

դէն անցել են այն ժամանակները, երբ որ կարելի էր գուր տեղը բանուորին ջարդել, փողոց չպրտել նրան, բանտ նստացնել, երբ տէրը կամենար: Ոչ, ոչ, հայր, ես չէի կամենայ հիմա Գրոսմանի տեղը լինել: Լաւ օրի է այդ մեծատունը, որ ստիպուած է կաշառել իւր բանուորներին, ոմանց շողոքորթել, ոմանց էլ հարցացնել... Բայց այդ էժան չի նստի նրան: Նա կրակի վրայ նաւթ է ածում:

ԷՐՇ. Լսում էք, է՛ր: Սա չէր կամենայ Գրոսմանի տեղը լինել: Իսկ քո տեղումը վիճակը աւելի՞ լաւ է: Ա՛յ, նա ջաղացը կը թողնի ու կը գնայ եւրոպա: Տեսնեմ, այն ժամանակն ի՞նչ կ'ասէր դուք: Դուք հիմա արդէն գործադուլի երսաից լեզուներդ կախ քցած էք ման գալիս, տպա ի՞նչ կը լինի, որ նա գնայ: Կը կոտորուեք ճանձի նման... (Մտնում է Ռոզան ու տնքալով նստում. գուզայ է գործում):

ՄԻՐՈՆ (ծիծաղելով). Գրոսմանն արդէն փորձել է վախեցնել քեզ, քեղանով էլ մեզ: Հասկանում ենք նրա խաղերը... Թէ դու կարող ես եւրոպա գնալ, նա կարող է: (Վեր է կենում տեղիցը): Դէ, ես գնում եմ. կը վերադառնամ ընկերներիս հետ: Գործի մասին խօսելիք ունենք:

ՌՈԶԱ. Ի՞նչ, էլի՞: Աւագակ... Այս ի՞նչ օրն ես քցում մեզ: Չեմ ուզում: (Հազում է): Չեմ թոյլ տայ: Ասա, կը ակն ընկնեմ քեզ համար,—կ'անեմ, հաւատացնում եմ: Բայց այդ,—չէ...

ՇՄԻԼ. Ա՛յ, այ, այ, թոյլա: Ինչու չէք թողնում, որ ջահէներն ապրեն: Զէ որ աշխարհն առաջ պիտի գնայ:

ՄԻՐՈՆ. Դու մի խանուի, մայր:

ԷՐՇ. Ես էլ կը խնդրէի քեզ, Միլոն,—պէտք չի: Թոյլ այսպէս լինի, պէտք չի: Հայրդէ խնդրում, Ուրա-

խացրու հօրդ։ Այնքան խաթր չունեմ, որ ինդիրս կատարես։

Մի՛րոն (բարկանում է)։ Ի՞նչ անեմ, գլուխս ձեր ուսերի վրայ դնեմ։ Մի խնդրիր ինձ, այդ ինձ չալացնում է։ Երբ աչք եմ ածում, թէ ինչ է կատարուռմ այժմ, մտածում եմ, թէ ինչ լաւ կը լինէր, եթէ չինէին ծերերն ու այն բոլոր զիրիլը, որ խանգարում է մեղ։

ՇՄԻԼ (ծիծաղում է)։ Մի բան եմ ուզում ասել, բայց յետոյ կ'ասեմ։ Ուրախ կաց, Միրոն... Մի վախնայ...։

ԵՐՇ (Ոռզային, տխուր)։ Մենք, Ռոզա, վաղուց պիտի մեռած լինէինք։

ԲԵՏԵԱ. Այդ նոր միաներդ ընկալու (Միրոնը դնում է զիխարկն ու դուրս է զնում)։

ՌՈԶԱ. (Շմիլին)։ Ձեր ինապու այդ չի լինի ես նստած եմ այստեղ և ամէն բան տեսնում եմ, ինչ որ լինում է աշխարհում։ Թողլ լինի։ Տեղիցս շարժուռղը չեմ... (Մտնում է դրացի պառաւ Չառնան. դանդաղ շարժուում է, շնչառապատ է լինում եւ դողում, կ'ասես ցրտից)։

ԶԱԲԻՆԱ. Ցնւրտ է, ցնւրտ է։ Ոսկըներս կ'ասես մըսում են։ (Փաթաթուում է ցնցոտիներով)։ Ասէք խնդրեմ, մի բաժակ թէյ կը ճարուի ձեղանում։ Շուտ ընկան ցրտերը, իսկ տանս ոչինչ չկայ։ Ոչինչից ոչինչ չկայ, ինչ արած։

ՌՈԶԱ. Ա՛յ, երշը վերջացնի, բետեային կ'ուզարկեմ թէյ պատրաստի։

ԶԱԲԻՆԱ. Ա՛յ, շնորհակալ եմ։ Մի բաժակ տաք թէյ, մի բաժակ տաք թէյ, Ոսկըներս տաքացնեմ։

ՇՄԻԼ. Ի՞նչ կայ ձեր փեսայի մասին։ Նամակ ստացել էք։

ԶԱԲԻՆԱ. Ի՞նչ, չոռ ու ցաւ ենք ստացել։ Ո՞վ է նամակի անուն տալիս, Աղջկանիցս ու երեխաներիցը հարցրէք. թէ չէ՝ նա այստեղ շառլատան էր, այնտեղ էլ այն է մնացել։

ՇՄԻԼ. Ապա որ Ամերիկայումն է։

ՌՈԶԱ. Մէծ բաղդաւորութիւն է, որ Ամերիկայումն է։ Ամերիկան էլ Ամերիկա չի։ Ամերիկայի անունն էլ տալու չի։ Պեսեայի մարդը չվերադարձաւ այնտեղից։ Բա թէյլայի մարդը։ Հրէաները կադրիլ են պար գալիս։ Մի զոյզը գնում է, մի զոյզը յետ է գաւթիս...։

ԶԱԲԻՆԱ. (կարծես ընի մէջ)։ Զեմ հասկանում, ինչո՞ւ եմ ապրում։ Վերև եմ մտիկ անում ու հարցնում եմ, Պատասխան չկայ։ Թէ որ ոչինչ չեմ հասկանում, հոգիս առնելու ժամանակն է, այսպէս էլ մտածում եմ։ Աչքերիս առաջին մի բան է թռչում։ Դանակներ են պաղպում։ Մի բան թռչկոտում է, պարում է, գոռում է, ևս էլ եմ գոռում, չորս բոլորքս գոռում են։ Խենթ աշխարհ։ Մի բաժակ թէյ կը լինէ ձեղանում։

ՌՈԶԱ. Ախար ստացի ձեզ. այ, երշը գործը վերջացնի...։

ԶԱԲԻՆԱ. Հա, հա, ստացիք... Հա, հա, խոստացաք դուք...։

ՇՄԻԼ. Պէտք է ասել, ինչպէս որ ջանէլներն են ասում. եթէ մահը խեղդէր հարուստներին և այս անին ծուած քաղաքը կործանուէր, Զառնան հիմա նստած կը լինէր իր տանը, լաւ սենեակում, և նրա սեղանի վրայ սամովարը եռալիս կը լինէր, —այ, այսպիսի սամովար։

ԲԵՏԵԱ. Ի՞նչո՞ւ միայն հարուստներին և միայն մի քաղաք...։ Կրակ ու բոց թափի բոլոր քաղաքների վրայ։ Իսկ հարուստները։ Սրանք գեռ կարծում են, թէ միայն

հարուսաներն են մեղաւոր: Գրքին մտիկ տուէք, կ'իմանաք: Ուրիշներն էլ կան և էլի շատ ու շատ ուրիշները...

ՌՈԶԱ. Ես կամենում եմ, որ սա ձայնը կտրի, է՛րշ: Է՛յ, լողլող ձի, սուս կաց: Քո գործը չի...

ԲԵՏԵԱ. (ծիծաղում է). Մենք ոչ ոքից չենք վախենում:

ՌՈԶԱ. (բարկանում է). Քոսոտ եարու: Մի կաթիլ արիւն չկայ երակներումդ, էլի մէջ ես ընկնում: Ի՞նչ: Ծիծաղում ես: Սև ու սպին ծիծաղես: Ի՞նչ ես սուս կացել, է՛րշ: Լաւ հայր ես: Այդ լուռթիւնովդ սիրեիրական կը դարձնեմ որդոցդ:

Է՛ՐԾ. Ես ի՞նչ կարող եմ անել:

ՌՈԶԱ. Ի՞նչ: Դեռ հարցնում էլ է, կոիւ արահետը. փայտ վեր կալ, աւելը, ութուն, ու գլխովը տուր: Ասում եմ ձեզ մի հետ. սոված կը մնամ, կը տանջուեմ, կը չարչարուեմ, բան չունեմ ասելու: Միլում եմ հարուսաներին ու պատուում եմ նրանց, և դոք ի՞նձ չէք փոխի...

ՇՄԻԼ. Այ, այ, այ, Ռոզա... Գլուխներդ այդ ինչեր էք մացըրել:

ՌՈԶԱ. Դուք որ սուս կացէք, Շմիլ, Դուք հօյայտնի խենթ էք: Ո՞վ է խօսում. դուք մեծատուն էք, ի՞նչ է, թէ զինուորներ ձեզ են պաշտպանում, որ մէջ էք ընկնում: Կօշկի տակեր քցէք, ձեր կօշկակարի երգերը երգեցէք ու ձեր հալովը վէր ընկէք:

ԲԵՏԵԱ. Ի՞նչու սա չխօսի, քանի որ հիմա պատերն էլ են լեզու եղել: Մենք բանուորներս մի բան գիտենք — ամէն բան մերն է: Տէրը մենք ենք և ոչ թէ այն կաշի քերթող հարուսաներն ու ուրիշները և մէկէլ ուրիշները...

ՌՈԶԱ. Ի՞նչ ես սուս կացել, է՛րշ: Միսար սա

աղջկէ: Սատանայ է սա: Սրա աչքերին մտիկ արա: Պաղպում են աւազակի աչքերի պէս: Սա մարդ կարող է մորթել:

ԲԵՏԵԱ. (ծիծաղում է). Ապա թռղ ի՞նձ բարկացնեն, աւելի վատթարն էլ կ'անեմ: Ի՞նձ հետ հանաք անել չի լինի... Այս սիրալ բարախում է..., ճշմարտութեան, արդարութեան համար... և այնպիսի ատելութեամբ է վառուած...

ՌՈԶԱ. Է՛րշ, սրա մազերը չպիտի՞ պոկես:

ԲԵՏԵԱ. Փորձիր, տես... (Մօտենում է բանուոր Դաւիթը),

ԴԱՒԻԹ. Բարի իրիկուն, է՛րշ: Բարի իրիկուն: Ասում են, այսօր ձեզ մօտ էլի պիտի հաւաքուեն, համ: Է՛ՐԾ. Ես նրանց պահապանը չեմ ու ոչինչ չգիտեմ: (Հանում է ակնոցը, զործը յետ է դնում): Բետեան, գնա, թէյ պատրաստիր: (Բետեան վերցնում է թէյստաններ ու դուրս է գնում):

ԴԱՒԻԹ (նստում է, ճակատը տրորում է): Բոլորովին շշմել եմ: Գործադուլ են սարքել, դէ արի սնված մնա: Բայց ինչու էին գործադուլ անում: Օրական ստանում էին մինչև մի ոռելի: Դէ ստանում էին... Բա ի՞նչքան են ուզում: Քսան:

ՋԱՌՆԱ. (կարծես ընի մէջ). Ի՞նչ գործադուլ: Ի՞նչ ասել է գործադուլ:

ԴԱՒԻԹ (արագ դատնում է նորա կողմը). Է, ասել է: Սատանան իմանայ, թէ ինչու են ոտի կանգնել: Հէնց սկզբիցը ես չէի ուզում, բայց դէ արի դրանց հակառակ գնա: Եւ ով է մեղաւորը: Ելի ձեր Միլոնը, է՛րշ: Բանուոր դասակարգը մի կողմը, հարստահարութիւնը մի կողմը, իսկ ես դեռ որ սոված եմ մնում: Ի՞նձ նման կօշտ ու կոպիտ հասարակ մարդը, որ չի կարողանում հաշուել, թէ երկուս ու երկու քանի կ'ա-

նի, պիտի իմանայ թէ այդ խօսքերն ի՞նչ են նշանակում: Կարծես էլ ուրիշ հոգս ու ցաւ չունեմ:

ՌՈԶԱ. Այ, մարդ եմ ասել:

ԴԱԼԻԹ. Բա ի՞նչ է, ձի՞ եմ: Ես չեմ ամաչում, որ հասարակ մարդ եմ: Իմ մանէթը տուէք ինձ ու պրծաւ գնաց: Կնկայ տէր եմ, տունս լիքը երեխէք: Հիմա ով եմ ես: Ոչ ոք: Երէկ մարդ էի, իսկ այսօր մուրացկան: Ի՞նչո՞ւ պիտի այսպէս լինէր:

ՌՈԶԱ. Ի հարկէ: Օրը մի ոռւբլի՝ շաբաթն անում է վեց: Եւ եթէ մարդ շառլատան չինի, հարբեցութիւն չանի ու բիլիարդ չխաղայ, դեռ մի կերպ ապրել կարելի է:

ԴԱԼԻԹ. Ասենք, այդ շատ չի, խօսքը մեր մէջ լինի: Է՛, ի՞նչ էք ասում: Ի՞նչպէս ենք ապրում մենք: Ես ու կինս որ երազում ենք բան ուտում: Ա՛յ ահանում էք, այս իմ ամենալաւ ըլուզն է: Ուրիշը չկայ: Պարաքերով ենք գլուխ պահում: Խանութպանին պարտ եմ, աանտիրոջս պարտ եմ, կօշկակարին պարտ եմ: Ել ժրանեղ մնայ գործադուլը: Ուզում էք, որ բանթող լինեմ, գրողի բաժին լինէք, դէ օգնութիւն արէք: Թէ չէ ի՞նչ էք տալիս իմ ընտանիքի պէս ընտանիքին. օրը յիսրւն կուլէկ:

ՇՄԻԼ. Այդքանի համար էլ գնհ եղէք:

ԴԱԼԻԹ. Դուք գնհ եղէք... Լաւ խորհուրդ էք տաւ իս ինձ, կարգին փոր կը կշտացնի: Յիսուն կոպէկի լաւ է խեղդուելու պարան առնեմ բոլորիս համար... Երեխէքս խողերի տաշտի միջին են հացի կտորների ման գալիս... Սոսացայ ձեզ ասեմ: Ախար իմ փոքրիկին քիչ էր մնացել շունն ուտէր: Շունը վրայ էր եկել ու սկսել էր կրծել նրան: Ի՞նչ է, շունն ուտել չի ուղում:

ՇՄԻԼ. Դէ, հետներդ նրան էլ սեղան նստացրէք ու միասին հաց կերէք:

ԶԱՐՄՆԱ. Իսկ ես աղբի միջից ոսկրներ եմ հաւաքում ու կերակուր եմ եփում:

ԴԱԼԻԹ. Դուք ինձ վրայ ծիծաղնւմ էք: Ախար արիւն է, որ խօսում եմ: Միթէ ես կարող եմ կսիւ անել Գրոսմանի հետ: Մի ինձ մտիկ արէք: Կենդանի մեռել եմ, բանս պրծած է: Ես էլ կոռուզ եմ: Ապա ուրիշներն ինձանից լաւ են: Կոռուզներն ով են: Գրոսմանն ուղենայ՝ ճիճուի պէս կը արորի մեղ:

ՌՈԶԱ. Ու կը արորի էլ: Այ, թնդ իմ երջն ասի, հերիք է բանենք: Եկէք դերձակներս դործադուլ անենք...

ՇՄԻԼ. (ընդհատում է նրան). Այդ այնքան էլ վատ չէր լինի:

ՌՈԶԱ. Լեզուդ չորանայ: Դուք մեզ կը կերակըք: Հարժւստ էք տեսել մեզ: Այ, Միքոնը չի բանում, ով է նրան հաց տուղը: Հայրը: Ո՞րտեղ է քնում: Հօր տանը: Միւս բանուորներն ի՞նչ են անում: Տզրուկի նման իրանց աղքատ ազգականների արիւնն են ծծում:

ԴԱԼԻԹ. Իսկ Գրոսմանը ման է գալիս կառէթով, գետինը մանի՛ տեսնեմ: Մի-մին որ պատահում է, ջաղացն է գալիս, պատերն էլ են ահու դողում, այնպէս մարդ է: Ապա թնդ նրա մօտին մի պարկ պատուի, մի ֆունտ ալիւր թափուի, մահներս կը տայ: (Մտնում է Բետեան, թէյսմանը ձեռին):

ԵՐԾ. Ի՞նչ եղաւ քեզ:

ԲԵՏԵԱ. Ի՞նչ ես շտապում: Փամանակ կ'ունենաս: Ա՛ռ, մայրիկ, թէյամանը: (Բետեան նստում է բանի: Մողան հազրում է, վեր է կենում, բաժակներ է հանում փոքրիկ պահարանից, թէյ է ածում երշի եւ Զառնայի համար):

ՌՈԶԱ. Թէ թէյ ուզում էք, Շմիլ, ածէք ձեզ համար:

ԶԱՌՆԱ. Օ՛, թէյ: Շնորհակալ եմ, Ռոզա: Հողիս
փառաւորուեց տաքութիւնիցը: Շատ շնորհակալ եմ:
(Մտնում է բանուոր Աննը: Խիտ սեւ մօրուք: Նա-
յուածքը աչքի տակիցը):

ԱՌՆ (Դաւթին). Դու արդէն այսամեղ ես: Կը-
հաւաքուե՞ն այսօր:

ԴԱՒԻԻԹ (ակամայ). Չեմ իմանում... Ինձ մի
հարցնի...

ԲԵՏԵԱ (բարկութեամք). Կարող էիք չգալ այս-
տեղ, ԱՌՆ... Կը հաւաքուե՞ն, չե՞ն հաւաքուի, ձեր գոր-
ծը չի: Առանց ձեզ էլ կը կասավարուե՞ն: Գնացէք, ա-
ւելի լաւ է Գրոսմանի ոտները լիդէք:

ԱՌՆ. Ի՞նչ է նշանակում Գրոսմանի ոտները լի-
դէք: Դուք տեսե՞լ էք:

ԲԵՏԵԱ. Ցիմար մի ձևանաք, մենք այդ հասկա-
նում ենք: Դիո բանուոր է, ընկեր է...

ԱՌՆ, Բանուոր եմ ու ընկեր: Իմացէք: Բա ի՞նչ
է, միլիօնատէ՞ր եմ:

ԲԵՏԵԱ. Դրանցով բան չի դառնայ: Բոլորն էլ
զիսեն, որ դուք գալիս էք բան իմանալու, յետոյ էլ
յայտնում էք Հերմանին: Դրա վերջը վատ կը լինի...

ԱՌՆ. Ի՞նչ էք ինձ վախացնում: Միթէ ես մատ-
նութիւն եմ անում: Նրանք հնարել են իմ մասին:
Բանուորները բարկացած են, որ ես օրական ուժսուն
կոպէկ չեմ ստանում, այլ մի ոուրլի: Այս է իսկու-
թիւնը: Իսկ եթէ ես ուրիշներիցն աւելի եմ ստանում,
այն է ամէն պակասութիւն էլ կայ ինձ վրայ: Ինչո՞ւ
չէք ապա հարցնում, թէ ի՞նչո՞ւ եմ աւելի ստանում:

ԴԱՒԻԻԹ. Այդ մի ասիր: Մենք բոլորս էլ լաւ ենք
բանում:

ԷՐԾ. Թողէք, խնդրում եմ: Կոռեկու համար փո-
ղոցը գնացէք:
ԲԵՏԵԱ. Փոկ այն ում են տեսել Հերմանի յետևի
դուանը:

ԱՌՆ. Ես ի՞նչ անեմ: Որ կանչել էին, պէտք է
գնայի: Եւ ինչո՞ւ պիտի պահեմ, որ ես գործադուլի
հակառակ եմ: Ես միշտ հակառակ եմ եղել այդ անի-
ծուած գործադուլներին: Մեր տէրը մեզ հաց է տալիս,
մենք էլ պարտական ենք հաւատարիմ ծառայելու նը-
րան: Անցած տարի երեխաս հիւանդացաւ: Ո՞ւմ շնորհ-
քըն էր, որ նրան հիւանդանոց ընդունեցին: Հերմանի:
ԲԵՏԵԱ, Ի՞նչքան է նա խոստացել ձեզ ձեր ճա-
ռերի համար:

ՃՄԻԼ. Ա՛յ, այ, այ, ԱՌՆ: Որ սկսուել է՝ չոփի
պէս կը սրբի, կը ատանի ձեզ: Ի՞նչ էք քամու դէմ կանդ-
նում, երբ փոթորկիկ է բարձրացել:

ԴԱՒԻԻԹ. Ա՛յ, հէնց այդ էի ուղում ես ասել, Շմիլ:
Գործադուլին հակառակ ես, հայնոյում ես, բայց էլի
մի բան ձգում է: Փողոց ես դուրս գալիս, — այստեղ
գործադուլ, այստեղ գործադուլ: Օղումն ասես մի լաւ
բան կայ, ու մատածում ես. միթէ ես մարդ չեմ: Բայց
տանը, երբ որ տեսնում եմ այնքան երեխաներիս սու-
ված, այն ցածլիկ սենեակը, որի պատերից միշտ ջուր
է թափուում, այն արտասունքն ու անէծքները, վհա-
տում եմ:

ԱՌՆ. Որովհետեւ դու յիմար ես: Մարդ պէտք է
զլխումը խելք ունենայ: Այդ մրտեղ ես դու լաւ բան
տեսնում: Խոսվութեան մէջ: Գրպանները կը կոխեն
այդ խոսվութիւնը:

ԷՐԾ. ԱՌՆ բաժակս, Ռոզա: Նստեմ բանելու:
ՌՈԶԱ. Դէ հանգստանայիր, էլի՛: (Վերցնում է

Նրա բաժակը: Դաւթին): Առնը ուղիղ է ասում: Է՞ս, վերջներս լաց է: Մեր սկ օրը պիտի լաց լինենք: Դևիթ (Բետեային). Դէ ի՞նչպէս իմանամ, Բետեա, թէ ի՞նչ պէտք է անել: Լսում եմ սրա ասածներն ու սկսում եմ տատանուել: Իրաւ, ի՞նչով պիտի այս վերջանայ: Տեսնում էք. և՛ կամինում ենք, և՛ վախենում ենք:

ԲԵՏԵԱ. (Վեր է կենում զայրացած): Իսկ ես կամենում եմ, որ սա հեռանայ այստեղից: Հէնց իսկոյն: Դէ, Առն, դուքս այստեղից: Եւ զգոյշ կացէք: Միրոնն ինձ ասել է, ով է այս կեղտու գործի գլուխը: Հասել է ժամանակը, երբ բանուորները գիտակից են դառնում, և անա մէջ են գալիս ստոր մարդիկ, որ փշացնում են բանուորի գործը: Կարող էք ասել Հերմանին, որ այս էժան չի նստի նրան: Կարծում է, թէ եթէ կարելի է ձեզ պէս ստորներին կաշառել, բանուորներն ուրեմն կը հրաժարուեն իրանց պահանջներիցը...

ՈՂԶԱ. (Հրշին). Ուզում եմ տեսնել, թէ ի՞նչպէս կը փակես դու սրա բերանը: Գոնէ մի անգամ ցոյց տուր:

ԵՐԾ (Վոայլ). Հանդիսատ թողէք ինձ: Լացս գալիս է. մի տանջէք ինձ:

ԱԲՆ (յանկարծ վեր է կենում): Լաւ, լաւ, միտս կը պահեմ ձեր խօսքերը:

ԲԵՏԵԱ. Կարող էք գրել էլ: Միտս կը պահեմ: Դուքս գնա այստեղից: Դուքս, դաւաճան, մատնիչ, սահը... Ազատեցէք, մահներդ կը տեսնէք:

ԱԲՆ (դրան մօտ կանգնած): Տեսնենք՝ ով (Դուքս է զնում):

ՇՄԻԼ. Այ, լաւ էր, լաւ լուացիր նրան: ՈՂԶԱ. Է՞ս, կիանք է, էլի՛... Երկելի՛ կիանք (Շմիլը

ծիծաղում է): Այ, չոռ ու ցաւ քեզ (Հազում է): Մաղձս խառնուում է այդ ծիծաղից:

ՆԱԽՄԱՆ (մտնում է. քէֆով է: Կոպիտ ծայլով): Է՛, բարի իրիկուն: Լաւ անձրե է գալիս դրսեւ: Ապրիւն որ այսպէս անձրե գար, կ'ասէին՝ բերքը լաւ կը լինի: Իսկ ինձ համար մէկ է:

ՈՂԶԱ. Տես. արդէն հարբած է... Գրողը տանի քեզ, հա:

ՇՄԻԼ. Քցել ես, հա, արդէն, Նախման:

ՆԱԽՄԱՆ. Ինչու չքցեմ: Ինձ համար մէկ է:

ՈՂԶԱ. Գնա, քնիր, գնա, այ դարդ ու ցաւ...

ՆԱԽՄԱՆ. Թո իսադու պիտի նստեմ այստեղ: Ինձ համար մէկ է:

ԵՐԾ (կամաց). Գնա, քնիր, Նախման: Դու գոռագոռում ես, իսկ մենք պէտք է աշխատենք:

ՆԱԽՄԱՆ (ըրբոքուած խիում է կրծքին). Իսկ ես չեմ աշխատել այսօր: Այս ուսերովս հազարաւոր փութ բան չեմ կրել: Չեմ սատկում շան նման: Է՛, փութ բան չեմ կրել: Չեմ սատկում նման: Ինչ անեմ, սղբամ: Օրս մի օր չի: Քաղաքումը հօ մարդ կը խեղդուի... Ի՞նչ արած, սուս եմ կենում... Գուցէ ուրիշների նման ես էլ կ'ուզէի աշխարհ տեսնել: Գուցէ գետինն եմ կրծում: Մէկին դանգատուննեմ եմ: Ինձ համար մէկ է... Այ, քառասուն կոպէկ է մնացել ձեռիս: Առ իմ քառասուն կոպէկը:

ԵՐԾ (կամաց). Պէտք չի: Թո՞ղ քո ձեռին մնայ:

ՆԱԽՄԱՆ. Գուցէ ես էլ էի ուզում ուսում առնել: Բայց անասուն պիտի մնամ: Յետոյ... Է՞ս, ինձ համար մէկ է:

ՈՂԶԱ. Ի՞նչ ասել է պէտք չի: Առ ձեռիցը: (Նախմանին): Ինձ տուբ փողը:

ՆԱԽՄԱՆ (նրան է նայում): Այ, քեզ չեմ տայ, ինձ ուսումնարան ուզարկել ուզում էիր: Հէնց այն էիր

ասում, թէ՝ գնա, աշխատիր: Եւ հիմա ևս անասուն եմ: Քեզ փող չեմ տայ:

ՈՌՉԱ. (լալիս է). Աստուած քո հոգին առնի, տեսնեմ...

ՆԱԽՄԱՆ. Հեսց այն է Աստուած լսեց քեզ, ի՞նչպէս չէ... (Դնում է վէպի դուռը: Ներս են մտնում ջաղացի բանուորները, ոռաներ ու հրէաներ, բարեւում են ու նստուում՝ ո՛վ ո՛լուել համուտ է, նսկմանը դիտում է նրանց):

ՆԱԽՄԱՆ (ծիծաղում է). Դեմոկրատներ... (Լացարկնած ծայնով, շատ բարձր): Դեմոկրատներ... (Չեռը թափ է տալիս): Իսկ ինձ համար մէկ է: (Դուրս է գնում դէպի խոհանոցը):

ԵԱԿՈՎ. Հը, քեզի երշ. ձեր Միբոնը մըտեղ է: ԷՐԾ. Միբոնը: Շուտով կը գայ: (Զառնան տեղիցը վեր է կինում, մի թշուառացածի հայեցք է ըցում բանուորների վրայ եւ դանդաղաբայլ դուրս է գնում):

ՍՏԵՓԱՆ. Իօսիֆ, թութուն ունեմ: ԻՕՍԻՖ (առանց նայելու տալիս է նրան մի դեղին կլոր տոսի): Առ: (Բանուորները ցած ծայնով խօսում են իրար հատ: Մտնում է Մանեան, նիհար, բարձրահասակ կին):

ՄԱՆԵԱ. Բարի իրիկուն: **ՈՌՉԱ.** Բարի իրիկուն, Մանեա, Նստեցէք կողքիս: (Մանեան նստում է): Ի՞նչ կայ ձեզանում. քրոջդ մօտ գնացիք:

ՄԱՆԵԱ. Ես: Սատանան տեսնի նրա երեսը: Իմ Դինոչկային էի ուղարկել նրա մօտ: Եւ ի՞նչ. կարծում էք, լնդունել է նրան: Բկումը մնայ այն կտոր հացը, որ մեզ պիտի տար: Կարծում էք, սենեակներն է ներս թողել: Այնպէս ապրի աշխարհի երեսին: Իմ Դինոչկային ընդունել է... գիտէք որտեղ: Հաշտումը...

ՈՌՉԱ. Այ, նրա օրը հաշտերումն անց կենայ: **ՄԱՆԵԱ.** Հաշտումը. իմ Դինոչկային հաշտումը: Կարծում էք, թողել է որ խօսի: Զի թողել, որ բերան բաց անի: Գոռգոսացել է: Կարող էք երեակայել, թէ բաց ինչպէս գոռգոսալ գիտէ իմ բարի քոյրը. այ, նրա բոլովէս չորանայ, և ի՞նչպէս վախեցել է երեխաս: Այնպազը չորանայ, և ի՞նչպէս վախեցել, որ քիչ է մնացել ուշը գնայ:

ԻՕՍԻՖ (ականջ է դնում, բաղարավարի): Գուք, կարծեմ, ափկին Գրումանի մասին էք պատմում:

ՄԱՆԵԱ. Տիկին Գրումանի մասին եմ պատմում: Բան չկայ, Ռոնզա. հիմա ևս կը գնամ նրա մօտ: Ուժնդ իմ անունը Մանեա չինի, թէ որ նրա բոլոր պատուհանների ապակիները ջարդ ու խուրդ չանեմ:

ԵԱԿՈՎ. Պէտք է: Շատ լաւ կը մինի, որ ոչ մի հատ ապակի չմնայ անվաս: Դեռ քոյր է հաշտում... Այ քեզ քոյր... (ծիծաղում է):

ՍՏԵՓԱՆ. Ապա ասում են, թէ հրէաներն իրար պաշտպան են:

ՄԱՆԵԱ. (վրայ պըծած մօտենում է Ստեփանին). Ես ձեզ ասեմ, Ստեփան ջան... (Բոնում է նրա նին). Ես ձեզ ասեմ, Ստեփան ջան... (Բոնում է նրա մօրութիցը): Նա քոյրս է, բայց ես աղքատ եմ: Ի՞նչ անենք: Միթէ ձեր միջին այնպէս չի լինում, որ մէկը հարուստ է լինում, միւսը աղքատ:

ՍՏԵՓԱՆ. Ի՞նչ ասել կ'ուզի:

ՄԱՆԵԱ. Է, բան չկայ, Աստուած է այդպէս կամեցել: Աստուած բարձրումն է նստած ու ամէն բան տեսնում է, և աւելի լաւ գիտէ: Բայց մարդ եղիր: Լաւ, բայց քոյր եղիր... Ի՞նչ է, երկուսիս արիւնը մէկ չի:

ԵԱԿՈՎ. Ուղիղ է: (Աչքերը ճպճպացնում է): Մի խօսքով արենակից էք:

ՄԱՆԵԱ. Իսկ նա այդ չի ուզում իմանայ: Իմ

մարդը նրա մարդու ջաղացումն է բանում։ Նա դեռ այստեղ չի, բայց հիմա կը գայ։ Նա կը գայ։ Չեզ եմ հարցնում, Ստեփան ջան, պէտք է ինձ օգնել թէ ոչ։ Այ, նրա ամբողջ կեանքի բաժինն այն մնայ, ինչ որ նա ինձ է տուել մինչև հիմա։ Ի՞նչ։ Ինչու էի ընդունում։ Բա ի՞նչ պէտք է անի աղքատը։ Երբ որ տալիս են, առնում է։ Բայց հիմա, Ստեփան ջան, հիմա... Այսպէս ժամանակ, այսպէս փորձանք... Լաւ, քոյլ մի լինի, հօրաքնյը եղիր, ամենահեռու աղդական եղիր, բայց մի օգնութիւն արա։ Զէ, քո մարդը գործադուլի մէջ է։ Բա որտեղ լինի։ Գետնիք մէջ։ Չինի էլ, ոչ դուք կ'սպանէք նրան։ Ճիշտ է, Ստեփան ջան, դուք կ'սպանէք նրան։

ՍՏԵՓԱՆ (ազատում է մօրուքը). Սպանելը չենք սպանի, բայց ճակատն էլ չենք պաշի։

ՄԱՆԵԱ (ուրախացած). Այ, տեսնում էք, ես նրան այդ ասացի, իսկ նա դուքս արեց։ Երեխային ուղարկեցի այսօր նրա մօտ, նրան էլ է դուքս արել Ո՞ւմ։ Իմ Դինոչկային։ Իմ Դինոչկան նրա օրիորդներիցը լաւ է։ Կարծում էք, թէ չէ, Մէկը նստած է լղար, չորչսկի, ու նայում է մարդու երեսի գժի աչքերով։ Միւսին էլ փառք Աստուծոյ, մարդն է տանիցը դուքս արել ի հարկէ, դուքս է արել։ Դուքս է արել, դուքս է արել... Աստուծ սուս չի կենայ...»

ԻՕՍԻԹ. Դուք բոլորովին հանգիստ կացէք։ Մենք նրանց հիմա լաւ հուզ կը տանք։

ԵԱԿՈՎ. Այնպէս, որ հոգիքը բերաններիցը դուքս դայ...»

ՄԱՆԵԱ. Թող դուքս դայ։ Նա ասում է, թէ բանուորներն իրան քանդել են ու դրա համար էլ չի կարող օգնել... Գործադուլը նրանց վրայ արդէն տասը հաղար է նստել... Բայ չկայ, դեռ այնքան կ'ապրեմ,

որ նրան մուրացկան տեսնեմ։ Տանուորները տարհեկան քսանուհինդ հազարի ծախս են պահանջում։ Յիսուն հազարի պահանջէք։ Առաջինը ես կը գոռամ։ Խեղդեցէք դրանց, նզովածներին։ Դրանց կաշին քերթէք, ինչպէս որ իրանք մերն են քերթում։ Անձնատուր չըլինէք։

ԵԱԿՈՎ. (վեր է կենում)։ Վեր կենայինք բոլորս էլ ու գնայինք ջաղացը...»

ՍՏԵՓԱՆ. Այն օրը Հերմանն իր մարդկանց ձեռովք նրին փող էր ուղարկել, նրին ընծայ։ Մերոնց էլ հարբացրել էր։ Այ, այսպիսով կապը քանդուում է։ Չերոնք փող են սիրում, մերոնք էլ խմելու սէր ունեն։ Դէ արի, մի գայթակղուի։ Բայց ես, ես պատրաստ եմ. մորթեն էլ ինձ, յետ կանգնողը չեմ։ Ասա, արի, արադի պատի։ Եմ անում, ատամներդ կը թափեմ. բա...»

ԻՕՍԻԹ (խօսում է դէմ առնելով)։ Թողլ տուէք, մի բան էլ ես ասեմ։ Մի փոքր խօսք եմ խնդրում։ Ինչնի է, օրինակի համար, խեղճ բանուորը մեղաւոր, որ առաջ վախենում է, յետոյ՝ փող է ընդունում, վերջն էլ համաձայն է լինում մատնելու։ Հը՛, Աղքատ է, տգէտ է... Ուտել է ուզում նա։ Խեղճը շաբաթը մի անգամ է միս ուտում, այն էլ՝ ամենասպէտք, որդնած միս Խեղճը հոգսերից աչք չի բաց անում. հագին շոր չկայ։ Քո կօշիկները, օրինակ, Ստեփան, բանի նման են, Զէ, ուզիղն ասա, Կօշիկներդ բանի նման են։

ՍՏԵՓԱՆ. Ես այս կօշիկները իսկի նոր տեսել եմ որ... Այ կօշիկներս... (Յոյց է տալիս։ Բանուորները ծիծաղում են)։

ԵԱԿՈՎ. Ո՞վ է տեսել Գրոսմանի կօշիկները։

ՄԵԿԻ. Հերմանի կօշիկները կոճակներով էն։

ՍՏԵՓԱՆ. Նրանց խօհարարուհին պատմում էր,

որ օրական տասներկու գունա հրէի մորթած միս են առնում, բոլորը լափել չեն կարողանում, շներին են տալիս:

ԲԵՏԵԱՆ. Մի վախենաք. նրանք արդէն խոզի միս էլ են ուսում:

ԻՕՍԻԹ. (պլողելով). Հա, այն էի ուզում ասել:

ԷՇ. Հեղձ բանուորը գոչոտ, սոված...

ԷՐԾ. Հերիք է, հօսիփ: Զեռներս սկսեցին գուզու:

ԻՕՍԻԹ. Իսկ այդ գողալուց բանուորի գրութիւնը կը լաւանանայ: Թողէք խօսեմ, է՛րշ: Ես դեմոկրատ եմ և խօսում եմ խեղճ բանուորի գրութեան մասին: Եւ ոչ չի կարող ինձ կանգնեցնել, որովհետև ես մեր բանուոր դասակարգի բարին եմ ցանկանում: Իսկ ինչու կարող են նրանք սրիկայ լինել: Խեղճ բանուորին այնպէս են ոտի տակ տուել, սխմել, որ աչքերը գուրս են պրծնում:

ԵԱԿՈՎ. Ուզիդ է, հօսիփ: Վրայ տուր...

ՍՏԵՓԱՆ. Դու, քեռի էրշ, սուս կաց: Մի քիչ համբերիք:

ԻՕՍԻԹ. Ո՞րտեղ մնացի: Հա, ես ասում եմ, խեղճ բանուորին... Երբ որ նրան փող են տալիս, կարմդ է ասել՝ փող չեմ ուզում: Կամ երբ որ նրան արադ են համեցէք անում, կարող է ասել՝ արադ չեմ ուզում: Ի հարկէ, նա չպէտք է այդ անի, բայց ախար դեռ նա չի գիտակցում: Ուրեմն ով է այստեղ մեղաւորը: Էլի Գրոսմանն ու իր Հերմանը: Ա՛յ, այս էի ուզում ես ասել...

ՈՒԶԱՆ. Դեռ Գրոսմանի ոտներն էլ կը պաչէք: Սպասեցէք, իօնիփ: Այդ հասարակ մարդ չի: Այդ Գրոսմանն է: Այդ թագաւոր է... Տասն այդպէս Գրոսման քաղաքիցն հեռանայ, մենք բոլորս էլ մեռած ենք:

ՃՄԻԼ. Ա՛յ, այ, այ, և այ, այ, այ... (Մանում են Միքոնը բանուորների հետ եւ հարեւամներ: Սրանց մէջ է Աբրամը, Մանեայի ամուսինը):

ԻՕՍԻԹ. Ա՛յ, ընկեր Միքոնն էլ եկաւ... (Դուքս է զալիս առաջ, Բանուորները ցրջապատում են Միքոնին: Աբրամը մօտենում է Մանեային):

ԱԲՐԱՄ. Դու այստեղ ի՞նչ ես անում: Առանց քեզ էլ կը կառավարուեն: Տղւն գնա:

ՄԱՆԵԱՆ. Հէնց այն է գնացի: Ես էլ եմ ուզում լոել:

ԱԲՐԱՄ. Քո բանը չի: Երբ որ գամ, կ'իմանաս: ՄԱՆԵԱՆ. Իսկ ես մնալ եմ ուզում: Ուզում եմ տեսնել, թէ ինչպէս պիտի թաղեն Գրոսմանին: (Մի իսումը բանուորներ ծածկում են նրանց):

ԻՕՍԻԹ. Ընկերներ, խնդրում եմ, բոլորդ էլ նըստէք: Ընկեր Միքոնը կամենում է խօսել: (Միքոնը բաժանում է նրանցից եւ սկսում է խօսել շատ պարզ, ոչ բարձր եւ ոչ ցած: Բանուորները լսում են ասելի ու աւելի լարուած ուշադրութեամբ. ընդհատում են շարժումներով, բացազանչութիւններով: Բետեան գործը թողնում է եւ կանգնում նրան մօտիկ: Էլրշը հանում է ակնոցը, մօտենում է դումն ու մոտու այնտեղ):

ՄԻՔՈՆ. Ես կամենում եմ սկսել...

ՈՒԶԱՆ. (ընդհատում է նրան), Իսկ ես չեմ ուզում այստեղ լինել: Իմ որդին... Թու ձեր երեսին: (Թօռում է), Սիբիրական էք բոլորդ էլ: (Դուքս է զընում: Ցետենիցը ծիծաղում են):

ՄԻՔՈՆ (Ժպտում է). Նա գեռ վախենում է... Այսպէս ուրիշներ, մենք ժողովուել ենք այստեղ մեր գործերը քննելու համար: (Բացազանչութիւններ): Մենք բոլորս գիտենք, որ Գրոսմանն այլևս ոչ մի բանի արոլորս գիտենք,

ուաշ կանգ չի առնում մեր գործադուլը ոչնչացնելու
համար:

ԻՕՍԻԹ. Մի փոքր խօսք եմ խնդրում...
ԵԱԿՈՎ. Սպասիր, իօսիփ:

ՄԻՐՈՆ. Հարցնում եմ, ընկերներ, ի՞նչ կը լինի,
եթէ Գրոսմանը յաղթի:

ՍՏԵՓԱՆ. Յայտնի է, թէ ինչ կը լինի. պլիներիս
պոպոք կը ջարդի:

ՄԻՐՈՆ. Ել ինչու էինք սկսում: Զեղանից ամէն
մէկը թռող միտ բերի, թէ ինչպէս ենք մենք ապրում:
Ահա այս բանուորի բնակարան է: Մի սենեակ ու խո-
հանոց: Այստեղ ապրում եմ ես, բանուոր քոյրս, բա-
նուոր հայրս, Նախման եղբայրս և կօշկակար Շմիլը:
Մենք թունաւորուում ենք պատերի գարշահոտութեամ-
բը և թունաւորում ենք միմեանց մեր շնչովը: Մենք
քնում ենք գետնին, շների նման, և ոջիներն ուսում
են մեր մարմինը: Մեր կերած ցամաք հաց է, և միայն
տօն օրերին ենք մսի երես տեսնում: Մեր զուարձու-
թիւնն է կամ արազը, կամ բիլիարդը, կամ մեռելի
պէս քնելը: Ահա մեր զրութիւնը: Մեղանից ո՞րն է,
որ աւելի լաւ է ապրում, թող պատասխանի:

ԶԱՅՆԵՐ. Ուզիղ է, ուզիղ է...

ՄԻՐՈՆ. Իսկ ի՞նչպէս է ապրում Գրոսմանը:
Գրոսմանի ընտանիքը բազկացած է չորս հոգուց: Այդ
չորս հոգին ապրում են տասներկու սենեակում, որ,
ինչպէս Հերմանն էր պարծենում, նստել է վաթսուն
հազար ուուրկի: Այդ մարդկանցն ամէն բան մատչելի
է. Թատրոն, երաժշտութիւն, լաւ գրքեր, ամենալաւ
կերակրներ, մինչ մեր երեխաների համար մայրերի
ծծերում կաթ չկայ, մինչ մենք կոտորուում ենք ան-
սնունդ մնալուց, կեղտոտութիւնից ու հիւանդութիւն-
ներից: Ես ձեզ եմ ուզում իմ խօսքերը և կ'ուզէիս

որ ասածս իմ մաղձի ու դայրոյթի հետ ձեր որտին
համար: Մեզ համար միայն մի ելք կայ—չզիջանել...
(Աղմուկ եւ բացազնչութիւններ):

ԵԱԿՈՎ. (զայրացած. կանգնում է). Կոտորէինք
այդ բոլոր սոսոր արարածներին ու պըճնէր գնար:
(Սպառնալով): Ով որ միութիւնը խախտի, ես զիտիմ,
ինչ կ'անեմ: Սպասեցէք, լրեմ...

ՄԻՐՈՆ. Հեշտ չի Գրոսմանի համար ջաղացի
ծախսը քսան ու հինգ հազար ոուրլով աւելացնելը:
Բայց մենք կ'ստիպենք նրան...

ԵԱԿՈՎ. (սպառնալով). Կ'ստիպենք, թէ չէ ջաղացի
ժամը զուրս եկած է... Ուզիղ եմ ասում. Միբիրն ա-
ւելի լաւ է, քան թէ տանջուենք, հա տանջուենք, ինչ-
պէս որ մինչև հիմա տանջուել ենք: Ջաղացիցն աւելի
վատ պատիժ հօ չի լինի:

ԶԱՅՆԵՐ. Ճիշտ է, ճիշտ է: Ու նրա բոլոր լակու-
ներին պէտք է կոտորել... (Աղմուկ, զայրոյթի շար-
ժումներ):

ԻՕՍԻԹ. Մի փոքր խօսք եմ խնդրում... Ինչու
ընկեր Միբոնը մեզ բան չի ասում Գրոսմանի որդու,
Ալեքսանդրի մասին: Մենք գիտենք, որ նա դեմոկրատ
է: Ապա ինչու նրան այստեղ, մեր մէջ չենք տեսնում:
Ել ի՞նչ դեմոկրատ է նա, որ իր հարստահարիչ հօր դէմ
չի դնում:

ԵԱԿՈՎ. Այդ ուզիղ հարցըիր դու, իծոփի:

ՍՏԵՓԱՆ. Բայց ճիշտը որ ասենք, այդ մի բէչ
անյարմար բան է:

ՄԻՐՈՆ. Գրոսմանի որդին մեր կողմանակիցն է:
Նա այսօր այստեղ կը դայ, որ քննենք ու որսչենք, թէ
ինչպէս պէտք է գործն առաջ տանենք:

ԻՕՍԻԹ. Բրատօ և բրատօ: Այդ ինձ բաւական է:

ԵԱԿՈՎ, Ասել է, թէ մենք յաղթել ենք, եթէ Գրումանի տղան մեր կողմիցն է:

ԴԱՒԻԹ (երկշու), Ես, Միքան, այ, ի՞նչ էի ուզում ասել: Ես... (Դէմ է առնում):

ԵԱԿՈՎ, Մի վակոթին հասցըն, խօսքը բերնիցը դուրս կը գայ:

ԴԱՒԻԹ (ժպտալով). Ի՞նչ էի ուզում ասել: Հա, բան չէի ուզում ասել: Բայց... բայց սիստա խաղաղութիւն է ուզում: Հասկանում էք, որ խաղաղ լինի, հանգիստ: Ի՞նչի՞ համար է այս գոռզոռոցը: Ե, լաւ, այս էլ գոռզոռոց: Ապա որ երեխաս առնը լալիս է, կինս տանը նզովք է կարգում, այս էլ լաւ է: Պարոն Գրումանն էլ փոքր մարդ չի: Մենք կողքի ենք ընկել ու նա մտածում է: «մի տես, նրանք իմ գէմ կոռւել են ուզում»: Ո՞վ է ուզում, ի՞նչ է ուզում: Մենք... եվ սկզ: Այ, այս մենք... Ո՞ւմ դէմ: Գրումանի դէմ...

ԻՕՍԻԹ. Մի փոքր խօսք եմ խնդրում, Դու վերջացրէր, Դաւիթ: Թէ որ չէ, շարունակիր:

ԴԱՒԻԹ. Ես չեմ վերջացրել ու չեմ էլ սկսել: Ես միայն ասում եմ, թող ամէն բան անուի խաղաղ, հաճագիստ: Մենք հրէայ ենք, նա էլ է հրէայ: Իրար չուտենք: (Իօսիֆին): Ի՞նչ, Ասում ես, այստեղ ուսւ բանուրներ կան: Ի՞նչ անհնք: Միթէ սրանք մարդիկ չեն: Մրանք ինձ հասկանում ես: Ուզբէ է, եակով, ու ինձ հասկանում ես:

ԵԱԿՈՎ. Դէ, կորի՞ր... Ե, յետոյ ի՞նչ: Ի՞նչ ես ինձ ԴԱՒԻԹ. Կորի՞ր... Ե, յետոյ ի՞նչ: Ի՞նչ ես ինձ մտիկ անում, Իօսիֆ:

ԻՕՍԻԹ. Քեզ եմ մտիկ անում նրա համար, որ դու բան չես հասկանում խեղճ բանուրիցը: Ե՞րբ պիտի դու բան խեղճ սովորցնեմ: Ախար դու խոտակեր անարդիք ես, և ես քեզ իսկոյն կ'ապացուցանեմ, թէ ինչնու:

Ի՞նչ է, օրինակի համար, ղրամատէր հարստահարիչը, չը, ի՞նչ է, ի՞նչ...

ԴԱՒԻԹ. Գիտեմ, գիտեմ...

ԻՕՍԻԹ. Գիտես: Ուտել գիտես: Գրամատէր հարստահարիչն այն մարդն է, որ բանուրիցը յաւելուած արժէքն է խլում: Ապա ի՞նչ է բանուրիցը: Հը: Բանուրն այն մարդն է, որ թէպէտ չի ուզում, բայց ստիպուած է յաւելուած արժէքը տալ դրամատէրին: Մի մտիկ անի ինձ աղօթած իշխ նման: Արդէն հասկացմը: Այստեղից ի՞նչ է հետեւում: Որ բանուրիցը պէտք է կռուի դրամատէրի հետ, մինչև որ յետ խլի նրանից բոլոր յաւելուած արժէքը: Աւանակ, ի՞նչ բան ունի այստեղ հրէան: Այ այստեղ, Դաւիթ, դու կըկին անդամ յիմար ես, և ես խկոյն կ'ապացուցանեմ, թէ ինչնու: Եթէ, օրինակի համար, հրէայ դրամատէրը յաւելուած արժէքը քամում է հրէայ ու ոուս բանուրիցը, ի՞նչ բան ունի այստեղ ազգը: Երբ որ ես ասում եմ, թէ դրամը ազգ չունի, դու այս հասկանում ես: Բա ինչնու չես հասկանում, որ դրամը սիրոզն էլ ազգ չունի: (Բանուրները ծիծաղում են): Ի՞նչ բան ունեն ուրեմն այստեղ հրէայ ու ոուս խօսքերը:

ԵԱԿՈՎ. Լաւ շշպոեցիր, Իօսիֆ: Մենք ամէնքս մի բան ենք, Ստեփանը լինի թէ Միքանը:

ԴԱՒԻԹ (մի փոքր մտածելուց յետոյ): Բա ինչնու են ոուսները ջարդեր սարքում:

ԱՏԵՓԱՆ (մօրուրը սղալելով): Ծփոթելով). Հա, այդ ուզիդ հարցրիր, Այդպէս է:

ԻՕՍԻԹ. Յիմար: Մենք, խեղճ բանուրներս, մի նպատակի ենք գիմում: Ուուս ու հրէայ բանուրները թշնամի չեն: Նրանք արդէն ձանաչել են իրանց ընդհանուր շահերը և ձեռ ձեռի տուած կռուում են հին աշխարհի հետ՝ նրան խորտակելու համար: Ես այսպէս

կ'ասեմ, ոռւս և հրէայ բանուորները եղբայրներ են: ԵԱԿՈՎ. Ճիշտ է, եղբայրներ են: Մեր թշնամին գործատէրն է և ոչ թէ հրէան: Գործատիրոջ մէջքը պէտք է կոստել: (Աղմուկ):

ՇՄԻԼ. ԱՌ, այ, այ: Եղբայրներ են... Այդ լաւ է... Այդ հրէավարի է... (Վեր է կենում՝ եւ կօշիկվ վայր է քցում): Խսեցք, զաւակներս... Այդ հրէավարի է: Ստեփան, դու գիտես, ինչ է նշանակում հրէավարի: Այդ նշանակում է մարդավարի, միշտ ու ամէն տեղ հրէականը մարդկային է եղել: Զաւակներս, ով է ասել՝ սիրիր թշնամիներիդ: Այդ մենք ենք ասել: Եւ ով է ասել՝ աջ թուշդ դէմ արա, երբ որ ձախին են խփում: Դուք ասում էք, թէ դուք: Բայց այդ ուղիդ չէ... Ելի մենք ենք ասել... Այդ խօսքերից հրէի ցաւի, հրէի արեան հոտ է զալիս:

ԴԱԿԻԹ (ակնածութեամբ). Այս, հրէի ցաւի հոտ է գալիս:

ԻՕՍԻԹ. Մի փոքր խօսք եմ խնդրում...

ՇՄԻԼ. Հազարաւոր ասրիներ ճնշում էին հրէային, և նա ցաւիցը գէմքը ծամոեց ու գոչեց՝ սիրիր թշնամիներիդ: Էլ ձար չկար, Ստեփան, Սիրիր թըշնամիներիդ... Լաւ, բայց իսկոյն էլ նա անիծեց, ու այդ խօսքը օտարինը գարձաւ: ԱՌ, այ, այ և այ, այ... Պէտք է ճշմարիտն ասել: Այդ հրէական խօսք է եղել: Աղա ով է ասել՝ մաքառիր գերիչիդ դէմ: Դարձեալ մենք... Ամէն լաւ, մաքառիչին բան ասել ենք մենք ու իսկոյն էլ ուրիշներին ենք պարզեել: Առէք, մենք ազահ չենք: Մենք այնքան ունինք, որ բոլոր մաքառնցն հերիք կ'անի: Դէ մի խանգարի, իօսիֆ, Մենք ասել ենք՝ մաքառիր գերիչիդ դէմ, բայց այս գեր հրէարէն չի... Բայց մաքառիր դու, ճնշուածդ, ձեռ ձեռի տուած ոչ միայն հրէայի հետ, այլ և ոռոսի,

ֆրանսիացու, լեհացու հետ, ձեր գերիչների դէմ,— ահա այս հրէարէն է: Սյստեղ հրէան դէմքը չի ծոմռել ու բարձրաձայն, եակով, և համարձակ, իօսիֆ, ասել է. ճնշուածներ, այս է ահա ձեր ճանապարհը... Հասկանում էք, հասկանում էք: Եւ դարձեալ պիտի ասեմ, Ստեփան, որ ամէն բան հրէական պիտի գառնայ... Ոչ, դուք կ'ունենաք ձեր շաբաթը, ֆրանսիացիք իւրանցը, գերմանացիք իրանցը, բայց ոգին, ամէն բանի մէջ հրէական ոգի կ'ապրի: (Սոտում է յուզուած: Աղմուկ):

ՄԱՆԵԱ. Դրա համար ձեզ համբոյր է արժանի, Շմիլ: Դուք միշտ մէջ էք ընկնում այնտեղ, որ ձեր բանը չի: Դուք հօ յայտնի խենթ էք: Իսկ ես ուզում եմ տեսնել, թէ ինչպէս պէտք է թաղեն Գրոսմանին: Տղայք, պատանեցէք նրան... դէ, հողը գրէք: (Այս միջոցին յետեւի շարքերում շարժումն է սկսում: Ամէնը ըլ յետ են նայում: Մէկը առաջ է զալիս բազմութեան միջովը: Միլոնն ընդառաջ է վազում):

ՄԻՐՈՆ. Այս ընկեր Ալեքսանդրն է, Գրոսմանի որդին: Ճանապարհ տուէք մեր ընկերին:

ԻՐԾ (ապշած). Պարոն Գրոսմանի որդին այստեղ է... ինքը պարոն Գրոսմանի որդին... (Ալեքսանդրին շրջապատում են բանտորները, սեղմում են ձեռը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ (հնչուն ծայնով). Ընկերներ... (Ամէնը լուս են): Ընկերներ...

տական լեզուն: (Կրկնում է զրգուած): Ի՞նչպէս դուք
ինձ ձանձրացրել էք: Ինչով եմ ես ձեզ ձանձրացրել,
իշխանուհի:

ԺԵՆԵԱ. Բորսայի առևտրական դարձած ինտել-
լիգենտը մարդ չէ:

ՌՈԶԵՆՌՎ. Լսում էք, զոքանչս, լսում էք: Զորս
ապրի է, շարունակ կրկնում եմ սրան. Ժենեա, փող:
Ժենեա, փող ու փող: Ահա արդիւնքը Զոքանչս, դուք
գիտէք, թէ կեանքն ինչ բան է: Կարելի՞ է առանց փողի
ապրել: Եւ մարդ իրաւունք չունի՞ այս ասելու իր
կողմը:

ԷՏԵԼ. Ի՞նչ անենք, որ սա այսպէս է: Սա ա-
գահ չի:

ՌՈԶԵՆՌՎ. (վրդովուած), Ի՞նչպէս թէ ինչ անենք:
Դուք ուրիշ կերպ պիտի խօսէք, եթէ որսն բարիք էք
ցանկանում: Աղան դարձրէք սրան, Խլէք ձեռիցը զգեստ-
ները, ադամանդները, և սա կ'ողբայ, ինչպէս որ ես
էի ողբում: Ի՞նչ անենք: Ահա ես փորձուել եմ և լաւ
գիտեմ, թէ ինչ պէտք է անել: Դուք կարծում էք, թէ
ճէնց որ վերադարձայ արտասահմանից դիպլոմը ձեռխա-
ր բարու դոներն իսկոյն առաջին բանց եղան... Սխալուում
բարու դոներն իսկոյն առաջին բանց եղան... Սխալուում
էք: Ես աղքատ էի, և ոչ ոք ինձ հետ խօսել էլ չէր
ուզում: Սխալուում էք: Ինձ բանի տեղ դնող չկար:
Երեք ժանր տարի անցաւ, մինչև որ ոտս տեղ բռնեց:
Էտել. Ասենք, ամէն մարդ էլնեղ որ տեսնում է...

ԺԵՆԵԱ. Ես ամօթու կարմրում եմ, երբ որ լսում
եմ այդ մասին: Իսկոյն հիւանդանոցի պատմութիւնը
կ'սկսուի: Եւ սա մտքովն էլ չի անց կացնում, թէ ինչ
գոեհկութիւն է այս:

ՌՈԶԵՆՌՎ. Գոեհկութիւն է Սոֆիա Կովալեսկայա
ձևանալը, երբ իսկապէս դու էլ նոյնն ես կամենում,
ինչ որ ես:

ԺԵՆԵԱ. Ես եմ կամենում: Իսկ իմ իդէալները...
ՌՈԶԵՆՌՎ. Գիտենք, գիտենք... Միշտ բարձրիցնես
բոնացնում—Աստուած, իդէալ, գեղարուեստ... Ամօթ
ունեցիր, Ժենեա: Այն հիւանդանոցումն, ուր արտա-
սահմանից վերադառնալուց յետոյ ես սկսեցի աշխա-
տել, ստիպուած էի, զոքանչս, համարեա թէ յայտնի
բժիշկների ծառան դառնալ, որպէս զի նրանցից որևէ
օկնութիւն ստանայի: Եւ ես դարձայ, զոքանչս: Ահա
թէ հրտեղ է կեանքի ճշմարիտ իրականութիւնը: Ես
կարձայ, որովհետև հասկացայ, որ այլ կերպ առաջ
դնալ չի կարելի: Ես զրադիցնում էի նրանց կանանցը:
Ես ուրիշներից ճարպիկ էի, զրօնում էի նրանց ա-
պուշ աղջկերանց հետ և դրա փոխարէն երբեմն հարուստ
հիւանդների խնամելու հերթապահութիւն էի ստանում:
Ես դիմանում էի... փողի համար...

ԷՏԵԼ. Դրանում ոչ մի վատ բան չկայ: Վերջի
վերջոյ մարդ դարձար...

ՌՈԶԵՆՌՎ. Ի հարկէ... Եւ ես յաղթեցի: Ես իրա-
ւունք ունիմ և պահանջում եմ, որ սա ճանապահնս
չփակի: Ես պէտք է հարստանամ և կը հարստանամ:
Սա չի ուզում հասկանալ, որ հազիւ է պատահում, որ
բժիշկը իր բժշկութեամբը հարստանայ: Մի մեր հա-
րուստ բժիշկներին տեսէք: Նրանք ապրում են միթէ:
Զգում են միթէ կեանքի քաղցրութիւնը: Ուրիշ բան
է բորսան: Մաքուր, ախորժելի: Շուրջդ կեանք է հ-
ուում: Ինքդ էլ ինչպէս մի յորձանքի բերանն ընկած
ցօղուն: Փողն աճում է ու աճում:

ԷՏԵԼ. (զուարթ ծայլով). Ես հասկանում եմ:
Զգում եմ, եաշա: Միտս է, թէ ինչպէս մերն սկսուեց:

ԺԵՆԵԱ. Ասում եմ, արհամարհում եմ ձեզ...

ԷՏԵԼ. (Նշան է անում Ռողենովին): Շշնչալով).

ինքոր խօսի՞ր դրա հետ: Ես բան չեմ կարող անել, հայրն
էլ չի ուզում խարնուել:

ԺԵՆԵԱ. (շուրջ է զալիս). Ի՞նչի՞ մասին էք փափսում:
ԷՏԵԼ. Ես չեմ փսփսում: Հիմի էլ փափսում եմ:
(Նշան է անում Ռողենովին): Դէ, մօտեցիք նրան: (Կա-
մաց դրւրս է զալիս դէպի ստանձնաւենեակը եւ յե-
տեւիցը դրտը փակում է: Ռողենովը կնոջն է նայում:
Զեները դրել է մէջքին ու ման է զալիս սենեակումը:
Կանգնում է: Դժգոհութեամբ զբուխը թափ է տալիս
եւ վճռական եղանակով մօտենում է նրան):

ՈՒԶԵՆՈՎ. (արհեստական ծետվ ծայնը դրդա-
ցնելով). ԺԵՆԵԼԿԱ...:

ԺԵՆԵԱ. Չհամարձակէք ինձ ձեռ տալ: Գնացէք
ձեր աղախնի մօտ:

ՈՒԶԵՆՈՎ. (բոնկում է). Ի՞նչ զղուելի է խօսելու
այդ եղանակը: Ֆրանսիական վէպերով լցըել ես գլուխդ
և հէնց մի բան պատահի թէ չէ, իսկոյն «դուք»:

ԺԵՆԵԱ. Այլ ևս ճանաչել չեմ կամենում քեզ: Իմ
կեանքը խորտակուած է: (Ռաշվիլինակը դնում է աշ-
քերին): Ո՞հ, եթէ իմանայի, թէ ում եմ առնում: Ասա,
ինչով ես դու այժմ լաւ այն աւաղակից, որ մեծ ճա-
նապարհին կանգնեցնում է ճանապարհորդին ու աղա-
ղակում քսակդ կամ կեանքդ: Բժիշկ—բորսայի առե-
տրական: Ի՞նչ խայտառակութիւն է, ի՞նչ խայտառա-
կութիւն:

ՈՒԶԵՆՈՎ. (ինըն իրեն զսպում է). Երբորդ ան-
դամն է, փորձ եմ անում հաշտուելու քեզ հետ: Երկու
շաբաթ է, առւն ու տեղդ թողել ես: Երեխաները տան-
ջուում են, քո հոգին էլ է դուրս եկել: Լսիր ինձ, արի
տուն գնանք:

ԺԵՆԵԱ. (դառնութեամբ). Դու իմ մասին ես հո-
գում: (Ճշալով): Իսկ ի՞նչ է եղել իմ կեանքը: Գոնէ մի

անգամ ինձ հետ լուրջ խօսել ես: Զէ, լուրջ, մարդու
նման: Ի՞նչ եմ եղել ես քեզ համար: Տիկնիկ, ցուցա-
դրութեան առարկայ: Դու ինձ համար ադամանդներ
էիր գնում քո նպատակներն աչքի առաջ ունենալով,
բայց փողը ինայում էիր գրքեր, արուեստի գործեր
գնելու համար: Մեր տանը քանդակագործութեան ոչ
մի արտագրութիւն չկայ: Հիւրասենեակի պատերին
մեծ-մեծ օլէօգրաֆիաներ են կախ տուած, այն գոհ-
հիկ ոսկեզօծ շրջանակներով: Առանձնասենեակի համար
մատենադարան չէիր ուզում ձեռք բերել...

ՈՒԶԵՆՈՎ. Այդ ցնդաբանութիւնները փոր չեն
կշտացնի: Ես ճանձրացել եմ գրքերից: Ես գեղարուեստ
չեմ ճանաչում:

ԺԵՆԵԱ. Ապա սոսկալի բան չի այդ, գեղարուեստ
չճանաչելը: Աստուած իմ, ես մենակ էի մնում ու մտա-
ծում էի. ուր են ապա իմ երազները: Երբ որ մենք
ծանօթացանք, ես քեզ հաւանեցի: (Դարձեալ փրուն
եղանակով): Ես կարծում էի, թէ քեզ հետ ես լոյս
աշխարհ դուրս կը գամ այս մեռեալ տանից, արև կը-
տեսնեմ: Մեր կեանքը մի կը լինի ազնիւ աշխատանքով:

ՈՒԶԵՆՈՎ. (բարկութեամբ). Այդ բոլորը վէպե-
րից ես խօսում: Ի՞նչ աշխատանքի մասին է խօսքը:
Կեանքի մէջ ամէն բան այնպէս պարզ է: Տնեն գնանք:
Զայլոյթդ կ'անցնի, ու յետոյ շատ կը զդշաս, եթէ մենք
հեռանանք միմեանցից: Ես երկորդ անգամ կ'ամուս-
նանամ մի երիտասարդ, հարուստ աղջկայ հետ, դու-
որբեայրի կը մնաս: Կուղես, քեզ արտասահման տա-
նեմ: (Շշնչում է): Գնանք որպէս սիրահարներ...

ԺԵՆԵԱ. Ես չպիտի կարողանամ այնպէս անել,
որ դու ինձ մարդու պէս վերաբերուես: (Լաց է լինում):
Ես լուրջ եմ ասում, եակով: Գուցէ այս իմ վերջին
խօսքերն են: Զորս տարի ես լուռ եմ կացել: Ես մեր

վանդակիցն ուղում էի դուրս թռչել դէպի զեղեցիկը:
Եւ ահա գուրս պրծայ... բայց ոչ ուրախութեան հա-
մար:

ՈՒԶԵՆՈՎ. (փոխում է տոնը). Ես հօ չեմ կարող
լուրջ, սառնասրութեամբ լսել այս դատարկարանու-
թիւնը: Ախար ես ոչ երեխայ եմ և ոչ աչքս երկինք
քցած եմ ման գալիս: Ես պատանեկութիւնից ատել եմ
այդ զգուելի բարձր տոնը: Բաւական է յիմարտութիւն
անհա, թէ չէ: Ես քեզ կ'սահիպեմ: Երեխաներին թողել
է ու Յովհաննա դ'Արկ է ձեանում:

ՃԵՆԵԱ. (ինըլուելով): Ինձ կ'ստիպեմ:

ՈՒԶԵՆՈՎ. Քեզ, քեզ: Ես կը գնամ մինչև վերջը:
ՃԵՆԵԱ. Դու կարծում ես, թէ սիրուհիներիդ հետ
ես խօսում:

ՈՒԶԵՆՈՎ. Լովի: (Սեղմում է նրա ձեռը): Գա-
լիս ես տուն: Հարցնում եմ, տուն պիտի վերադառ-
նամ:

ՃԵՆԵԱ. (ձեռը դուրս է քաշում). Կրկին այս ա-
նիծուած բանտ սենեակները: Երբէք, մահն աւելի լաւ
է: (Փաթոսով): Ո՞ւմ եմ ես պէտք այժմ: Ո՞վ ինձ ձեռ
կը մեկնի, որ ինձ հետ յառաջ գնայ, անվերջ յառաջ:
Ես մենակ եմ... Կեանքս խորտակուած է, և ահա ես
լալիս եմ: Ո՞ւմ են ինձ վաճառել: Մի քեզ նայիր: Փորդ
կլոր, գիշակերի բերան ունիս: (Ծիծաղում է): Ճիլե-
տիդ վրայ շղթայ կայ: Զէ, դու մի քեզ նայիր: Ի՞նչ-
պէս է քո տունը սարքած: Մի առանձնասենեակ առանց գե-
ղարուեստի արտազրութիւնների, մի հիւրասենեակ առանց գե-
ղարուեստի բուֆէտ մարմար տախտակով: Երբ մարդ մըտ-
նում է մեր տունը, մի անգամից ընկնում է մի զար-
հուրելի, նողկալի, անսամօթ բանի մթնոլորտի մէջ: Ես
լալիս եմ, խորտակուած է կեանքս:

ՈՒԶԵՆՈՎ. Բայց ախար դու ապուշ ես, ճշմարիտ
եմ ասում: Թու տեղը հիւանդանոցն է:

ՃԵՆԵԱ. Այս քեզ սարսափելի է թուում: Ոչ մի
աղնիւ բան քեզ համար գին չունի: Թող այդպէս լինի:
Ես լալիս եմ. խորտակուած է կեանքս:

ՈՒԶԵՆՈՎ. (կատաղութեամբ). Չգիտեմ, ինչն է
որ չի թողնում, որ քեզ խփեմ: Բայց սպասիր, բանն
այդուել էլ կը համնի: Անիծուին գիմնազիաներն ու
գարշելի գրքերը: Ինչո՞ւ ես քեզ հետ ամուսնացայ: Ին-
չո՞ւ քեզ ընտրեցի: Միթէ քաղաքումը քիչ ուրիշ հա-
սուստ ապուներ կան, որ բաղդասոր կը համարէին ի-
րանց, եթէ իմ կինը լինէին: (Ժննեան նեկեկում է):
Դու դեռ լալիս ես: Դու գեռ իրաւունք ունիս: Սպա-
սիր, ինքոր կը վագես, կը գաս ինձ մօս: (Զայրացած
դուրս է վագում: Լոռվծին: Ժննեան լալիս է: Առանձ-
նասենեակից կամնաց դուրս է զալիս Էտելը: Զար-
ևացած չորս կողմն է նայում: Երաժշտութիւնը դա-
դարում է):

ԷՏԵԼ. Բա ուր է Եակովը: (Ժննեան լուռ վեր է
կենում եւ նեկեկալով դուրս է գնում՝ սենեակից աջ
դոնովը: Դուն մէջ դէմ առ դէմ պատահում է Մա-
նեային: Էտելն ապշած նայում է նրան):

ԷՏԵԼ. (ղժգոհ. վրովուած է). Դու ինչպէս եկար
այստեղ: Ո՞վ քեզ ներս թողեց:

ՄԱՆԵԱ. Ոչ ոք ինձ ներս չի թողել: Ո՞ւմնից
պէտք է ես թոյլաւութիւն խնդրէի: Շատ էլ դու հա-
րուստ ես, իսկ ես աղքատ, էլի մենք քոյլեր ենք: Դեռ
կարող եմ քեզ մօս դալ առանց հարցնելու: Մի ժա-
մանակ մենք միասին քարկտիկ էինք խաղում, միա-
սին մի սեղան էինք նստում: Այստեղ մեր հայրն
էր նստում, իսկ այստեղ մեր մայրը, և փառք Աստու-
ծոյ, ինձ քեղանից մի փոքր աւելի զեղեցիկ ու խե-
լալիս

լօք էին համարում: Քո բաղդը միայն չունէի ես: էջել. եկել ես, ի՞նչ ես խօսում: Սիրտ, չկայ քեզ լոելու:

ՄԱՆԵԱ. Կարծես թէ իմ սիրտը հէնց վարդէ պատռում: Ի՞նչո՞ւ դու դուրս արիր Դինոչկային: Նա քեզ ի՞նչ էր արել: Ախար նա եկել էր քեզանից բան խնդրելու:

Էջել (մոայլ). Ի՞նչ ես ուզում ինձանից: Ի՞նչ ես գալիս ինձ տանջում: Մի Դինայի մասին էլ պիտի մտածենք: Փառք Աստուծոյ, իմ հոգսն էլ ինձ բաւականէ:

ՄԱՆԵԱ. Ես բան չեմ ասում: Էջել. Զե՞ս ասում: Ճանաչում եմ քեզ: Քո աչքերն են ասում: Թո՞ղ դուրս գամ: Տես, կանգնել է շեմքումն ու ճանապարհ չի տալիս:

ՄԱՆԵԱ. (ցած ծայնով). Ես քեզանից բան չեմ ուզում: Ես եկել եմ միայն քեզ պատմեմ, որ մենք սովից մեռնում ենք: Ներքել կանգնած է իմ Աբրամն ու թուլութիւնիցը վայր է ընկնում: Ոչ մի տեղից օդութիւն չկայ: Ես ներում եմ քեզ, որ դուրս ես արել իմ Դինոչկային: Ներում եմ քո տասներկու սենեակը և այն, որ դու լողում ես ոսկու մէջ. ներում եմ մինչև անդամ և այն, որ դու ինձ, քո քրոջը, չկամեցար դուրս քաշել այս ցեխիցը այս աղքատութիւնիցը, այս ցաւերի միջից: (Ղաց է լինում): Օգնիր ինձ հիմա...

Էջել. իսկ ես քեզ հարիւր անգամ ասել եմ, որ ես Ռոտշիլդը չեմ: Ես Ռումից փող ուզեմ: Կարծում ես, թէ ոսկի կայ իմ ձեռին: Լինէր էլ միթէ բոլորը քեզ պէտք է տայի: Դու իմ քոյրն ես, բայց այժմ պղականութիւն չկայ: Ամէն մարդ իր համար է ապրում: Մարդ աւելի խելօք, աւելի գործ հասկացող լինէր, դու էլ կը հարստանայիր: Ինձ աւելի մօտիկ մարդիկ

կան, քան թէ դու ես: Մի հարցրու, թէ ի՞նչքան է նստում տուն պահելը: Ի՞նչ են նստում ծառաները, ձիանը, ձիապահները: Ի՞նչքան է պէտք երեխաների համար: Էլ ի՞նչ կը մնայ ուրիշներին: Հիմա ջաղացը չի բանում, իսկ երբ ջաղացը չի բանում, այդ միենոյնն է թէ մարդու մայրը մեռնի: Ճանապարհ տուր: Դու հօտեսամր, որ ժինիչկաս լաց էր լինում:

ՄԱՆԵԱ. Ես այստեղից չեմ հեռանայ: Տեղ չունեմ գնալու: Կը պառկեմ այստեղ ու կը մեռնեմ: Լաւ, ազգականութիւն չկայ: Թո՞ղ այդպէս լինի: Ես քոյր չեմ, ես՝ այնպէս իմանանք թէ մի աղքատ, անբաղդ կին եմ: Եկել եմ քեզ մօտ. նայում եմ ու քո հարստութիւնն աչքս է ծակում: Իմ տունը ցուրտ, լուսամուտներումն ապակի չկայ, պատերիցը կանաչ ջուր է թափուում: Այստեղ վայր ընկած ամէն մի բան կարող էր ինձ մինչև մահս բաղդաւորացնել: Փափկացրու սիրտգ: Ինձ էլ մտիկ արա, քեզ էլ ախար մենք մի մօր զաւակներ ենք: Դու փայլում ես, իսկ ես լղար կատու լինիմ, կ'ասես, ու քեզ մօր տեղ կը լինիմ: Ձեռներս այնպէս են ցամաքել, որ երակներն հաղիւ են խփում:

Էջել. Ո՞վ է մեղաւոր: Աստծուց գանգաւու արա: Թո՞ղ մարդ աշխատի... Ապա իմ Դաւիթը երբեիցէ հրաժարութեամ է աշխատելուց: Երբէք Նա միշտ փող շինելու մասին էր մտածում: Թո՞ղ քո մարդն էլ աշխատի, թո՞ղ երեխէքդ աշխատեն: Այդքան մի լափէք, մուծակ, գլխարկ, կորսէտ մի գնէք, և այդ կոպէկներից ուրիշներ կը գոյանան:

ՄԱՆԵԱ. (մոայլ). Թո՞ղ այն, ինչ որ մենք գլխարկների ենք տալիս, իմ մօտաւոր ու հեռաւոր թշնամիների բաժինը լինի իրանց ամբողջ կեանքի համար:

Էջել (բարկութեամբ). Դու անիծում էլ ես: Դու:

Ողորմելիք: Դէ, մարդ ի՞նչպէս կործ ունենայ ձեղպէս-
ների հետ: Զեռիղ ճար լինէր, ինձ կը մորթէիր գու:
Ի՞նչու: Միթէ կողսատել ենք մէկն ու մէկին: Ի՞նչ է
արել ձեզ Դաւիթը: Եթէ նրա ջաղացը կերակրում է
ձեզ, դժանով վատամարդի եղաւ: Ում խաթրին է գի-
պել Դաւիթը: Միալար ձեր մասին է մտածում: Զեր
պատճառով գիշեր-ցերեկ դադար չունի: Իսկ փոխարէ-
նը դուք ի՞նչ էք տալիս:

ՄԱՆԵԱ. Խնդրում եմ քեզ... օգնիր ինձ:
ԷՏԵԼ. Ես փող չունեմ:

ՄԱՆԵԱ. Ես էլ քո բոլոր ապակիները կը ջարդեմ.
Կ'ընկնեմ փողոցները, կը գոռամ. ժողովների, տեսէք,
ի՞նչպէս է վարուում էտել Գրոսմանը իւր անբաղդ
քրոջ հետ: (Կատաղած): Քո դռան առաջին ինձ կախ
կը տամ: (Այս աղաղակին ներս է վազրով Գրոսմա-
նը: Նորա յետելից պատկառանքով ներս է զալիս
չերմանը):

ԳՐՈՍՄԱՆ. Այս ի՞նչ աղաղակ է: Այս ով է:
ԷՏԵԼ. Մանեան է: Գոռում է, թէ վիճակը վաս
է: Թէ կարօտ ես օգնութեան, այդպիսի խօսքերով կը
պահանջեն:

ՄԱՆԵԱ (զրգուած). Դուք, Գրոսման, իմ փե-
սան էք, իսկ սա իմ քոյքն է...

ԳՐՈՍՄԱՆ (բարկութեամբ ոտները զետնովն է
տալիս): Դժւրս այստեղից:

ՄԱՆԵԱ. Դէ, դնւրս քցէք ինձ: Այդ ահա ուզում
եմ ես տեսնել: Դէ, բանիր ուսերիցու: Ինձ համար ար-
դէն մէկ է: Դէ, կ'ուշա զաղաններ, դնւրս քցէք ինձ...
Սրանք էլ մարդիկ են: Այս կին իմ քոյքն է: Լաւ
էր, շուն բերէք մայրս:

ԳՐՈՍՄԱՆ (ոտները զետնովն է տալիս), Դժւրս:

Դնւրս այս բոպէիս Հերման, ի՞նչ էք կանգնել: Դնւրս
քաշէք սրան այստեղից:

ՀԵՐՄԱՆ (մօտենում է Մանեային, ըոնտալ է
նրա ծեռը). Գնացէք այստեղից: Գոռգուալուց ձեռներդ
հօ բան չի ընկնի:

ՄԱՆԵԱ (դուրս է պրօնում նրա ծեռիցը). Աւա-
զակներ: Զեր տան բոլոր ապակիները կը ջարդուամ:
Դուք ախար մեր արիւն էք խմում: Սպասեցէք, մենք
ձեզ ցոյց կը տանք, թէ խմելն ի՞նչպէս կը լինի: Բաց
թող ինձ դու... կ'ուշտ գագան:

ԷՏԵԼ. Թողէք, Հերման: (Շպրտում է նրան մի
ուութիւնոց): Ա՛ռ, բկումդ մնայ: Զաղացի երեսն էլ
չես տեսնի:

ՄԱՆԵԱ (նայում է զարդուող դրամին, վերցնում
է դրամը յատակի վրայից): Մի ոուբլի: Հարուստ
Գրոսմանը մի ոուբլի է շպրտում իր քաղցած քրոջը:
Մի ոուբլի մնայ քո հարստութիւնիցը, տեսնեմ: Ուբա-
խացէլ ես արդէն Ժենիչկայիդ վրայ: Սպասիր, սպա-
սիր: Արդարութիւնը պիտի յաղթի: Սպասեցէք, աւա-
զակներ: (Արագ դրս է զնում, չերմանը համեստա-
բար նստում է սեղանի մօտ եւ աշքը չի բարձրա-
ցնում: Գրոսմանը յուզուած է: ծեռը քամնակին դրած
ման է զալիս սենեակում):

ԳՐՈՍՄԱՆ. Ահա այս է հրէայ հարստի դրութիւ-
նը: Ինքը մենակ ու հազարաւոր ամէն տեսակ ալքատ
ազգականներ: Մէկին սասակիկ փող է պէտք, միւսը
սոված մեռնում է: Մի ուրիշի համար պաշտօն դտիր:
Բարեգործական հաստատութիւնները նուիրատուու-
թիւն են պահանջում, և ով համնում է, կողոպտում է
կարողութիւնդ: Ինչծու: Որովհետև դու հրէայ հարուստ
ես: Խուս հարստին ոչ ոք չի համարձակում դիմել: Աւ
թէ մերժեցիր, աւազակ ես դու:

էՏԵԼ (երկշու). Գլմից հանիք նրան, Այսօր
եակովս էլի եկել էր:

ԳՐՈՍՄԱՆ. Լսել չեմ ուզում այդ մասին: Գրողը
տանի բոլոր եակովսերին...

ՀԵՐՄԱՆ (համեստաքար). Մի բան պէտք է շը-
պրտած լինէիք իրան, Մի հաջող պակաս կը լինէր:
ԷՏԵԼ. Բայց ես այդքան փող չունեմ: Թող Դա-
ւիթը մի հարիւր ոռւրի տար ինձ ու ասէր՝ այս փողը
քընջդ տուր, Մի մտածեցէք, ՀԵՐՄԱՆ, թէ ինչքան
ծախս ունեմ օրական:

ԳՐՈՍՄԱՆ. Մը ձեռին երեկք փող չի լինում,
ՀԵՐՄԱՆ: Հազար ոռւրի տաս սրան, մի բովէից յետոյ
կ'ասի փող չունեմ:

ԷՏԵԼ. Ե՞րբ եմ ես քեզանից հազարներ ստացել,
ՀԵՐՄԱՆ. Ես Մանեայի մասին չեմ խօսում: Ես
կամենում էի միայն ասել, թէ հիմա նրանց գրգռել
պէտք չի: Ասանց այն էլ գլխները կորցրել են:

ԳՐՈՍՄԱՆ. Իսկ ես ձեզ ասում եմ, ՀԵՐՄԱՆ, որ
թքել եմ բանուորների վրայ էլ, յեղափոխութեան վրայ
էլ ու ամէն բանի վրայ էլ: Ես ոչ ոքից ու ոչչից չեմ
վախենում: Եթէ նրանք մինչեւ անգամ գժուեն բոլորն
էլ ոչինչ չեն ստանայ: Մի զայրացնէք ինձ:

ԷՏԵԼ. Ախար չես թողնում սա մի բերան բաց
անի: Երեկ մի բան գիտէ, որ ասում է:

ԳՐՈՍՄԱՆ. Դու սնև կաց: Թո գործը չի: Մի
խառնուիր...

ՀԵՐՄԱՆ. Դուք, տիկին Գրոսման, գիտէք, թէ
որքան ես անձնուէր եմ ձեզ: Դուք էք ինձ հանել
մուրացկանի դրութիւնից: Եւ եթէ դուք ինձ ասէիք:
ՀԵՐՄԱՆ, ջնւրն ընկիր, աչքերս փակած ինձ ջուրը կը
քցէի: Հաւատացէք ուրիմն իմ խօսքին: Այն անիճուած
մեծ գործադուլից յետոյ բանուորները գաղան են կտրել

Ամբողջ քաղաքումը մի կարգին բանուոր չէք գտնիլ:
Այս անիճուած ամիսների յուզմունքներն ու լուրիրը
ու ամէն բան, ինչ լինում է չի լինում, ազդում են
նրանց վրայ, ինչպէս կրակը վառողի վրայ: Նրանք
ամէնքը ման են գալիս՝ աչքներն արին կոխած ու
բոռնցքները պատրաստ:

ԷՏԵԼ (երկիրով). Լսում ես, ինչ է ասում:

ԳՐՈՍՄԱՆ (չոր-չոր). Թող ասի... Մենք կը հե-
ռանանք այստեղից...

ՀԵՐՄԱՆ. Այդ ուրիշ բան է: Դեռ մի շաբաթ ա-
ռաջ ես կարծում էի, թէ ամէն ինչ մեր ձեռին է, բայց
այժմ արդէն հաւատս կորցրել եմ: Յուզմունքը մեծ է:
Ոչ ոք չի իմանում իսկապէս, թէ ինչ է ուզում, և ա-
մէնքը եռում են, ինչպէս ջուրը կաթսայի մէջ: Սար-
սափելի է դառնում...

ԳՐՈՍՄԱՆ. Եթէ հարկաւոր լինի, ես կը հեռա-
նամ, թող ամէն ինչ կորչէ, բայց ես անձնատուր չեմ
լինի: Գուցէ կարծում էք, թէ ես վախենում եմ, եթէ
համաձայն եմ հեռանալու: Սխալուում էք: Ես իմ ծրա-
գերն ունեմ, ես ծիծաղում եմ նրանց վրայ: Այդ բո-
լորը գատարկ բան է...

ՀԵՐՄԱՆ. Ասուուած տայ, Աստուած տայ...

ԳՐՈՍՄԱՆ. Զեր գլուխը փոքր է, ՀԵՐՄԱՆ, և
գուք չէք հասկանում, թէ ինչ է կատարուում, Պէտք
է վեր բարձրանալ և վերեկց նայել դէպի ցած: Այն
ժամանակ ամէն բան կը պարզուի ձեզ համար: Կայ մի
բան, որ մեզանից բարձր է, ՀԵՐՄԱՆ: Այդ մեր իշխա-
նութիւնն է: Այդ իշխանութիւնն են կամենում մեզա-
նից խլել, բայց մենք չենք տայ: Նա պիտի գոյութիւն
ունենայ: Ել աւելի բարձրացէք, ՀԵՐՄԱՆ: Ահա նա,
իշխանութիւնը: Ոսկու մէջ և սուրը ձեռին, երկրպա-
գենք նրան...

ՀԵՐՄԱՆ. Այդ իմ խելքի բանը չի:
ԳՐՈՍՏԱՆ. Չէք հասկանում, հէնց այդ պատճառով էլ վախենում էք: Պէտք է թողնենք, Հերման, որ ոյժը զարգանայ և խեղդենք նրան... Մենք զինաթափ կ'անենք նրանց և բոլորին մեր կառքին կը լծենք: Ես ինքս ցանել եմ, Հերման, գիտեմ, ինչ ոյժ ունեն նրանք, գիտեմ, թէ ինչ են ուզում, բայց գիտեմ այժմ, թէ մենք ով ենք:

ՀԵՐՄԱՆ. Ես ձեզ հետ չեմ կարող վիճել: Իմ պարտքն է ասել, որ մենք ամէնքս կանգնած ենք վասողի պահեստի վրայ, որ այսպիսի պայթիւն կարող է յառաջ դաւ, որ քարը քարի վրայ չի մնայ:

ԳՐՈՍՏԱՆ (*յուզուած*). Այնպիսի պայթիւն չկայ, որ ամուր պատերն առաջը չկարողանային փակել: Մի ձեր շուրջը նայեցէք, Հերման: Ախար այն, ինչ որ կատարուում է մեր շուրջը, միայն իմ գործը չէ: Խնդիրն այսպէս է: Իշխանութիւն մի քանիսի համար կամ իշխանութիւն բոլորի համար: Ես այստեղ պատրաստ կանգնած եմ և ասում եմ՝ ոչ... Բոլոր իշխանութիւն ունեցողներին ասում եմ՝ ոչ, ոչ մի զիջում: Ասում եմ ամբողջ աշխարհին՝ ոչ, ոչ և ոչ... Թողնենք այս: Մի և նոյն բանն է, դուք չէք հասկանայ: Դուք ինչ էլք կամենում ասել:

ԷՏԵԼ. Ես սարսափում եմ: Ելանի մի ամենալսուլ տեղ լինէք թաքնուելու: Աղքատ ժամանակներս լաւ էինք: համոգիստ ապրում էինք:

ԳՐՈՍՏԱՆ. Սհեւ կաց:

ՀԵՐՄԱՆ. Ես ինքս ամէն բան փորձեցի: Այս քանի օրը մօտս կանչեցի Ստեփանին: Ընկերների մէջ նա ապկեցութիւն ունի: Ստեփան, ասացի, այս ինչ ես անում, Դու ուսւ չեմ: Ամօթ չլի, հրէաների հետ ընկերութիւն ես անում: Թո վրայ խաչ կայ, նրանք ինչ

ունեն: Խոռվարաբները հրէաները չեն: Ապստամբութիւն անողները հրէաները չեն: Ոչինչ չօգնեց: ԳՐՈՍՏԱՆ. Լաւ էք արել որ այդպէս էք խօսել հրէաների մասին: Այդ պէտք է որ ազդի: ԷՏԵԼ. Ինչու էք դիպչում հրէաներին: ԳՐՈՍՏԱՆ. Քո ինչ գործն է: Շմատ բարիք ես ահաւել հրէաներից:

ԷՏԵԼ. Ես միայն մի բան գիտեմ: հրէաներին հարեւոր չի դիպչել...

ՀԵՐՄԱՆ. Եւ ինչ եղաւ Ստեփանի պատասխանը: Եղաւ երեկոյեանն ու բնակարանիս պատուհանները ջարդեց քարերով:

ԷՏԵԼ. Այ, տեսնում ես, Դաւիթ: Մի բան զիջում արանքանց... Մի քիչ կը հանգստանան: Ախար հօ մարդկանց հետ գործ չունես: Դրանք վայրենի գաղաններ են: ԳՐՈՍՏԱՆ. Թող գաղան լինեն... Թո գործը չի:

Ես ասում եմ՝ ոչ: Այսպէս էլ կը լինի:

ՀԵՐՄԱՆ. Լաւ: Մի քանի օր էլ կարելի է սպասել: Միայն... միայն...

ԳՐՈՍՏԱՆ. Ի՞նչ միայն:

ՀԵՐՄԱՆ. Ծանր է ինձ համար ձեզ վիշտ պատճառել...

ԳՐՈՍՏԱՆ. Ի՞նչ վիշտ: Ի՞նչ էք ծամծմում: ԷՏԵԼ (վախեցած). Աստուած իմ, էլ ինչ կայ: ՀԵՐՄԱՆ. Ես ձեր հաւատարիմն եմ և պէտք է բոլոր ճշմարտութիւնն ասեմ: Ես ձեզ կ'ասէի, մինչի անգամ եթէ օտարի մէկը լինէի—միայն երիտասարդին խղճալով:

ԳՐՈՍՏԱՆ. Գրողի բաժին լինէք, Հերման: Դուք ինձ ձլերք քցեցիք:

ՀԵՐՄԱՆ (*տատանուելով*). Դուք... Գիտէք, ով է ձեր դէմ:

ԳՐՈՍՄԱՆ. Ի՞նչպէս... Ո՞վ:
ԷՏԵԼ. Աստուած իմ...

ՀԵՐՄԱՆ. Ախար գործի մէջ ձեր որդու մատն էլ
կայ. պարոն Ալեքսանդրի: Ահա իսկութիւնը, որ ևս
իմացել եմ:

ԳՐՈՍՄԱՆ (ճշալով). Ա՛յդ...

ԷՏԵԼ (ապշած ձեռներն իրար է զարկում). Սա-
շենկան...

ՀԵՐՄԱՆ. Եւ այն, որ պարոն Ալեքսանդրը գոր-
ծադուլի մէջ...

ԳՐՈՍՄԱՆ (ընդհատում է նրան). Իմ Սաշան
Սուտ է: Իմ գէմ... Զեմ հաւատում...

ԷՏԵԼ. Մի հաւատայ, Դաւիթ, մի հաւատայ:

ՀԵՐՄԱՆ. Իմ մարդիկն ինձ ասացին:

ԳՐՈՍՄԱՆ. Իմ որդին..., Սուտ է... Էտել, ժւր
է նա: Այս բոպէխս կանչը նրան այստեղու թեր նրան:
Սուտ է, Հերման: Գլուխս կը տամ: Հը՛, էտել, լաւ
դաւակներ ես ծնել: (Էտելլ կորացած, դուրս է զնում):
Երդուեցէք, Հերման, որ այդ ճիշտ է:

ՀԵՐՄԱՆ. Երդուում եմ...

ԳՐՈՍՄԱՆ. Ուրիմն ես էլ որդի չունեմ: (Դողոսմ
է). Էտել, էտել, շնուտ արա: Համբերութիւնս հատաւ...

ԷՏԵԼ (ներս է վսպում). Նա տանը չի: (Դողոսմ
է): Դաւիթ ջան...

ԳՐՈՍՄԱՆ. Մարդ ուզարկէք կանչեն նրան: Գտէք
նրան: (Խօսքն ուղղում է իրան): Հանդարտ, Գրոսման,
հանդարտ: Մի վհատիր...

ՀԵՐՄԱՆ. Պարոն Գրոսման, ի՞նչ եղաւ ձեզ:
ԷՏԵԼ. Դաւիթ ջան, Դաւիթ, չարդ տանեմ...
Խնդրում եմ քեզ: Ահա ծունկ կը չոքեմ առաջիր, միայն
թէ դու հանգստացիր, դռւ: Երեխաներիդ մի նայիր—
միայն դժւ...

ԳՐՈՍՄԱՆ. Հեռացիր, Հանդարտ, Գրոսման, հան-
դարտ... Դու ճանաչնեմ էիր քո որդումն էտել, այս
ուային անգամը կը լինի, որ մենք իրար կը հանդիպենք
դէմ առ դէմ: Մենք կը դիտենք միմեանց: Հանդարտ,
Գրոսման, հանդարտ... Ի՞նչ ես արել դու, որ որդուդ
ճանաչես: Ո՞վ է տանդ:

ՀԵՐՄԱՆ. Պարոն Գրոսման, պարոն Գրոսման...

ԳՐՈՍՄԱՆ. Գնացէք, Հերման: Աշխատեցէք: Ես
անձնատուր չեմ լինում: (Բարկութեամը): Դէ մի զայ-
րացնէք ինձ ձեր պատասխաններովը: Գնացէք...

ԷՏԵԼ. Գնացէք, գնացէք: Տեսնում էք, ի՞նչ է ե-
ղել սա: Ա՛յս, Հերման, զարդ բերիք դուք մեր տունը,
տուր դանակ ցցեցիք իմ սիրտը...

ՀԵՐՄԱՆ (փնդվնմում է). Ես պարտաւոր էի
տեղեկութիւն տալ: (Դողոսմ է զնում: Գրոսմանը մեծ-
մեծ քայլերով ման է զալիս սենեակումը):

ԷՏԵԼ (աղերսելով). Դաւիթ, Դաւիթ ջան...

ԳՐՈՍՄԱՆ. Ը, ի՞նչ:

ԷՏԵԼ. Ինչի մասին ես մտածում: Հարկաւոր չի
մտածել, հարկաւոր չի: Թող բարկութիւնդ... Ի՞նչ լաւ
էր, երբ մենք աղքատ էինք: Հիմա հարուստ ենք. բայց
աղքեօք աւելի բաղդաւոր ենք: Առաջուայ հոգսերը չը-
կան, բայց նոր հոգսեր են դուրս եկել, աւելի վատե-
կան, սակայն սենեակներ, չորս կողմս փարթամութիւն,
ուը: Ահազին սենեակներ, չորս կողմս փարթամութիւն,
իսկ ես պարտաւում եմ այստեղ, ինչպէս մի անտէր կա-
տու: Ժենեան անբաղդ է... Մի բարկանայ Սաշայի
վրայ:

ԳՐՈՍՄԱՆ (միտքը ցրուած). Ման եմ գալիս ու
մտածում, թէ ի՞նչպէս պիտի հանդիպեմ նրան: Ախար
մենք պէտք է իրար երեսի մտիկ տանք: Էտել, փողի
մէջ կարծիս մի սարսափելի բան կայ: Ը, Դէ կայ
փողի մէջ: Ի՞նչ: Սաշային դու ճանաչնեմ ես: Ես ժա-

մտնակ չեմ ունեցել նրա մասին մտածելու, Ո՞վ է Սաշան, Բարձրահասակ է նա թէ կարճահասակ, Բեխերը դուրս են եկել, ի՞նչպէս է նրա ձայնը, բարձր է թէ ցած:

Էջել, Մեր Սաշան սիրուն է... նա բարի է... իլոյնչ չեմ իմանում ես:

ԳՐՈՍՄԱՆ (մտավոր), Բայց ինչու ոչինչ չենք իմանում:

Էջել, Նստիր, Դաւիթ: Ես կը խօսեմ ու դու կը հանգստանաս, Մենք երբէք իրար հետ զրոյց չենք առում, ինչպէս մարդ ու կին: Ե՞րբ ենք մենք ապրել, Դաւիթ: Կարծես... երբէք...

ԳՐՈՍՄԱՆ. Դու ասում ես, Ժենեան անբաղդ է, Ինչու է անբաղդ: Դատարկ բան է: Ինչի՞ մասին ես խօսում: Ապա մի է Մաշան:

Էջել, Սիրուն եմ նրան... բայց... ոչինչ չգիտեմ:
ԳՐՈՍՄԱՆ. Իսկ Պետեան:

Էջել, (փնթինթում է). Պետեան, Պետեան... Սիրուն եմ, դողում եմ...

ԳՐՈՍՄԱՆ (բորբոքուում է). Ուրեմն նրանք բուլորն էլ շնչն են: Բոլորն էլ իմն են: Ի՞նչ բան են երեխաները: Ի՞նչ ասել է իմն են: Իսկ եթէ իմն են...

Էջել, Այ, էլի արիւնը գլուխդ խփեց: Այ, էլի խելքդ թոցնում ես: Ի՞նչ երեխաներ: Միայն դու, միայն դու... Քեզ եմ ինդրում...

ԳՐՈՍՄԱՆ (վեր է կենում և զնում է առանձնասենեակը, Էտելը զնում է նրա յետելից: Ուժեղ), Ոչ, ոչ Ո՞վ եմ ես: Գրոսմանը: Գրոսմանը Գրոսման կը մնայ... Իմ երեխաները: Ի՞նչպէս չէ: Իմ երեխաները...

ՊԵՏԵԱՆ (մտնում է շոնը հետը, նստում է սենանի մօտ). Բայցը, դէսը: (Հանում է ծխախոտի

տուփի եւ ծխախոտ է կպցնում: Զանզը տալիս է: Մտնում է աղախինը):

ՊԵՏԵԱՆ (յանկարծ). Դուքս: (Աղախինը վախինցած դուքս է վազում: Պետեան շրջացնելով մօտենում է ըուլիսին: Ծոկրլատ է հանում եւ ուսում: Իրկին զանզը տալիս է: Նորից աղախինը ներս է զալիս): Դուքս: (Հընում է: Ծանը շոկրլատ է ուսուցնում):

ՎԱՅՑ (ներս է մտնում). Ես ձեզ եմ որոնում բոլոր սենեակներում: Պարապելու ժամանակն է:

ՊԵՏԵԱՆ. (կերակրում է շանը). Զեմ կամենում...
ՎԱՅՑ. Դուք չէք կարող չկամենալ: Ինձ համար ծանր է այստեղ՝ ի զուր փող ստանալը:

ՊԵՏԵԱՆ. Եթէ ձեզ վճարում են, այդ միենոյն բանն է:

ՎԱՅՑ. Այդ մասին ես ձեզ հետ վիճել չեմ կարող: Միայն թէ կողիտ մի վնիք: Այս է միայն, որ խնդրում եմ ձեզանից: Ես իրաւունք ուսիմ այս պահանջելու ձեզանից:

ՊԵՏԵԱՆ. (ուսերը վեր է քաշում). Զեմ հասկանում... (Ծրջացնում է եւ շանուն է զբաղուում):

ՎԱՅՑ. Ութան էլ որ ծանր է ինձ համար, բայց ես ստիպուած կը լինիմ յայտնելու ձեր հօրը, որ դուք պարապելուց հրաժարուում էք:

ՊԵՏԵԱՆ. Լսեցէք, Վայց: Քանի ասեմ ձեզ, որ ես հօրիցս չեմ վախենում: Մեծ բան է—հայրս... Ուսիմիկ էք ստանում, դէ գոն եղէք էլի...

ՎԱՅՑ. Դուք ինձ ծանր կացութեան մէջ էք դըգնում: Իսկապէս ես իրկոյն պիտի հեռանայի այս տանից ե... չեմ կարող: Մի մեծ լնտանիք ինձ վրայ է: Զանկացէք այս և գաղարեցըք ձեր յարձակումները: ՊԵՏԵԱՆ (կոպտոթեամը). Ինձ ի՞նչ ձեր ընտալունու:

նիքը: (Նայում է Վայցին: ծիծաղում է): Բայրըն, դէսը... (Երշուացնելով դուրս է գնում: Վայցը զլուխը կախ է բցում: Նստած է մտախոհ):

ՄԱՇԱ. (Ներս է մտնում: Զանձրոյթով պտրտում է սինեակում: Նստում է մի անկիւնում): Նոր նուագում էի... Թողի: Եկայ այստեղ տասներորդ սինեակից և այժմ պիտի նստեմ այստեղ, կարծես մէկին չարացնելու համար: Այսպէս մտածեմ, թէ ուրախ եմ: (Աչքերը փակում է): Ահա, Վայց...

ՎԱՅՑ (ընդհատում է նրան). Պետեան նոր ինձ վիրաւորեց... Ապա ինչո՞ւ ես չեմ հեռանում: (Չեոր թափ է տալիս):

ՄԱՇԱ. (աչքերը կիսափակ). Ահա, Վայց, ընտիր հասարակութիւն է իմ շուրջը, կաւալերներ ու դամեր նրանք փայլուն զրոյց ին անում ֆրանսերէն լեզուով: Մի գեղեցիկ կորնետ ընդհանուր ուշագրութիւն է գրաւում: Տեսէք, Վայց, ահա նա վեր է կենում: Ի՞նչ վայելչագեղ է նա: Կօշիկների խթանները զնզգնզացնում է: Նա անց կացաւ իմ առաջիցն ու կրակոտ հայեացք քցեց ինձ վրայ: Ես աչքերս խոնարհեցի: Նա ոտս կոխեց և ես ճշացի: Վայց, ամէնքը նայեցին իմ կողմը: Խօսակցութիւնները դադարեցին: Ի՞նչ պարզ մանուշակի հոտ է գալիս: Դուք, Վայց, կամենում էք այն յանդուզնին պատժել... Դուք նշանազգեստով էք և վայելչակաղմ: Ի՞նչ հիանալի մանուշակի հոտ է գալիս: Կորնետը գունատուեց: Դուք մօտենում էք և նրան երեսին ձեռնոց էք շպրտում: (Ծալլով): Վայց, դուք նրան ապտակ տուիք: Դուք նրան ապտակ տուիք...

ՎԱՅՑ. Ի՞նչո՞ւ էք ծիծաղում ինձ վրայ:

ՄԱՇԱ. Ո՞չ, ես չեմ ծիծաղում: Ես շուրջս ոչ ոքի չեմ տեսնում: Վեր կացէք, ուզգուեցէք: Ի՞նչո՞ւ էք դուք միշտ կորացած նստում: Միթէ դժուար է դաշտում:

վայելչակաղմ, պարթի: Զէ՞ որ դուք աղամարդ էք: Դուք վեհ նպատակներ ունիք: Ես ձեզ հետ եմ... (Յոդնած ծայնով): Ի՞նչ ձանձրալի է ամէն ինչ, Վայց, իս զգում եմ, որ հանգչում եմ: Ահա քաղած ծաղիկը դէն է քցած...:

ՎԱՅՑ. Սքանչելի հոգի ունիք դուք: Երբ ես լսում եմ ձեր ձայնը, ինչ ազնիւ բան կայ իմ մէջ, զարթնում է: Մաշա, աչքիս առաջ մարդ է մեռնում...

ՄԱՇԱ. (մոայլ). Թող մեռնի... Ապրելն ինչի համար է:

ՎԱՅՑ. Ի՞նչի համար: Մի սուրբ նպատակ կայ կեանքի մէջ: Այդ իւր հալածուած ազգի բաղդաւորութեան համար մաքառելն է: Բայց այդ մեզ համար չէ: Մի ուրիշ մեծ բերկրութիւն ևս կայ, Մաշա, որ կարող է կեանքի բովանդակութիւն լինել: Այդ բերկրութիւնն այն է, որ կայ Եւրոպա: Եւրոպայում, Մաշա, աշխատում են: Այս մեծ միսիթարութիւն է: Եւրոպան աշխատում է: Այստեղ խաւար, արհաւիրք, իսկ այստեղ լարորատորիաներում տիեզերական առեղծուածների լուծումն են որոնում: Հոկայական որոնումներ են լինում, Գաղատնիքներ են բացուում: Գիղալուեստի նոր ձևեր են մշակուում, զիտութեան ֆորմուլաներն են վերագնահատուում: Այստեղ համալսարաններում պրոֆեսորները գիտութեան սերմել են սերմանում և աղգերին հաղորդակից են անում կեանքի գերագոյն ըմբռանմանը: Ոչնչացնում են բարբարոսութիւնը, սպանում են գուեհկութիւնը:

ՄԱՇԱ. Իսկ ես Եւրոպայում չեմ ծնուել: Ափսոս: Ի՞նչո՞ւ էք դուք ինձ ազգի մասին բան ասում: Ի՞նձ: Դուք ամենաթանկագին արտասուքը թափում էք ժայռի վրայ:

ՎԱՅՑ. Մաշա...

ՄԱՇԱ. Ինչու էք ինձ ազգի մասին բան ասում:
Ո՞րտեղ: Այսանդ: (ծիծաղով է): Այս մեսեալ մարդկանց տան մէջ: Զէ որ մենք ոչ հրէայ ենք ևոչ քրիստոնեայ: Զէ որ Պետան ընդունակ է հրէային շնկի բերանը տալ... Ազգի մասին մի խօսէք... (Հոռվիճին): Ես նստած եմ ու ձեզ եմ նայում... (Յանկարծ): Վայց, կամենում էք փախչել ինձ հետ...»

ՎԱՅՑ. Ի՞նչ ասացիք դուք: (Վախեցած): Մաշա...,
ՄԱՇԱ. (մոռացոնքի մէջ). Դուք ինձ սիրում էք...
Փախչենք: Փախցրէք ինձ: Եթո որ լուսինը ծագի, ծեծեցէք իմ պատուհանը, և ես դուքս կը զամ ձեզ մօտ: Արագընթաց ձիան պատրաստեցէք: Մենք կը հեռանանք, և իմ թախիծը կը մեռնի...
ՎԱՅՑ. Դուք ինձ ծաղրում էք:
ՄԱՇԱ. Ես սարսափում եմ այս անապատ սենեկաներում, ինձ սպանում է գոհհկութիւնը: (Թափծալից): Ինձ սպանում է գոհհկութիւնը...»

ՎԱՅՑ (դողդոնն շնչնով). Ես ձեզ սիրում եմ...
ՄԱՇԱ. (զարմացած նայում է նրան), Դուք: Ի՞նձ: (ծիծաղով է): Ակնոցով ուսուցիչը: (ծիծաղով է): Գուկերնեցը: Ի՞նձ: (Յանկարծ): Ծունկ չուքցէք: Խսկան, ես կամենում եմ: Զեր սէրը յայտնեցէք ինձ: Յայտնեցէք բանաստեղծօրէն, գեղեցիկ... Բարձրահասակ վայելչակազմ պատանի... Բարձրահաշակ քնքուշ պատանի...»

ՎԱՅՑ (ծունկ է շոքում). Այն, այն... Բայց ինչու էք լալիս: (Թայլերի ծայն է լսում):

ՄԱՇԱ. Մարդ է գալիս: Վեր չկենաք..., կամենում եմ... Ուսուցիչ Կայցը ծնկաչոք...

ՎԱՅՑ (ցած ծայնով). Այս խայտառակութիւն է...»

ՄԱՇԱ. (նայում է նրան: Յոզնած). Վեր կացէք: (Մտնում է Ալեքսանդրը: Զեռ է տափս Վայցին):

ԱԼԵՔՍԱՆԴՐ (Վայցին). Արտագրեցիք:
ՎԱՅՑ (երկար ժամանակ չի պատսախանում: Աշխատում է յուզմոնքը զապել). Արտագրեցի...»

ԱԼԵՔՍԱՆԴՐ (զանգը տափսէ. մտնում է աղախինը). Նախաճաշիկ բերէք ինձ համար... (Աղախինը զնում է: Լսում է Գրումանի ծայնը. «Մաշան եկե՞լ է: Ո՞րտեղ է»):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Հայրս կանչում է ինձ: Գրուստան (ներս է մտնում). Մաշա...
ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ես քեզ պէտք եմ, հայրիկ: Գրուստան (կուպտութեամբ). Ի հարկէ: Զէ որ ասում եմ Մաշա...
ԱԼԵՔՍԱՆԴՐ (զարմացած). Ինչու ես զուսում: Գրուստան. Որովհեան ես հայր եմ և կարող եմ գոռալ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ (մոայլ). Ոչինչ չեմ հասկանում: Գրուստան (կոշտութեամբ Վայցին եւ Մաշային): Դուքս գնացէք այստեղից... (Վայցն սրագ դորս է զնում):

ՄԱՇԱ. Հայրիկ, զու ջաղացումը չես: Գրուստան. Իսկ ես կամենում եմ լինել այնպէս, ինչպէս ջաղացումն եմ լինում: Ես ձեր հայրն եմ թէ ոչ: (Գոռալով): Ո՞վ է այստեղ հայր, հարցնում եմ: Այստեղ, սենեակում ով է հայր... (Մաշան ուսերը վեր է բարում եւ դորս զնում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ե, լաւ, զու ես հայր: Յետքյ: Գրուստան. Յետքյ: Մուս: Զհամարձակն ինձ հատայդպէս խօսել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Դէ, լաւ, լաւ: Բայց ինչու ես դու զուսում:

ԳՐՈՍՏԱՆ. Ինչու: Դու համարձակութիւն ունիս երեսիս նայելու: Ո՞ւր է քո խիզճը. ցոյց տնուր ապա...»

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Դու այնպիսի եղանակով՝ սկսեցիր
ինձ հետ խօսել, որ այլ ես չեմ պատասխանում քեզ:
(Շուր է զալիս):

ԳՐՈՍՄԱՆ (զայրացած դարձնում է նրան դէ-
պի ինըը). Ես քեզ կ'ստիպեմ պատասխանել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Զեռու քաշիր...
ԷՏԵԼ (ներս է վազում). Դաւիթ, բաւական է:
Ախար սա մեր որդին է, մեր...

ԳՐՈՍՄԱՆ (զայրոյթով). Հեռացիր ինձանից...
Մեր որդին, Սա մեր նախատինքն է: (Ալեքսանդրն
ուզում է դրսու գնալ): Զամարձակուես հեռանալ, ի՞նչ:
Ասում եմ, չամարձակուես հեռանալ, եթէ ոչ, ես կը
հրամայեմ կապել քեզ: Ուզեմ ծեծ կը տամ քեզ: Ծե-
ծի տակ կը մահացնեմ... Սնես կաց,

ԱԼԵՔՍԱՆԴՐ (մօրը). Ի՞նչ է պատահել սրան
այսօր:

ԷՏԵԼ (լալիս է). Դու էլ ես լաւ, Ինչու ես հօրդ
դէմ գնում, այսպիսի հօր դէմ: Սրան նայիր: Ախար
այս կէս ժամումը տասը տարով ծերացաւ քեզ համար
այրուելուց: Զես խղճում սրան: (Բարձրածայն լաց է
լինում): Այսպէս են մեր զաւակները մեզ ուրախա-
ցնում: Ժենեան էլ երեխաների սենեակումն է փակուել,
լալիս է ու մօտը մարդ չի թողնում...

ԳՐՈՍՄԱՆ (կնոջը). Հերիք է: (Որդուն): Սաշա,
ահա ես ինձ զսպեցի: Արիւնը գլուխս տուեց, երբ որ
քեզ տեսայ: Ահա դարձեալ բարկութիւնը խեղում է
ինձ... Հանդարտ, Գրհսման, հանդարտ... Հանգիստ,
սառնարտութեամբ... (Որդուն): Դու բանուըրներին
սովորեցնում ես, թէ ինչպէս ինձ աւելի մլաս հաս-
ցնեն: Այդ իմ գլխումը չի նստում: Ինչու. Ի՞նչ վատ
բան եմ արել քեզ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ (յամառութեամբ). Ոչի՞նչ...

ԷՏԵԼ. Բայց ախար սա քո հայրն է, քու...
ԳՐՈՍՄԱՆ (բորբոքում է: Կնոջը). Ո՞ւմ հետ
ես դու խօսում: Սա արդէն սիբիրական է: (Դանում
է ղէպի որդին): Դու... (Ոտները գետնովն է տալիս:
Մի րոպէ լարուած լութիւն: Անմիտ կերպով գոռում
է): Դու—անիծուած սոցիալիստ ես... Սոցիալիստ... իմ
տանը: Իմ որդէն... (Ոտները գետնովն է տալիս):
ԷՏԵԼ (ծեռներն է կոտրատում): Խեղճ անբաղդ...

ԳՐՈՍՄԱՆ. Այս ի՞նչ ենք մենք մեծացրել: Դէ
ի՞նչ ես ուզում մեզանից: Պատասխանիր, նզովուած:
Բուց մորթել ես ուզում, Դէ, մորթիր ինձ: Ատրճա-
գուց մորթել ես ուզում: (Բոնում է նրա ըլուզիցը):
Նակ ես պահել զբանումդ: (Բոնում է նրա ըլուզիցը):
Այս ի՞նչ ըլուզ է հագիր: Քհնն է: Սուտ ես ասում...
Այս ի՞նչ ըլուզ է հագիր: Քհնն է: Սուտ ես ասում...
Համիլ բլուզդ: Այս բոպէիս: Այս բոլորն իմն է: Իմ
փողովն է գնուած: Մերկ գուրս կ'անեմ քեզ: (Աղա-
խինը նախաճաշիկ է ներս բերում, Գրումանը ամանե-
լինը նախաճաշիկ է ներս բերում, Գրումանը ամանե-
լինը շպլոտում է գլուխին: Նոր զայրոյթով): Դուքս
ները շպլոտում է գլուխին: Նոր զայրոյթով): Դուքս
այստեղից այս բոպէիս, մօրէ մերկ: Դուքս ոտարո-
բիկ... Ես քեզ իմ դէմ կոռուել ցոյց կը տամ: Օ՛հ, դու-
գեռ Գրումանին չես ճանաչում: Գրհսմանին, Գրհս-
մանին... Ես կ'սպանեմ քեզ... (Մօտ է վազում նրան
ու ծեռը բարձրացնում է սպանալից):

ԱԼԵՔՍԱՆԴՐ (հանգիստ). Ապա:
ԷՏԵԼ (ծում է). Ի՞նչ էիր ուզում անել, Դաւիթ:
Ո՞ւմ էիր ուզում խփել: Սաշենկա, հեռացիր հիմա:
ԳՐՈՍՄԱՆ (ահարկու ծայնով որդուն). Նզովեալ
լինիս... (Կնոջը): Դու ես սրան այսպէս մեծացրել...
Սաշենկա, Սաշենկա... Այ քեզ Սաշենկա: Սրա դէմ-
քին նայիր: Միթէ նման է մեզ: Դանակ կայ սրա ձե-
ռին: (Դարձեալ մոլեզին), Ի՞նչ ես լուս կացել, նզո-
վուած: (Ոտները գետնովն է տալիս: Ալեքսանդրը
յամառութեամբ լուս է կացել),

ԷՏԵԼ. Գուցէ գեռ դու ուզում ես մեղ թողնել էր (իսելայեղ): Զէ, չէ, ես քեզ բաց չեմ թողնի... ես չեմ ուզում: Դու Բնի ես: Զէ, չէ... Ես քեզ կոներիս վրայ եմ ման ածել, իմ կաթովն եմ կերակրել: Զէ, չէ, որդինակո, անհեշտ...

ԳՐՈՍՄԱՆ (կատաղութեամբ). Մի բան ասա... Խօսիր... (Ոտները զետնուին է տալիս, Հսուում է ատրճանակի պայմանին: Էտելը սարսափիած նստում է):

ԷՏԵԼ. Ասուուած իմ... Սնբաղդութիւն: Այս էր, որ ամբողջ օրը սիրառ լալիս էր: Ասուուած իմ... (Դուրս է վազում: Հսուում է աղմուկ եւ աղաղակի):

ԳՐՈՍՄԱՆ (յետ է նայում). Ի՞նչ է պատահել այսուեղ... Ի՞նչ...

ԷՏԵԼ (ներս է վազում, մազերը պոկտում է). Ի՞նքն իրան խփել է: Ժենիչկան իրան խփել է: Դաւիթ, Դաւիթ, մեռնում եմ: Վերջացաւ մեր կեանքը... (Ամէնքը ծիչ են արձակում: Ալեքսանդրին իրան ըցում է սենեակները, Գրումանը վազում է նրա յետելից: Էտելն ուժասպան ընկնում է աթոռի վրայ):

(Այսուհետեւ մասնաւու անձնական ուր մասն նորուի չ ան' Ա ու Ա) . . . ըստ նույնական ուր մասն նորուի չ ան' Ա ու Ա

(Այսուհետեւ մասնաւու անձնական ուր մասն նորուի չ ան' Ա ու Ա)

Այսուհետեւ մասնաւու անձնական ուր մասն նորուի չ ան' Ա ու Ա

ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ԳՐՈՍՄԱՆԻ առանձնասենեակը: Մեծ, հարուստ սարք ու կարգով սենեակ: Երկու վենետիկան լրասամուտ նայում են դեպի հրապարակը: Ցերեկը այդ լրասամուտներից ջաղացը պարզ երեսում է: իսկ այժմ նազի նշմարուում է նրա բոլոր շենքերի մոայլ սոսերանկարը: Սենեակում երկու զրասեղան կայ, մէկը՝ նոր, շըեղ, որի առաջ ԳՐՈՍՄԱՆՆ ընդունում է այցելուներին, միաը՝ հասարակ: ԳՐՈՍՄԱՆԸ հաւատում է, որ այս մէկը բաղդ է բերել իրեն եւ, երբ որ օտար մարդիկ չեն լինում, սովորաբար հին սեղանի սուած է նստում: Զախ կողմում երկաթէ պահարան: Պատի տակին երկու ճանապարհի սնդուկ: Սենեակը լրասամուտում է ելեքտրականութեամբ: Չորս կողմում զարդի մանր առարկաներ, ոսկէզօծ շրջանակով պատկերներ եւ առանձին ԳՐՈՍՄԱՆԻ մեծ պատկերը: Երկու դուռ: Աջ կողմում՝ թիկնարան: Նրա վրայ ընկողմանած է ժենեան: Նրա ձեռը կապած է կրծքին անյաջող մահափորձից յետոյ: Սեղանի սուած նստած է ԳՐՈՍՄԱՆԸ եւ սիզար է ծխում: Նրա հանդէպ նստած է ԷՏԵԼԸ: ԷՐԵԼ, զինարկը ծեռին, կանգնած է յարզական դիրքով եւ լսում է: Երբեմն երբեմն խուլ աղմուկի ճայն է լսում:

ԳՐՈՍՄԱՆ. Զեզ աշխատավարձ կը հասնի յիսուն ոռոքի, է՛ր: (Հանում է զրապանից քանկը եւ համարում է): Քսակումս ընդամենը երեսուն ոռոքի կայ:

Առայժմ առէք երեսուն: Երբ որ վերադառնամ, հաշիւը կը մաքրենք:

ԷՐԾ. Ի հարկէ, լաւ կը լինէք, բոլորն ստանայի, պարոն Գրոսման: Շատ նեղ ժամանակ է... Բայց եթէ դուք այդպէս էք կամենում, թող այնպէս լինի, ինչպէս դուք էք կամենում:

ԳՐՈՍՄԱՆ. Դուք հօ վազուցուայ ետ եկածն էք, ձանաչում եմ ձեզ: Մինչև անգամ գրազ կը գամ, որ դուք ինձ մէկին մէկ խարել էք: (Ժիճաղում է): Բայց ես չեմ բարկանում: Հաւանում եմ, որ դուք վազուցուայ ետ եկածն էք, և ես սիրում եմ, որ ինձ խարում են... կիսով չափ: Խարեցէք յիմար Գրոսմանին, կողոպտեցէք նրան:

ԷՏԵԼ. Ինչու ես, տանջում մարդուն:

ԷՐԾ. Ե, բնչ տանջել է: Ես մինչև անգամ չեմ զգում: (Ժիճելով): Գուցէ, պարոն Գրոսման, ձեռներիդ էլի մի տասը ոռորդի գտնուի:

ԳՐՈՍՄԱՆ. Զէ, չէ: Ոչ մի կոպէկ չկայ: (Ժսակի մէջն է նայում): Ուզիղ չասացի: Քսակումս մի կոպէկ մնացել է: (Ժիճաղում է): Գրոսմանի քսակումը մի կոպէկ կայ: (Էրշը հաճոյանարով ժապում է): Ուրեմն, ե՛րշ, մեր հաշիւը վերջացած է: Ասացէք այն բոլոր սրբկաներին, որ վազը Գրոսմանը արագ գնացքով ուղևորուում է Եւրոպա: Այ, տեսնում էք, մինչև անգամ սնդուկները կապկապած են: Հինգ անպիտան են ընտրել ու կարծում էին, թէ Գրոսմանը նրանց հետ խօսողն է: Յիմարներ: Ի՞նչ: Դուք ասում էք, նրանք այնտեղ աղմուկ են անում: Շատ լաւ են անում: Այդ ինձ համար միայն մի ախորժելի երաժշտութիւն է: Քունս լաւ կը տանի:

ԷՐԾ. Ուրեմն դուք իրաւ որ գնում էք: Հաւա-

տալս չէք գալիս: Ասում էին, ասում, տես որ ճիշտ եղաւ: Հիմա սով կ'ընկնի...

ԳՐՈՍՄԱՆ (զրհ). Հիմա լաւ սով կ'ընկնի: Մի պսափկ լաւ սով: Օգով կը կշտանան նրանք: Իսկ երբ որ վերադառնամ, կ'առաջարկեմ մի փոքրիկ միութիւն կազմակերպել բանուորների դէմ: Մինչև իմ դալը յիմար յեղափոխութիւնը ճնշուած կը լինի ու քէֆներս կը լաւանայ:

ԷՐԾ (համոզուած). Դուք էլի հնար կը գտնէք նրանց հետ կռուելու: Ելի կայ ու կայ...

ԺԵՆԵՆ. Բաւական է, հայրիկ, ես ձանձրանում եմ...

ԳՐՈՍՄԱՆ. Ժենիչկա, գլուխդ պատուհանիցը հանիր, կը լսես, թէ ինչպէս են բանուորներն սկսում մլաւել սովից առաջ: Այդ քեզ կը գուարճացնի:

ԷՏԵԼ. Այդ ի՞նչ հանաքներ են: Զէ որ հրէաներ են այստեղ: Սիրտս էլ մի տեսակ անհանգիստ է: Ի՞նչ կ'ասէք, ե՛րշ: Ուրախանալու բան չկայ, այնպէս չէ: Երկիրը վառուում է, եռում է, գոռում է, արիւն է թափուում: (Հոզոց քաշելով): Հանգստութիւն չկայ, ե՛րշ, չկայ, և պէտք է հեռանալ: Մի նախանձէք մեզ: Ե՛րշ, ես երբէք ոչ ոքի չեմ նախանձել: Ես իմ ճանապարհով եմ գնում: Իմը ջոկ է: Ի՞նչ որ Աստուած տուել է ինձ, հէնց այն է լաւը:

ԷՏԵԼ. Եւ ի՞նչ ընկաւ նրանց ձեռը, ձեղ եմ հարցնում: Ախար ես խղճում եմ հրէաներին: Ահա սա գնում է: Զաղացը պիտի մնայ կանգնած մեռելի նման ու ամէնքին վախացնի: Երեխէքը կը կոտորուեն:

ԷՐԾ. Կը կոտորուեն, տիկին Գրոսման: Աև յաւ էին ուղում նրանք: Այ, հիմա ստացան: Սըանից էլ վատ օր երբէք չի հղել: Իսկ մի խումբ շառլատաներ հաւաքուում են, գոռզուում, գլխները կորցրել են ա-

մէնքը, ողբ ու անէծք է լսուում ամէն բնակարանից 0', շատ վատ է, շատ...

ԷՏԵԼ. Ես մի բան միայն կուղէի հասկանալ: Ի՞նչ է արել նրանց իմ մարդը, ի՞նչ: Զարչարել է նրանց Նեղացրել է, վարձներն է կարել: Ի՞նչ կարելի է ուղել Դաւթի նման մի մարդուց: Կարող էր, վարձներն աւելացրեց անցած տարի: Մի հարցրէք, ի՞նչ չի արել նրանց համար: Ես միշտ ասել եմ. մարդկանց վատու թիւն արա, նոր քեզ պատիւ կը տան:

ԷՐԾ (զգուշութեամբ). Ասենք՝ բարութիւնը մի քիչ աւելի լաւ է: Զեմ ասի՞ շատ, բայց մի քիչ լաւ: Բարութիւնը վնաս չի լինի...

ԷՏԵԼ. Ել ի՞նչպէս լաւ է: Որ նրան աւազակ էն անուանում: Մի այս աւազակին տեսէք: Ամբողջ աշխարհն է կողոպատել:

ԳՐՈՍՄԱՆ. Մի նստէք այստեղ, ԵՌՉ. Այդ անցած բան է, սնդուկներս կապած են, բայց խօսքը մեր մէջ լինի, ասացէք, ում եմ ես մի վատութիւն արել կեանքումս: Երբեկցէ խփել եմ մի բանուորի, Եթէ Հերմանը մէկ-մէկ ձեւներն էլ բանի է դրել, ու այն Հերմանն է: Նա հօ աւազակ է: Բայց թու, թու Ախար ի՞նչ են ուզում նրանք: Որ զբամարկում—այ, այս զբամարկը, տեսէք,—բաց անեմ նրանց առաջ ու հեռանմամ: Բայց ես դեռ, փառք Աստուծոյ, խելքս չեմ թըռցրել: Ի՞նչ է, ԵՌՉ. Թէ զուք այդ կ'անէիք զուցէ: Դէ նստէք, է, ԵՌՉ: Զեզ են խնդրում:

ԷՐԾ (խօսքը կտուրը ըցելով). Պարոն Գրոսման, ես պէտք է զնամ աշխատելու: Այս շնչքիս, թէպէտ արդէն հասակով են, բայց դեռ նստած են երեխէքս—մի աղջիկ, մի տղայ և էլի մի տղայ: Նստել էլ ես չեմ կարող, ի՞նչ է նշանակում նստել: Միթէ ես իմ տեղը կարող, ի՞նչ է նշանակում նստել: Միթէ ես իմ տեղը չեմ ճանաչում: Դուք փառք Աստուծոյ, պարոն Գրոսմանը ճանաչում:

մանն էք, ես... փառք Աստուծոյ, Երշն եմ: Փառք Աստուծոյ: Կարող եմ կանգնել... (Փալում է): Իմ տանը, պարոն Գրոսման, մի կօշկակար է ապրում, Շմիլ է անունը: Ե՞ն, մարդ է: Վատ մարդ չի: Եւ հանաք սիրող է: Նա սիրում է ասել. «մարդ: Ի՞նչ բան է մարդը: Երկրի թագաւորն է... թագաւորը»: Ես երկրի այն թագաւորներիցն եմ, որ կարող են կանգնած մնալ պարոն Գրոսմանի առաջ:

ԳՐՈՍՄԱՆ (ղժգոն է, բարկանում է). Այդ, այդ ինձ դուք չի գալիս: Ձեր Շմիլը շատ ու շատ յիմար է և երկի շառլատան է: Այդ նա է երկի աշխատաւոր մարդկանց վչացնողը: Այդպիսի Շմիլների պատճառով ջաղացները խափան են մնում, բանուորներն ապստամբում են, իսկ տէրեն ստիպուած են լինում հեռանալ եւրոպա: Մարդը երկրի թագաւորն է: Ոչ, ԵՌՉ, ոչ, Եթէ Շմիլներն, այ, այսպէս ասէին, խաղաղութիւն կը լինէք: Դէ, նստէք, ԵՌՉ, կողքի մի ընկնէք...

ԷՐԾ. Իսկ ես միշտ ասել եմ, թէ պարոն Գրոսմանը թագաւոր է... Տունը թագաւորի տուն, փառք Աստուծոյ... Փողը՝ ինչքան որ թագաւորն ունի:

ԳՐՈՍՄԱՆ. Իսկ նրանք ձեզ, 'ի հարկէ, չէին հաւատում... Հին պատմութիւն է: Բայց նրանք ստիպուած կը լինեն հաւատալ: Ես այնպէս կ'անեմ, որ նրանք Գրոսմանին չեն մոռանայ: Իրանց թոռներին Գրոսմանի պատմութիւնը կ'անեն: Ես նրանց ցոյց կը տամ, թէ ով է թագաւորն ու ով չի: Առաջինը, ԵՌՉ, էլ ոչ մի հրէայ չի բանի իմ ջաղացումը: (Վեր է կենամ): Ոչ մէկը... Ինձ հրէայ պէտք չի: Ի՞նչի՞ համար են: Առանց նրանց զործ չի կարելի անել: Գրողի ծոցն այդ շառլատանները: Միայն ոռւանները գործ կը գտնէն իմ ջաղացումը... Այս մէկ...

ԷՏԵԼ. Տեսնում էք, ԵՌՉ. Ա՞յս էին ուզում: ԷՐԾ (շփոթուած). Այս, տիկին Գրոսման: (Զգուշութեամբ). Պարոն Գրոսման, ևս պէտք է տուն գնամ: Ուշ է... (Ժենեան քամակն անում է Էրշին ու ականջները փակում):

ԳՐՈՍՄԱՆ. Կ'երթաք, ԵՌՉ. Ախար ես դեռ զլիաւորը չեմ ասել ձեզ: Վերադառնալուցու յետոյ, ԵՌՉ եթէ մէկն ու մէկին միտ բերեմ, այդ ի հարկէ դուք կը լինիք:

ԷՐԾ (զգում է սպառնալիքը): Վախեցած: Աշխատում է ժպտալ). Ե՞ս: Ի՞նչո՞ւ հսկ Քաղաքումն էլ մարդ չի մնացել:

ԳՐՈՍՄԱՆ. Անմեղ գառը մի ձեանաք, Միրոնը ձեր որդին է թէ չէ: Ո՞վ էր ամէնից բարձր աղաղաձեր որդին է: Ո՞վ էր հկել ինձ հետ խօսելու: Ի՞նձ հետ... Ես, ասենք, խօսել ցոյց տուի նրան... Ել չի համարձակուի: Բայց դնաք, ԵՌՉ. դուք ժրտեղ էիք, Ձեզ պէս հօրը կտոր-կտոր պէտք է անել, որ որդում լաւ չի խրատում:

ԷՐԾ (արագ). Այդ ուղիղ չի, պարոն Գրոսման: (Ամաշում է): Գուցէ մի քիչ ուղիղ է... Գուցէ... ամէն սաի մէջ մի փոքր ճշմարիտ բան կայ և ամէն ճշմարտութեան մէջ մի փոքր սուտ: Բայց հաւատացէք, որ մեղաւորը տիկին Գրոսմանի քոյլ Մանեան է: Նա է անիծում: Նա է անէ տուն քաշ գալիս ու դոսում, թէ պէտք է ջաղացն այրել...

ԷՏԵԼ. Ո՞վ կը հաւատայ ձեզ, ԵՌՉ. Գրողը տանի Մանեային, ևս նրան ճանչում եմ: Բայց ձեր Միրոնի նմանն աշխարհ չի եկել դեռ: Ո՞վ փչացրեց իմ որդուն, թէ Միրոնը չի...

ԷՐԾ (սարսափով). Ի՞նչպէս, դուք այդ բանին էլ էր հաւատում: Ա՛խ, տիկին Գրոսման, տիկին Գրոս-

ման: Սուր դանակ խրեցիք սիրտու: Ախար ևս հայր եմ: Միթէ ևս հայր չեմ: Թէ նա մայր չունի, ու մենք արտասունք չենք թափում զիշերները: Ի՞նչ ասացիք: Յսուն ու հինգ տարի է ապրում եմ աշխարհի երեսին ու միայն մի աղօթք ունեմ, որ խնդրում եմ Սասուն առածածանից, թէ՝ «Աստուած, այսպէս արա, որ ամէն տուածանից, ԵՌՉ (աշխատուած, այսպէս արա, որ ամէն առաջաջուայ պէս լինի, թող ամէն բան մնայ տեղում, ինչպէս որ եղել է... Ի՞նչի՞ համար են այս փոփխութիւնները, ինչի՞ համար է այս աղմուկը: Միթէ խեղճ երկիրը քիչ է տանջուում: Խեղճ երկրին նայեր: Երեխայի պէս լաց է լինում, գառան նման արակաջախ է լինում: Թող առաջուայ պէս լինի... Ես չեմ խրատում իմ որդուն: Ե՞ս: Պարոն Գրոսման, դուք հայր էք, ևս էլ եմ հայր, ինչ էլ որ ասելու լինիք: Հայր ձեր տանն էք լաց լինում, մենք էլ մեր: Ախար դուք ձեր տանն էք լաց լինում, մենք էլ մեր: Ախար իմ խեղճ Միրոնին փչացնողը պարոն Ալեքսանդրն է: Իմ Միրոնն ինձ է քցել: Նա ինչպէս մի աղջիկ լինէր: ԷՏԵԼ. Հերիք է, ԵՌՉ. Քարերը տեղահան կը լինեմ ու ձեզ կը քարկոծին:

ԷՐԾ. Տիկին Գրոսման, հաւատացէք ինձ, ապա ևս չեմ աղաչել ձեր որդուն: Ախար ևս ծունկ եմ չոքել առաջինը: Պարոն Ալեքսանդր, ախ, պարոն Ալեքսանդր, ինչու էք գալիս իմ տունը: Միթէ դուք պատահած իմ որդին չէք: Դուք հարուստ էք, իմ որդուն Գրոսմանի որդին չէք: Դուք հարուստ էք, իսկի աղդին բանուոր է... Ի՞նչքան կ'ուզէք՝ խնդրէք, իսկի աղդին ուզում է: Ա՛խ, պարոն Գրոսման, ամէն բան տակն ուզում է: Ա՛խ, պարոն Գրոսման, ամէն բան տակն ուզում է: Եղել Արին ու մշուշ է պատել անբաղդ երկվայ է եղել: Արին ու մշուշ է պատել անբաղդ երկվայ է եղել:

ԷՏԵԼ. Իսկ ևս ձեզ ասում եմ, ԵՌՉ, որ ձեր որդին է մերին փչացնողը:

ԷՐԾ (աղերսում է). Տիկին Գրոսման...

ԷՏԵԼ. Ես ձեզ ասում եմ, որ ձերն է մերին փչա-

ցնողը, ի՞նչ էք սարու քոլ քցում: Ո՞ւմ էք ուզում հաւատացնել, որ մի հարուստ, լուսաւորուած մարդ ինքն է մի բանուորի մօտ գնացել: Այդ երբէք չէր կարող լինել, եթէ նրան չփշացնէին: Ել ի՞նչս պակաս կը լինէր, եթէ Սաշան Միբոնի հետ գործ չունենար... Իսկ հիմա լաց եղիր, ասա, պատէպատ ընկիր,—զուր բան է: կորած է որդիս...

ԳՐՈՍՄԱՆ (մհայլ). Ի՞նչ անենք, որ կորած է: Լսել չեմ ուզում այդ մասին: Զաւակներ... կարծես դրանցից բարձր էլ բան չկայ: Կորած է՝ կորած,—զբողը տանի վատ բանը: Հիմա պէտք է Պետեայի թղթերն ուզիմ զիմնազիայից, իրան էլ տանեմ ջաղացը: Թող յիմարներն ուսում տան իրանց որդոցը:

ԷՏԵԼ. Ի հարկէւ Պէտք է այնպէս անել, որ նրանք մանէթի համա առնեն, այն ժամանակն էլ գործից պոկ չեն գայ, ինչպէս ճանճը մեղրիցը:

ԷՐՇ. Ես դնամ, պարոն Գրոսման: Բարի ճանապարհ ձեզ... Գուցէ դուք էլի մի բան կը տաք ինձ: Գոնէ մի հինգ րուրիլի: Չմեռ է վրայ գալիս...

ԳՐՈՍՄԱՆ. Եւ եթէ որդուս իմ գէմ գնալը մի դարդ է, այդ դարդը ես սրտում խոր թաղել եմ: Ոչ ոք Գրոսմանի դարդը չի տեսնի: Գնացէք, ե՛րշ, ես յոզնել եմ, քունս տանում է, բացի գրանից հաշիւներ կան վերջացնելու:

ԷՐՇ. Ուրեմն չէք տալիս: Դուք քարի պէս պինդ էք: Բարի ճանապարհ ձեզ: (Գլուխի է տալիս): Բարի ճանապարհ... Ա՛լ, պարոն Գրոսման, պարոն Գրոսման... (Կաղալով դրւոս է զնում):

ԷՏԵԼ (անտարբերութեամբ). Գնաք բարով, ե՛րշ... (Գրոսմանը խորասուզուած աշխատում է: Լոռութին):

ԺԵՆԵԱ. Արժէ՞ր այդքան երկար նրա հետ խօսել: Դուք ինձ բնաւ չէք խղճում: Չեսս գնդակով տուած

պառկած եմ, վէրքը մղկտում է, սիրտս աանջուած ու արտում, գլուխս յոզնել է մտածմունքներից, իսկ ձեր հոգը չի: Էրշը ձեզ համար ինձանից թանգ է:

ԷՏԵԼ. Էլ չեմ անի: (Մօտենում է նրան) Ել չեմ անի, չարդ տանկմ, նահատակմ...

ԳՐՈՍՄԱՆ (բարձր ծայնով). Մի գոռաք: Այնքան դեռ գործ ունիմ, քունս էլ տանում է: (Համրիչ է բցում):

ԷՏԵԼ (ցած ծայնով). Խեղճն իրաւունք ունի: (Աւելի ցած): Եաշան երկու անգամ եկել է, իսկ ես ներս էլ չէի ուզում թողնել նրան... Օ՛, ես չեմ ներիլ նրան վէրքիդ համար...

ԺԵՆԵԱ. Ի՞նչ հարկաւոր է այդ խսութիւնը, մայրիկ: Ախար նըա հոզին էլ է գուրս եկել... Ես ինձ գնդակով տուել եմ: Միթէ այս ճիշտ է: (Աղաղակելով): Ես ինձ գնդակով տուել եմ: Մայրիկ, ի՞նչ կը լինէի ես, եթէ գնդակը սրտիս զիպէւր: Ես գերեզմանում պառկած կած կը լինէի: Ես գերեզմանում: (Ցնցուում է): Այս ձեռներս որդերը պիտի ուտէին: Աչքերիս մէջ որդերը պիտի եռային, գեղեցկութիւնս հող ու մոխիր դասնար: (Ցնցուում է): Ի՞նչ լաւ եղաւ, որ անյաջող արձակեցի տարձանակը: Մայրիկ, ես այժմ սիրում եմ կեանքը: Սիրում եմ, ի՞նչ զեղեցիկ է աշխարհը... Կայ արև, կայ հեռանկար, կայ ծով...

ԷՏԵԼ. Անուշ...

ԺԵՆԵԱ. Շատ բանի մասին մտածեցի, մայրիկ: Ինչու էի կոուում Եակովի հետ: Մի մտածիր, յանուն ինչի: Միթէ հողը միակերպ պիտի չծածկի և ցածութիւնը, և վեհութիւնը, և վսեմը, և ստորը: Որդերը կը խնայթն գեղեցկութեանը: (Ծիծաղում է): Ախար զու չես հասկանում, խեղճ մայրիկ: Ես գործ եմ հրճուանքից: Ես ուրախութիւնից հարբել եմ: Ես ապրում եմ,

ապրում... (Մելամաղօրէն): Կարօտել եմ երեխաներիս: Գգուանք եմ ուզում: Գրկիր ինձ:

ԳՐՈՍՄԱՆ. Տգոցներդ կտրէք: Գնալուց առաջ պէտք է մեր դրամական գործերը կարդի քցենք, դումար տանք: Թղթեր ունիմ երեք հարիւր հազարի: Ես երբէք չեմ փորձել հարստութիւնս հաշուելու, բայց, փառք Աստուծոյ, Գրոսմանը բաւականին փող է կիտել: Զէ, Գրոսմանն իր բանը գիտէ: Կանխիկ ունիմ Գրանսիական և անգլիական բանկում մօտ չորս հարիւր հազար, ընդամենը հօթ հարիւր հազար: Օհօ, վատ չի: Զաղացը չեմ հաշուի: Գնած հողս էլ: Տները չեմ հաշուի: Հիմա տեսնենք, ինչ կայ մեր դրամարկղումը: Դէմն արի, էտել,—կ'օգնես ինձ:

ԺԵՆԵԱ. Էլի փող: Աւելի լաւ է ինձ հետ խօսէք: ԷՏԵԼ (զնում է մարդու մօտ: Ծիծաղելով). **ՓՌԴ...** Զէ որ փողն Աստուած է... Անխելք. Բնչ ես ասում: (Գրոսմանը պահարանի դուռը բաց է անում): **ՓՌԴ...** (Կանգնում է մարդու հետ պահարանի առաջ եւ երկսով փող են հանում այնտեղից): Իմ ամենամեծ բաւականութիւնը փող համարելն է: Դու, Դաւիթ, վերցրն թուղթ փողն ու ոսկին, իսկ ես կը վերցնեմ արձաթը: Զգիտեմ ինչու, ես արծաթն աւելի եմ սիրում: Ժենիչկա, դու երբէք չես փորձել համարել: Գոնէ մի անգամ փորձիր: Այնպէս լաւ կը լինի, այնպէս կ'ուրախանաս...

ԺԵՆԵԱ. (վերև արհամարհանքով). **ՓՈՂ համարել:** Երբէք... (Տատունուում է): **ՓՈՐՁԵՄ արդեօք:** Տրում է հոգիս: Հոգիս տանջուում է: (Հոգոց է հանում): Ի՞նչ են անում արդեօք երեխաներս: Տիրամւմ է արդեօք Եակովը:

ԷՏԵԼ (ուրախ). Նստիր, նստիր, Ժենիչկա, փոր-

ձիր: **ՓՌԴ...** (Հրճուում է այդ խօսքի վրայ): Ախար այս փող է...

ԳՐՈՍՄԱՆ (համարում է, դէմքին մտատանջութիւն): **ՄԻ հազար...** Մենք որդի կորցրինք...

ԷՏԵԼ (համարում է: Տիտոր). Գուցէ Աստուած տալիս է, խելքի է գալիս: Շատ եմ խղճում նրան: Հիմա նա ապրում է ամենավատ ու հետու ընկած սենեակումը, ճաշում է մենակ: Լացս գալիս է, երբ որ նրա քայլերն եմ լուսմ... Հարիւր ոուրիի:

ԳՐՈՍՄԱՆ. Գրոսմանին նրանք ոչինչ չեն կարող անել: Գրոսմանը Գրոսման է... Երկու հազար: Գրոսմանը թքել է զործադուների, յեղափոխութիւնների, ջարդերի վրայ: Կը հեռանանք առժամանակ, կը բնակուենք Շուէյցարիայում և երբ որ վերադառնանք, ես նրանց բոխ մէջ կը խեղդեմ: (Շարունակում է համարել):

ԺԵՆԵԱ. (վեր է կենում, նստում է մօր մօտ: Առողջ ծնողվը ուկին դէս ու դէն է տալիս). **ՄԱՅՐԻԿ տես,** այս ինչքան է: Տասը ոուրիլ է թէ տասնուհինդ: (Ծիծաղում է): Ես բոլորովին համարել չգիտեմ: (Հառաջելով): **ԱՐԳԻԿ այսօր Եակովը կը գ՞այ:**

ԷՏԵԼ. Ի՞նչ կ'ասես աղջկանդ: **ՓՈՂ համարել չի իմանում:**

ԳՐՈՍՄԱՆ. Հինգ հազար: (Վեր է կենում եւ պահանջը փող ու թանկագին իրեր է հանում): Օհօ, ի՞նչքան փող է մնացել դեռ... Հը, էտել, մւմնից ենք վախենում մենք: Բա մի ժամանակ, միտգ է, ինչի վրայ էի ես մէկ-մէկ քնում: (Ծիծաղում է): Գոշակն ափսոսում էի, տախտակների վրայ էի քնում: Բա միտգ է, որ ժամը ութին ճրագը հանգցնում էինք, որ նաւթ քիչ դնայ: Դու այդ չես կարող յիշել Ժենեա: Դու զիս չէիր ծնուել որ հայրդ սկսեց փող շինել...

էջել. Մստուած լաւ է իմանում, թէ ում է պէտք փող տալ: Բարձրում է նստած, բայց իր մարդկանցը ճանաչում է: (Համարում է): Ելի հարիւր ոռւրիւ: (Մի կողմն է դնում): Մի ստուգիր, Դաւիթ, ևս երբ բէք չեմ սխալուում:

Ժենել. (ուրախ). Հայրիկ, ահա այս հարիւր ոռւրիւ ոսկի է: Բայց որ իմանաս, ի՞նչ դժուար բան է համարելը: Բայց ախորժելի է: (Մտախոհ): Ի՞նչ տարօրինակ բան է, որ այս մի փոքրիկ կոյտ ոսկովը ամէն բան կարելի է գնել, ի՞նչ որ կամենաս:

Էջել. Փողով ամէն բան կարելի է գնել:

Ժենել. Ամէն բան, ի՞նչ ասես:

ԳՐՈՍՄԱՆ. Մինչև անդամ աստղ երկնքից, ես հինգ հազար էլ համարեցի, ընդամենը տասը հազար:

Էջել. (հառաշանթով). Որ մեր բանուորսեն էլ ապստամբութիւն չանէին:

ԳՐՈՍՄԱՆ. Թող անեն: Ես հրանց փոշին կը հանեմ: Դու չես հաւատում: Քեզ վախեցնում է այն, ի՞նչ որ մեր շնորջն է լինում: Աւելի խորը նայիր:

Էջել. Ո՞ւր աւելի խորը:

ԳՐՈՍՄԱՆ. Այ, այստեղու Գլուխդ թող բանի: Այս բոլորը, ի՞նչ որ հիմա լինում է, օգուտ է: Մինչև անդամ այս ջարդերը—նոյնպէս լաւ են: Ի՞նչ ես աչքերդ չուել:

Էջել. Դու դժուել ես...

ԳՐՈՍՄԱՆ (մոայլ). Ես ասում եմ, որ այս լաւ է: Թող լինի, թող... Մենք այն ժամանակ ամէն բան մեր ձեռը կ'առնենք:

Էջել. Աւելի լաւ է ինձ հանգիստ թող: Հը՛, ժենիչկա, քէֆդ բացուեց:

Ժենել. (համարում է: Անմեղութեամք). Կարծես աւելի լաւ է... ի՞նչո՞ւ էի ես ինձ խփում:

Էջել. Եւ չես անի, հոգեակս. Դու ախար կեանքիս երեք քառորդը խլեցիր: Եակովս եկել էր, կարծում է, թէ քեզ կը աամ իրան: Ապահարզան կը տանք նըրան, այ ինչ: Քեզ համար ուրիշ մարդ կը դանենք նըրանից ջանել էլ, նըրանից լաւն էլ:

Ժենել. Իսկ ես խղճում եմ նըրան: Ես այժմ շարունակ նըրա վրայ եմ մտածում:

Էջել. Ես քեզ թոյլ չեմ տալիս... Նըրա վրայ... Մարդ է գտել վրան մտածելու:

ԳՐՈՍՄԱՆ. Քսան հազար: Ել փող չկայ: Զերն ի՞նչքան է:

ՊԵՏԵԼ. (Ներս է մանում: Հազին ցիսիլ զգեստ է, կանգ է առնում ապշած). Փող... Ի՞նչքան փող կայ..., Հայրիկ էգուց մենք հաստատ գնում հնք:

ԳՐՈՍՄԱՆ. Ի հարկէ... Մի գոռայ ու մի խանկարիբ: (Նայում է նըրան զոհ հայեցքով): Դէ ասա, էշտել, այս զգեստը սրա համար աւելի լաւ չի, քան այն յիմար բանձկոնը: Ձինուորական ասես՝ զինուորական չի, իշխանութիւն չունի, բայց անզգամ է: Գոհն կան չի, աւելի մի ձեռս առնեմ այդ փողերը:

Էջել. (ծիծաղում է). Զէ, չէ...
ՊԵՏԵԼ. Սաստիկ: Շատ հարկաւոր է այն յիմար բաները սերտելը: Հայրիկ, ի՞նչքան փող կայ այստեղ: Հայրիկ, անը մի ձեռս առնեմ այդ փողերը:

Էջել. (ծիծաղում է). Զէ, չէ...
ՊԵՏԵԼ. Մի լիր սրան: Սա մեղ միշտ զրկում է բաւականութիւններից: Տնուր մի մօտիկ մտիկ տամաց մեծ-մեծ հինգ հարիւր սուրբիանոցները: (Գրումանը տապիս է): Հինգ հարիւր սուրբի: Սրանից այստեղ տառը հատ է: Ուրեմն հինգ հազմբ: Հայրիկ, ես էլ կունկնամ այսքան փող:

ԳՐՈՍՄԱՆ. Տնուր: Յանկարծ կարող ես պատռել խակ ես չեմ սիրում պատռած փող պահել զրամարդկում...

է ՏԵԼ. Ի հարկէ կ'ունենաս: Հարիւրապատիկը կ'ունենաս: Ո՞ւմ համար ենք մենք աշխատում: Բոլորը ձեզ կը մուայ: Դէմքդ մի տեսակ յոգնած է: Գնա, քնիր, սբրելիս: Արի համբուրեմ քեզ:

ՊԵՏԵԱ. Միայն շրթունքս չհամբուրես: (Թողշն է դէմ անում): Բարի գիշեր...

Է ՏԵԼ. Քեզ լոյս բարի, հոգեակու (Պետեան դուրս է գնում): Երբ որ սրան տեսնում եմ, կարծես ինքս էլ եմ ջահէլանում: Սիրում եմ այս վերջնիս:

ԴՐՈՍՄԱՆ (ըրթմնջալով). Արժէ որ: Առաջ թաղ ցոյց տայ, որ գլուխը կարողանում է լաւ: բանացնել այն ժամանակը սիրել էլ կարելի է:

Է ՏԵԼ. Իսկ ինձ համար միենոյնն է: Այսպէս եմ իմանում, որ եթէ նա մինչև անգամ զող, աւագակ լինէր, էլի սիրաս կը գողար նրա համար, կը սիրէի նրան... (Մտնում է Ռողենովը: Տաջուածի, յոգնածի տեսք ունի: Նկատելով Ժենեային սեղանի առաջնլստած՝ կանգ է առնում զարմացած: Ուրախութիւն է տիրում նրան):

ՈՐՉԵՆՈՎ. Ժենեա, Ժենեա...

Է ՏԵԼ. (Տեսնելով նրան տեղիցը վեր է թոշում). Ի՞նչ կայ. էլի եկամբ Գնա, գնա: Ոչ ոք ետեիցդ մարդ չի ուղարկել: Դու այստեղ ոչ ոքի պէտք չես: Ժենիչ կային քեզ տուող չկայ: (Ժենեան վախեցած վեր է թոշում):

ՈՐՉԵՆՈՎ. Զոքանչս, խնդրում եմ ձեզ: Ախար այս կարելի բան չի:

Է ՏԵԼ. Ո՞վ է խնդրում: Դու դահիճ ես, մարդ չես: Այսպէս քնքուշ հոգին, այսպէս բարի սիրաը տանջես: Ո՞վ է սա: Անպիտանի մէկը: Բնկեցիկ, մուրացկան: Ապա դու ի՞նչ օրը քցեցիր սրան: Այն տեղը հասցըրիր, որ ի՞նքն իրան խիեց: Աչքերս գուրս զայ՝ լաւ է, քան

թէ քեզ տեսնեմ: Թէ քեչ փող ենք տուել քեզ սրա հետ: Երեսուն հազար առար ու էլի չկշացար: Սիրու հիներ էին քեզ պէտք, անամօթ:

ԺԵՆԵԱ (ծեռներով դէմքը ծածկում է, լաց է լինում: Մօտենում է թիկնարանին եւ թուլացած ընկնում է վրան: Արտասուախառն): Մայրիկ, մայրիկ... է ՏԵԼ. Միամիտ կաց, անգին աղջիկու: Ել վախենալու բան չունես... Մայրդ քեզ պաշտպանում է: (Ռողենովին): Հը, ի՞նչ կ'ասես, սիրելի փեսայ: Շըր թունքներդ ես կծուում: Կծիր, կծիր: Բայց որ փոռես էլ այստեղ, սրան քեզ տուող չկայ:

ԳՐՈՍՄԱՆ (փակում է պահարանը). Մի գոռայ, էտել: Ամէն բան կարելի է անել առանց աղմուկի: Ես այս էլ կ'ասէի: (Հատո-հատ): Այդ մեր զործը չի: Ես նայում եմ ու չեմ տեսնում, ականջ եմ դնում ու չեմ լուս:

ՈՐՉԵՆՈՎ. Ժենիչկա... Լսիր ինձ: Է ՏԵԼ. Դու սուս կաց, լաւ է, Գաւիթ: Գործի մէջ մեծը դու ես, ինչ կ'ուզես՝ արա, բայց այս բանին մի խառնուիր: Ի՞նչպէս թէ: Սուս կենամ... Ես սուս կենամ, երբ այսպէս դահճի պատճառով աղջիկս իրան նից: Աչքերս կը հանեմ, կը կծեմ կատուի նման... Խիեց: ՈՐՉԵՆՈՎ (վրդովուած): Դուք արդէն շան լափը թափեցիք գլխիս...

ԳՐՈՍՄԱՆ. Սա կ'անի. ծ, սա կ'անի: Է ՏԵԼ (ծեռները կրծքին ծալած): Բա ի՞նչ թափէի, սիրելի փեսայ: Վարդաջուր չես ուզի: Այդ չես եղեխաներիս համար քիթդ կը պոկեմ ատամներով:

ԺԵՆԵԱ (ծեռները կոտրասում է). Մայրիկ ես մնբաղդ եմ, անբաղդ... Է ՏԵԼ. Ի՞նչպէս զոյնը քցեց վախից... (Ռողենով):

վին): Ամբողջ կեանքումդ այս ուրախութիւնն ունենաս, դահիճ, որ իմն է հիմա: Տես, Դաւիթ, ինչպէս է սպիտակել... (Ժենեային): Դլուխդ պաըտում է: Զէ, Ապա ինչո՞ւ են աչքերդ ցնորուածի պէս դէս ու դէն գնում: (Ռողենովին): Զօհիդ ես նայում, դահիճ:

ՌՈԶԵՆՈՎ. (բարկանում է). Վերջացրէք, թէ էլի պիտի շարունակեք: Դուք զնքանչս չափն արդէն անց էք կացնում: Զէ որ ես կարող եմ բարկանալ և ցոյց տար, որ ձեզանից պակաս հայնոյել չեմ իմանում: Բայց ես պատրաստ եմ համբերելու սրա, այս խեղճ կոչ համար, որ այնքան տանջուել է և որին ես սիրում եմ: Ինչո՞ւ էք լսել, աներս:

ԳՐՈՍՄԱՆ (մատները ժիշտի տակն է լիրել): Իմ գործը չի այդ բոլորը: Կոռեցէք, համբուլուցէք, ինձ ինչ: Այս ըստէիս իմ բունն է տանում և ես այն եմ մտածում, որ դուք ինձ խանգարում էք:

ՌՈԶԵՆՈՎ. Բայց, աներս...

ԳՐՈՍՄԱՆ (զլովն է բռնում). Հանգիստ թողէք ինձ, թողէք ինձ...

ԷՏԵԼ. Դու էլ, ասենք, կարգին գիծ ես...

ՌՈԶԵՆՈՎ. (զայրոյթը զսպելով). Լաւ, շատ լաւ: Ես տեսնում եմ, թէ ինչ բանի յոյս կարող է ունենալ այստեղ ժենիչկան: Շատ լաւ: Լաւ հայր էք, լաւ մայր էք: Բայց Աստուած ձեզ հետ... Եթէ ժենիչկան ինձ գոնէ մի քիչ յարգէք, ձեզ մի կողմը կ'անէք, և ես հաւատացած եմ, որ այս անմիտ կոիւը քաղցր հաշտութեամբ կը վերջանար: Բայց ժենեան ախորժում է, որ իր մարդուն պախարակում են, ինչպէս մի յեանեալ մարդու: Ես այս միտս կը պահիմ: Իսկ ձեզ, զոքանչս, հեռանալուց առաջ կ'ասեմ, որ դուք ոճիր էք գործում: Աղջկանդ մարդուցը բաժանել, անմեղ երիխաներին որբացնել—այդ մեղք է: Մնաք բարով:

ԳՐՈՍՄԱՆ (անտարբերութեամբ). Արժէ հեռաւնալ...

ԷՏԵԼ. Թող մեղք լինի, հինգ մեղք, միայն թէ քո աւազակի աշքերը չտեսնեմ...

ՌՈԶԵՆՈՎ. (վերաբանալով). Բայց այս ինչնվ պիտի վերջանայ, խաւար մարդ: Դուք մտածել էք: Հետեանքի համար պատասխանատութիւն յանձն էք առնում: Իսկ եթէ ես սրան ապահարզան չտամ: Ի՞նչ կ'ասէք այս ժամանակը: Սրա վերջն ինչ պիտի լինի: Զեր հաց ու ջրանվագրի յաւիտեան: Տեսնի, թէ ինչպէս ամէքը տուն ու տեղ են դառնում, բաղդաւոր են, ու վերջը դարդու երկրորդ գնամկը տայ ճակատին:

ԺԵՆԵԱ. Ոչ, ոչ, չեմ կամենում այդ... Մայրիկ, թող լսի...

ԷՏԵԼ. Մի վախենայ սրանից: Ապահարզան կը տայ: Տեսնեմ, ինչպէս չի տայ, եթէ կարգին փող տանք: Այն ժամանակ մարդու կը տանք քեզ: Զես հաւատում, Եակով, Հենց էկուց հարիւր ուղող կ'ունենայ: Հիմա էլ յիմար չենք լինի, բժիշկ փեսացուի չենք ման գայ: Առեւրականի կը տանք, որ կնկայ ուները համբուրի: Հիմա արդէն հասկացել ենք: Ի՞նչ բան է բժիշկը: Աւազակ, կոպիտ մարդ է: Ինչքան ուսում առած լինի, այնքան կոպիտ կը լինի: Իմ Դաւիթը երբէք չի սովորել, համալսարանի շեմքը չի տեսել, բայց բորսայի առուտուր չի արել: Իսկ դու բժիշկ ես, բժիշկ, համալսարանական մարդու բորսայի առեւրական ես դարձել... Զէ, սիրելիս, էլ ոչ մի բժիշկ, ոչ մի փաստաբան: Զէ, չէ...

ՌՈԶԵՆՈՎ. (բարկանում է). Բան էք գտել նախատելու... է, լաւ, բորսայի առեւրական եմ: Միթէ գործարանատէր լինեն աւելի լաւ է: Միթէ աւելի լաւ է ջաղաց ունենալը: Մի նայէք, թէ ինչ է կատարուում

ձեղանում: Դուք ինչպէս էք ձեր հացն աշխատում... ինչու են սպառնում քարուքանդ անել ձեր ջաղացը: Դուք չէք կողոպտում, չէք խեղում: Չեր հացը բորսայի առևտրականի հացիցը մաքուր է, Չեմ հասկանում ձեզ... (Ուսերը վեր է քաշում):

ԷՏԵԼ. Բայց ախար դու բժիշկ էիր. դու համար սարանումը կարդացել ես:

ՈՌԶԵՆՈՎ. (շարանում է). Համալսարանումը, բժիշկ: Դուք ինչ էք հասկանում, թէ բժիշկն ինչ է: Միթէ բժիշկը, փաստաբանը, ինժենէրը գործարանատիրոջից, վաճառականից բարձր են: Մեծ մասամբ դրանք բոլորն էլ մի պառուղ են: Բժիշկ... Մի տեսէք ովլ պրակտիկա ունի, հարցուփորձ արէք, իմացէք, թէ ինչ ճանապարհներով են ձեռք բերել, ու նոր նախատեք, խաւար մարդ... Դուք հարուստ էք ուզում լինել, բայց ես էլ եմ ուզում: Իմ փողին փող չէք ասի, ինչ է, երբ որ տասնեակ հաղարներ ունենամ: Մի տասը տարի սպասեցէք... Տեսնեաք, ով աւելի հարուստ կը լինի, ե՞ս թէ դուք:

ԳՐՈՍՄԱՆ. (յօրանջում է). Իսկ իմ քունը տանում է: Վերջացրու, կ'տել, գնմնք:

ԷՏԵԼ. Դու հէսց քո քնիլն ես իմանում: Ախար հայր ես. մի սպասիր:

ԳՐՈՍՄԱՆ. (ծաղրական եղանակով). Ես հայր չեմ...

ՈՌԶԵՆՈՎ. Այս բոլոր խօսակցութիւններից գործ առաջ չի գայ: Թող ժինեան ասի, ո՞վ համաձայն է տուն գալու: Առանց նրան տունը ինչպէս որ մի գերեզման լինի: Երեխանները լաց են լինում, տանջուում են: Ես ամաչում եմ ցերեկով փողոց դուրս գալ: Մենք քանդուում ենք: (Ժենեային): Ժենեա, գնանք տուն գնանք...

ԺԵՆԵԱ. (տալուսնուում է). Ես... ես չգիտեմ: Մայրիկ, ինչ կ'ասես: Ոչ, մի ասի: Հոգիս դուքս եկաւ առանց երեխաններիս: Խեղճերն ինչպէս են ապրում առանց իրանց մայրիկին: Մայրիկ, օգնիր ինձ (լաց է լինում):

ԷՏԵԼ. (լացակրկնած). Ժենիչկա, արա, ինչ որ սիրող է ասում, իսկ ես միշտ քեզ օրհնել եմ, հիմա էլ օրհնում եմ:

ԺԵՆԵԱ. (լալիս է). Ի՞նչ տեղը հասցըրին ինձ: Ձեռս տես, եաշատ ես, կարծեմ, այսպէս հաշմ էլ կը մնամ: (Լալիս է): Իսկ եթէ առուն գամ, էլ առաջուանը չես սկսի: Փաննա գ'Արկ, Շարլոտտա Կորդէ:

ՈՌԶԵՆՈՎ. Ո՞չ, ոչ այդ էլ չի լինի, երդուում եմ: Միայն թէ գու խճճեմ եղիր: Միթէ քեզ համար մէկ չի, թէ ինչով եմ ես պարապում, եթէ կարողանում եմ հաղարներ յետ դնել: Դու քո երիտասարդութիւնը վայելիր: (Աղերսում է): Գնանք, Ժենիչկա... ԺԵՆԵԱ. Ել ժլատութիւն չես անի... Զէ: Գիտես, ընդունարանի պատկերները դուրս քցենք, Լիկտանի պատկերներիցը գնենք:

ՈՌԶԵՆՈՎ. Կը գնեմ, դուրս կը քցեմ,—ամէն բան, ինչ որ կուզես: Մի այնպիսի գործ զլուխ բերելու վրայ եմ հիմա, այնպիսի գործ...

ԳՐՈՍՄԱՆ. (հետաքրքրութեամբ). Ի՞նչ գործ:

ՈՌԶԵՆՈՎ. (ծիծաղում է). Այս, չեմ կարող ձեզ ասել, Դուք հօ ձեր ծրագրների մասին չէք խօսում:

ԳՐՈՍՄԱՆ. Երաւունք ունիս: Իմ ծրագրների մասին ես երբեք չեմ խօսում:

ԷՏԵԼ. Որ դու լաւ զլուխ ունիս, դրա դէմ ոչ չի վիճիլ: Դու բոլորովին մօրդ ես քաշել: ԺԵՆԵԱ. (որ մտախոհ կանգնած էր). Դէ, գնանք

տուն: Վճռեցի... Մայրիկ, ես բաղդաւոր եմ... Երեխա-
ներիս կը տեսնեմ: Թոստնդս բեր: (Հտելն արագ դորս
է զնում):

ԺԵՆԵՍ. (մշտաբերելով). Ե՛, իսկ... բոննամն:
ՈՌԶԵՆՈՎ. (ցած ձայնով). Դուրս եմ արել նրան:
Ի հարկէ, դուրս եմ արել: Դուրս եմ արել, դուրս եմ
արել...:

ԺԵՆԵՍ. Եաշա... (Գրկում է նրան): Մտնում է
Դժելը, ոստոնդս ծեղին): Գնանք, գնանք: Մայրիկ,
ներում եմ քեզ, բայց դու շատ կոպիտ էիր խօսում
սրա հատ: Ես հազիւ զսպեցի ինձ: Զէ՞ որ սա իմ մարզն է:

ԷՏԵԼ. (ապշած). Ի՞նչ կ'ասես աղջկանդ, Դաւիթ:
ԳՐՈՍՄԱՆ (նուրը ժպիտով). Ոչինչ չեմ ասի...
ՈՌԶԵՆՈՎ. Մնաք բարով, աներս: Զեզ վրայ, զո-
քանչս, դեռ բարկացած եմ, բայց կը հաշտուենք, կը
հաշտուենք...:

ԺԵՆԵՍ. Մնաք բարով, հայրիկ, մնաք, բարով,
մայրիկ, Ես այսքան բաղդաւոր եմ..., Ա՛յս, որքան
բաղդաւոր եմ ես...:

ԳՐՈՍՄԱՆ (անտարբերութեամբ). Գնաք բարով
երեխայք, էլ չկուեք:

ԷՏԵԼ. (ճանապարհ է քցում նրանց մինչեւ դուրը).
Կը հաշտուենք: Իսկ երբ որ նոր աղայ ունենաս, կը
համբուլուենք էլ. (Ամէնքը ծիծաղում են: Որզենով-
ները դուրս են զնում):

ԷՏԵԼ. Ե՛, փառք Աստուծոյ, ամէն բան լաւ վեր-
ջացաւ: Բայց հօ սիրտս հովացըրի: Ի՞նչ անդդամն է:
Ե՛հ, թող անգամ լինի, միայն թէ ժենեան սիրի նրան
ու բաղդաւոր լինի:

ԳՐՈՍՄԱՆ. Այդ բոլորը դատարկ բաներ են: Ես
տեսնում էի, որ նրանք պիտի հաշտուեն: Ախար եր-
կուսն էլ իրար պաշտպանում են... Իսկ թէ ուզում հս-

առել փառք Աստուծոյ, Է՛, փառք Աստուծոյ: Գնանք,
քնանք: Ծառային ասա, որ մեզ շուտ զարթեցնեն:
(Մտախոհ): Եակովս ինչու ասաց, թէ ուզում են ջա-
ղացը քար ու քանդ անեն: (Մոտենում է պատուհա-
նին: Հեռուից աղմուկ է լսում):

ԷՏԵԼ. (կանգ է առնում). Մի տեղ գոռգոռում են...

ԳՐՈՍՄԱՆ (պատուհանի սուաջին). Թող գոռգո-
ռում: (Խօսում է պատուհանից): Աղմուկ էք անում,
բանութրանիր: (Ծիծաղում է): Ա՛ղմուկ արէք, տղայք,
աղմուկ արէք... Գրոսմանը հանգիստ կը քնի:

ԷՏԵԼ. (հանգցնում ելեքտրականութիւնը, մի նրագ
վառ է թողնում). Այս ինչ օր էր այսօր: Պահարանի
բանալիները պահեցիր:

ԳՐՈՍՄԱՆ (ուրախ). Բարի գիշեր, բանութրանիր...
(Սպառնալից): Մնաք բարով, լրեեր... (Գրուժանը
հանգցնում է վերջին ճրազը: Երկուսն էլ դուրս են
զնում լուս: Ներս է մտնում աղախինը՝ մոմը ծեղին,
փակում է վեղկերը, աթոռներն իրանց տեղերն է
շարում ու դուրս է զնում: Լութին: Գրոսմանը վե-
րադառնում է, հազին խաղաթ, հողաթափներով, ծե-
ղին մոմ: Ման է զալիս սենեակումը: Մտում է,
փակած է արդիօք պահարանը, լաւ են փակած պա-
տուհանի փեղկերը: Ներս է մտնում Ալեքսանդրը):

ԳՐՈՍՄԱՆ (վախեցած). Ո՞վ է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Հայրիկ...

ԳՐՈՍՄԱՆ. Դուրս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Հայրիկ...

ԳՐՈՍՄԱՆ. Դուրս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ես կը գնամ, բայց մեղմացիր: Հա-
րեւրաւոր մարդիկ անհաց կը մնան, եթէ դու հեռա-
նաս: Մարդարկ պէտք է լինել: Զիջիր, ինդուում եմ,

նաև: Մարդարկ պէտք է լինել:

հայրիկ: Հայրիկ, նրանք յուսահատուած են, պատրաստ են կատաղի վարմունքի...

ԳՐՈՒՄԱՆ. Անյայտ մարդիկ գիշերները քաշ են գալիս ու անհանգիստ անում: Պէտք է քնես, իսկ սրանք թխթիկացնում են, ման են գալիս, վախեցնում են...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ինչո՞ւ ես կեղծում: Մեղմացիք, մեղմացիք: Նրանք յուսահատուած են...

ԳՐՈՒՄԱՆ. Կարծես այս մի սովորական սենեակ է, սեղանատուն, հաշտ, և ոչ առանձնասենեակ, որտեղ իմ դրամարկղն է: Միթէ դժուար է բնդով ջարդել և փողը թողնել: (Հանգնում է ելեքտրական ճրազը: Դոռալով): Ո՞վ է այսակդ: Դուրս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Առաջին անգամն է, որ սարսափ զգացի այն մտքիցը, որ ես քո որդին եմ... (Արագ դրս է զնում: Գրումանը մոմը ծերին կանգնած է եւ երկար ծիծաղում է: Դանդաղ դրս է զնում: Առանձնասենեակը մումն է: Հոռվիմն, ներս է մտնում Մաշան: Ելեքտրականութիւնը վատում է: Սպիտակ զգեստ է հազին, ոտոռնոր վրան, ծերին ճանապարհի պայտասակ: Նստում է թիկնարանի վրայ եւ ականջ է զնում: Ներս է մտնում Վայցը: Չորս կողմն է նայում: Երկիրից գումատ):

ՄԱՇԱ. Վերջապէս..., Վայց: Կարծում էի, թէ էլ չեք գայ:

ՎԱՅՑ (երկշոտ). Ես երկար տատանուում էի:

ՄԱՇԱ. (չի լսում նրան). Ի՞նչ խաղաղ է, սքանչելի է... իսկոյն մենք դուքս կը գանք այստեղից և ձիանը մեզ կը տանեն հեռու, հեռու...

ՎԱՅՑ (անհամարծանիլ). Մաշա...

ՄԱՇԱ. Նայենք այս սենեակը: Վերջին անգամ: Ահա դրամարկղը: (Կանգնում է պահարանի առաջ): Այստեղից էր բղխում մեր անբաղութիւնը: Միքսա

ուզում է անիծել այս: Վայց, աղքատները հօրս թագաւոր են անուանում... Այս է թագաւորի բոյնը: Երկաթէ պահարան, համրիչ, գրասեղան... Խեղճ մարդիկ... Ա'խ, Վայց, մենք գոնէ կը հեռանանք այս ասիծեալ իշխանութիւնից: Ես մի խոր շունչ կը քաշեմ: Իսկոյն փողոցումը կ'ասեմ հանդիսապէս. ես մարդ եմ...

ՎԱՅՑ. Թոյլ տուէք մի խօսք ասեմ ձեզ, Մաշա:

ՄԱՇԱ. (արագ մտիկ է տալիս նրան): Դարձեալ իրականութեան մասին: Ո՞չ, այդ մասին մի խօսք: Աղաչում եմ... իրականութեան վրայ մտածելը սարսափելի է: Վայց, դուք ուժեղ կը լինիք, ես կամենում եմ: Ուզուցեցք... Ինչո՞ւ դոք վերարկուով չեք:

ՎԱՅՑ. Միրելի Մաշա, մի բարկանաք ինձ վրայ, ես ամբողջ օրը տանջուել եմ: Մենք չենք կարող փախչել:

ՄԱՇԱ. (ցած ծայնով). Մենք չենք կարող փախչել...

ՎԱՅՑ. Դուք չեք բարկանում և այդ լաւ է: Զեմ կարող: Ես, Մաշա, ոչինչ չեմ կարողացել կեանքիս մէջ... Ես միշտ յետ եմ մնում, Մաշա... Ես մարդահաշիւ չեմ...

ՄԱՇԱ. (մտախոն). Ես այդ առաջուց զիտէի: Մարդաշիւ չեք: Ապա ինչո՞ւ ես եկայ: Վայց, ճիշտն առեմ: Ես ձեզ սիրում եմ ձեր թուլութեան համար...

ՎԱՅՑ (տիտուր). Ես կամենում էի իմ ազգի զաւակը լինել, Մաշա, և ահա ես ոեպետիտոր-գուվեր-

նակը նեօր: Ես կամենում էի քաղաքացի լինել, — նրա նազարոյթի ամբողջ ոյժը եռում է իմ մէջ և նրա նազարոյթի բերկութիւնն է ապրում իմ մէջ, — խազգացումների բերկութիւնն է ապրում իմ մէջ, — ահա ես գուվերնեօր եմ: Մաշա, իմ ուրախութեան, և ահա ես գուվերնեօր եմ: Մաշա, իմ ուրախութեան, իմ միիթարութեան համար մի բան է մնացել — եւրո-իմ միիթարութեան համար մի բան է մնացել — եւրո-պա... Նա իմն է: Ես մնում եմ այստեղ խաւարի, ար-

հաւիրքների մէջ, բայց մտածում եմ. կայ ազատ Եւրոպան, երբեկցէ ինձ էլ կը դիպչի նրա օրհնեալ թիւ: Մի տրտմէք, Մաշա: Դուք կորցնում էք Վայցին, միայն Վայցին...

ՄԱՇԱ. Սենեակս կը վերադառնամ և կ'ամաչեմ մի փոքր: Մօտ եկէք, գրկեմ ձեղ (Վայցը մօտենում է): Ես համբուրուում եմ գուվերնեօրի հետ: (ծիծաղում է): Վերջին անգամ, Վայց: (Մոռացօնքի մէջ), Վաղը մենք կը գնանք: Ես կը տեսնեմ Շուէյցարիան: Վայց, տեսնում էք արդեօք այն բարձր կանաչ լեռները: Ներքեում լիճն է փայլում... Գիշերը վրայ է գալիս, գիշերը վրայ է գալիս... Ի՞նչ պարզ գալիս է ջրի հոսք: Վայց, մենք նստած ենք լճի գլխին... Ես համբուրուում եմ գուվերնեօրի հետ...

ՎԱՅՑ. Սիրելի Մաշա, թնյլ տուէք ասեմ ձեղ: Դուք լաց էք լինում, բայց գուցէ քսան տարուց յետոյ ասէք. Վայցը լաւ վարուեց:

ՄԱՇԱ (ծիծաղում է եւ լավիս). Բայց և այսպէս ինձ համար ծանը է ձեզանից բաժանուել: Դուք ողորմելի էք գուցէ, արհամարհելի, բայց մի լաւ բան կայ ձեր հոգու մէջ, մի գեղեցիկ բան: Ա՛խ, Վայց...

ՎԱՅՑ. Լաց մի լինիք, Մաշա: Վաղը գուք կը զարթնէք գեղեցիկ Եւրոպայում...

ՄԱՇԱ. Ես կը զարթնեմ գեղեցիկ Եւրոպայում... Իսկ դուք:

ՎԱՅՑ. Ես: Եթէ ես երեխայ լինէի, կ'աղաչէի ձեղ. Մաշա, տարէք ինձ այստեղից, մի փողոց ցոյց տուէք, որտեղ ստրուկներ չլինեն... Ճիյց տուէք...

ՄԱՇԱ (յանկարծ). Ուրեմն չէք կամենում փախչել ինձ հետ:

ՎԱՅՑ. Ո՛չ, ոչ: Վայցը: Ո՛չ, Մաշա, գուք կը տեսնէք Եւրոպան, Վայցից բարեկ տարէք նրան: Բարեկ-

ցէք ամէն մի յիշատակարանի՝ ճշմարիտ քաղաքացի վայցի կողմից: Ասացէք ամէնքին, որ ես հոգով իրենց հետ եմ, որ ես կարօտում եմ նրանց: Գրկեցէք առաջին պատահողին և առացէք. քաղաքացի Վայցը բարեւմ է քեզ...

ՄԱՇԱ. Մի անգամ էլ գրկեցէք ինձ: Ուրեմն ոչ... Ոչ...

ՎԱՅՑ. Ո՛չ, Մաշա...

ՄԱՇԱ. Մնաք բարով, Վայց:

ՎԱՅՑ. Գնաք բարով, Մաշա:

ՄԱՇԱ (գնում է դուն մօտ): Ո՛չ...

ՎԱՅՑ. Ո՛չ, Մաշա, ոչ: (Հովովին): Ո՛չ, Մաշա, ոչ... (Վայցը եւ Մաշան դուրս են գնում զանազան դոներից: Մովին է: Երկար լուսին: Լսուում են աղմկալից ձայներ: Անհամբեր զանգահարութիւն ամբողջ բնակարանում: Ներս է վազում աղախինը: Շտապով բաց է անում պատուհանների փեղկերը: Ահազին ցոլք է երեսում: Այրուում է ջաղացը: Աղախինը ձեռներն իրար է զարկում, դուրս է վազում: Նորից ձայներ են լսուում: Ներս են վազում բանորիներ, բոլորն էլ ծեր, ցեցովիներով: Նրանց մէջ ոչ մի երիտասարդ չկայ... Աղմուկ):

ՄԻ ԾԵՐ ԲԱՆՈՒՈՐ. Ուր է պարոն Գրոսմանը,

ուր է պարոն Գրոսմանը:
ԷՏԵԼ (Ներս է վազում: Հրունի ցոլքը տեսնելով սարսափից նստելու պէս է անում: Ծալով ու ողբալով): Աստուած իմ, Աստուած իմ... (Վազում է պատուհանի մօտ: Չեռներն իրար է զարկում. լալիս է): Ախար ես ասում էի. Դաւիթ, գործ մի ունենայ այդ աւազակների հետ: Ականջ չարեց ինձ...
ԶԱՅՑՆԵՐ. Տիկին Գրոսման... Տիկին... Ես ինքս տեսայ, ինչպէս այն դկերը ջաղացը կրակ քցեցին...

(Ամբոխի աղմուկի ձայնը: Արագ ներս են մտնում Վայցն ու Մաշան):

ՄԱՇԱ. Այս ի՞նչ է: Հրդեհ է, մայրիկ: (Մօտ է վազում Վայցին): Վայց, ի՞նչ գեղեցիկ է...

ՊԱՅՑ. Ի՞նչ սարսափելի է...

ԵՏԵԼ. (լալիս է. Վայցին), Ես ասում էի, խընդրում էի մարդուս. զիջիր, Դաւիթ, զիջիր...

ԳՐՈՍՄԱՆ (ներս է վազում: Նա զիշերուայշապելվ է: Վէրք ստացածի պէս յետ է նայում: Սուկալի լուսթին): Ի՞նչ: Հրդեհ... Ի՞նչ: Զաղմցը... (Մօտ է վազում պատուհանին եւ բռունքի մի հարուստով բաց է անում: Սառած մնում է տեղին ու տեղը: Ամբոխը աղմուկ է անում ցած ձայնով: Գրոսմանը մի քայլ յետ է քաշուում: Չեղները ծալում է կրծքին եւ նայում է: Հրդեհի ցուքը մեծանում է: Ծերք բանուորը զգուշութեամբ մօտենում է Գրոսմանին եւ ստրկաբար համբուրում է նրա թեւկը):

ԳՐՈՍՄԱՆ (ցնցուում է: Եթու է նայում եւ ծանր հայեացը է քցում բանուորների վրայ: Կտրուկ). Ի՞նչ էք ուզում:

ԶԱՅՆԵՐ. Պարոն Գրոսման... Նրանք կրակ քցեցին: Մենք մեղաւոր չենք: Ես ինքս տեսայ: Պարոն Գրոսման, պարոն Գրոսման...

ԳՐՈՍՄԱՆ (նրանց տնազն է անում). Պարոն Գրոսման, պարոն Գրոսման... Բա դուք ո՞րտեղ էիք... Լոեցէք... լրբեր, անզգամներ, անսանւներ... Դուք ո՞րտեղ էիք... Ի՞նչու թողիք... Զէին կաշառում ձեր կամքը... (Ամբոխի աղերսական աղմուկը): Լոեցէք, գեաղաներ, ճամփներ, կեղտնատ տականքներ, քաղցածներ, սիրիբականներ, էշեր... Գրոսմանը Գրոսման է մնում: Նա ծիծաղում-է ձեզ վրայ... Ի՞նչ կորցրեց նա... Նա թքում

է ձեղ վրայ: (Վրայ է զնում դէպի բանուորները: Ճած ձայնով աղմուկ: Էտելը ճշում է):

ԳՐՈՍՄԱՆ. Լոեցէք: Դուք կարծում էիք, թէ Գրոսմանը կը վախինայ ու կ'ասի. անձնատուր եմ լինում: Ի՞նչպէս չէ: Գրոսմանն անձնատուր չի լինում: Լրբեր, Գրոսմանն անձնատուր չի լինում... (Անմիտ կերպով զոռում է, ոտները զետնովն է տալիս): ԵՏԵԼ (ճշալով մօտ է վազում նրան). Դաւիթ, Դաւիթ ջան...

ԶԱՅՆԵՐ. Պարոն Գրոսման... Այն ջահէլ գեեցն արին... Պարոն Գրոսման, պարոն Գրոսման... (Աղամուկ: Գրոսմանը շարունակ ոտները զետնովն է տալիս ու սպանում է):

Ա Ս Թ Ա Գ Ո Յ Ք

Գ Ե Ր Զ

անձնական առողջության համար և աշխատի մեջ պահպանական գործության համար և սպառնական գործության համար մասին վարչական համակարգը կազմված է համապատասխան արտիկուլար և աշխատի մեջ պահպանական գործության համար մասին վարչական համակարգը (աշխատի մեջ պահպանական գործության համար աշխատի մեջ պահպանական գործության համար մասին) 1984 թվականի մայիսի 1-ին օրուն՝ ԱՄՀԱՀՆ

մայիս թվականի ամսաթիվ 12 համարությամբ պահպանական գործության համար մասին վարչական համակարգը (աշխատի մեջ պահպանական գործության համար մասին) 1984 թվականի մայիսի 1-ին օրուն՝ ԱՄՀԱՀՆ

Կ Թ Գ Ա Յ Բ

ՎՐԱՍՏԱՆԻ ցանկությամբ և նպատակությունությամբ և առողջությունությամբ պահպանական գործության համար մասին աշխատի մասին վարչական համակարգը (աշխատի մեջ պահպանական գործության համար մասին) 1984 թվականի մայիսի 1-ին օրուն՝ ԱՄՀԱՀՆ

ՎՐԱՍՏԱՆԻ պահպանական գործության համար մասին վարչական համակարգը (աշխատի մեջ պահպանական գործության համար մասին) 1984 թվականի մայիսի 1-ին օրուն՝ ԱՄՀԱՀՆ

ՎՐԱՍՏԱՆԻ պահպանական գործության համար մասին վարչական համակարգը (աշխատի մեջ պահպանական գործության համար մասին) 1984 թվականի մայիսի 1-ին օրուն՝ ԱՄՀԱՀՆ

objectives

Ellipses

(հ.Տ.)

ՀՀ Ազգային գրադարան



NL0312368

ՀՀ Ազգային գրադարան



NL0312367

ՀՀ Ազգային գրադարան



NL0312366

ՀՀ Ազգային գրադարան



NL0312365

7862
7863
7864
7865